ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(75-րդ տարի**) Թիվ-8** (1654) — *Օգոստոս 2021*

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող
Գլխավոր գործոնը ժողովուրդն է (էջ 1-2)

2- Քաղաքական
Վարդան Պետրոսյան
Տարածաշրջանային աշխարհաքաղաքականությունը և համահայկական մարտահրավերները (էջ 3-7)

3- Տարածաշրջանային
Հրազդան Սարգսի Զէյթլեան
Թրքական կայսերապաշտութեան հաշուեյարդարը (էջ 8-13)

4- Աշխարհաքաղաքական
Արտաշես Շահբազյան
Ռուսաստանը և մենք (էջ 14-16)
Արտյոմ Տոնոյան
Սյունիքի նկատմամբ ադրբեջանական հավակնությունները և Նախիջևանի խնդրի ազդեցությունը այդ ամենի վրա (էջ 17-19)
Արմեն Պետրոսյան
Լիբանան. անդունդ գլորվող մերձավորարևելյան Շվեյցարիան (էջ 20-23)

5- Հայ դատ
Արարատ Հակոբյան
Արձագանք Սևրի պայմանագրին (101-ամյակի առթիվ) (էջ 24-26)
Անի Մելքոնյան
Հայաստանը միջազգային դիվանագիտական փաստաթղթերում. բախտորոշ պայմանագրեր (էջ 27-31)
Ալբերտ Մուշեղյան
Բաց նամակ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնին՝ հայ ժողովրդին Միջագետքի անապատ արտաքսելու մասին. Բեռլին, 1919 թ. հունվար (էջ 32-36)

6- Պատմության լուսարձակ
Դերենիկ Կարոյի Մելիքեան
1918 թ. Ուրմիայի հերոսամարտի դերն ու նշանակությունը Մայիսեան ճակատամարտերի յաղթական աւարտի գործում… (էջ 37-40)

7- Դաշնակցական բեմ
Տիգրան Ճինպաշեան
ՀՅ Դաշնակցութեան կազմակերպական կառոյցին առանձնահատկութիւնը (էջ 41-43)

8- Ընկերական զրույցներ
Վրէժ-Արմէն
Ո՛չ ինքնապարտուողականութեան (էջ 44)

Գլխավոր գործոնը ժողովուրդն է

Միքայել Նալբանդյան

19-րդ դարի վերջերին հրապարակ իջած հայկական առաջին կուսակցությունները, որդեգրելով հայության և Հայաստանի ազատագրության գաղափարներ, իրենց վերջնանպատակին հասնելու կարևոր պայման էին համարում ժողովրդի լուսավորությունը: Նրանք տեսնում էին, որ անկիրթ ու չլուսավորված հասարակությունը զուրկ է ոչ միայն ազատության ու անկախության ձգտումից, այլև արժանապատվության զգացումից: Իր ստրկական գոյությունը նա համարում է իրենից վեր ուժերի նախանշած ճակատագիր և կամազուրկ հնազանդությամբ կրում է այդ «ճակատագրի» բոլոր հարվածներն ու անիրավությունները: Այդպիսի հայը, ունակ չլինելով ըմբռնելու իրեն պատուհասող մշտական ողբերգությունների խորքային պատճառները, երբ սեփական բնօրրանում քոչվոր նվաճողի ճորտն է, երբ եկվորը սեփական քմահաճույքով կարող է խլել նրա հողը, տունը, պապենական ինչքը, «կինն ու աղջիկը», բնականորեն անընդունակ է նաև ընդվզելու այդ պարտադրվող իրողությունների դեմ: Մեր առաջին մեծ հեղափոխականներից մեկը՝ Միքայել Նալբանդյանը, իր «Մանկության օրեր» բանաստեղծության մեջ գրում է.

«Գիտակցությունը հաջորդեց սորան,
Ազգի վիճակը ծանրացավ սրտիս»:

Ակնհայտ է այն միտքը, որ ազգի վիճակի ըմբռնումն ու դրանից ծնված ապրումները ի հայտ են գալիս, երբ անձը գիտակցություն է ձեռք բերում: Աբովյանի, Պատկանյանի, Նալբանդյանի, Ռաֆֆու և մյուս լուսավորիչների ցանած կայծերից ծլարձակեց ու տարածվեց ազգային-հեղափոխական շարժումը, որը, երեսնամյա պայքարի ճանապարհ հաղթահարելով, հանգեց հայության և հայոց հայրենիքի մնացորդացի փրկությանը:

Կյանքը փաստել և փաստում է, սակայն, որ կրթության, ազգային ու բարոյական դաստիարակության գործը կամ, լայն առումով, լուսավորչական առաքելությունը պետք է լինի ժողովրդի գիտակցությունը խավարի մեջ խարխափումներից, կեղծ նախապաշարումներից և արժեքներից զերծ պահելու հարատև աշխատանք:

Վերն ակնարկված երեսնամյա պայքարի շնորհիվ վերականգնված հայոց պետականությանը պատուհասեցին աղետներ, որոնք նույնպիսի «հիվանդության» հետևանք էին: Բախտորոշ 1919 թվականին, երբ հայոց մեկամյա պետությունը հաղթահարում էր սովն ու համաճարակը և ոտքի էր կանգնում, երբ զբաղված էր թուրք-թաթարական ու քրդական ներքին խռովությունները ճնշելով, հայության անառակ զավակները Ռուսաստանից ու Կովկասից Հայաստան ներմուծեցին բոլշևիզմի վերազգային վարդապետությունն ու նպատակները: Ազգային ազատագրության գաղափարախոսությանը, որը սեփական ինքնության ու պետականության կայացման հիմքն էր, հակադրվեց դասակարգային գաղափարախոսությունը: Պատերազմներից, կոտորածներից, սովից ու համաճարակներից ուժասպառ ժողովրդին փորձ արվեց համոզելու, թե իր թշնամին թուրքը չէ, օտարը չէ, այլ նա, ով տասնամյակներ շարունակ առաջնորդել է իրեն հրի ու սրի միջով և այժմ էլ փոթորիկների միջով վարում է իր պետության ղեկը: Այս թիրախավորված քարոզչությունը ազգային բուրժուազիայից, դասակարգերից ու սոցիալական պայքարներից զերծ երկրում դժբախտաբար հաջողվեց ցեցի պես տարածել հատկապես զենքը վայր չդրած զինվորականության շրջանում: Փլուզվեցին օրեցօր ամրապնդվող ու մեծացող, պատմական մեծագույն հեռանկարներ փայփայող երկրի հիմնասյուները, թուրքի ու բոլշևիկի հետ գործակցած հայ դավաճաններին հաջողվեց կործանել ամեն ինչ, մասնակցել երկրի մաս-մաս վաճառքին և նրա՝ փոքրացած, բոլշևիկյան մուրճի ու թուրքական սալի արանքում կքած հատվածը հանձնել օտարի և նրա տեղական խամաճիկների կառավարմանը:

Պատմությունը վերհիշելու համար չէր այս անդրադարձը, այլ փաստելու, որ մեկ անգամ ապրվածը դժբախտաբար նաև կրկնվում է: Այն, ինչ տեղի ունեցավ Հայաստանում հարյուր տարի անց, ազգային ողբերգության սցենարի վերախաղարկումն էր:

Անկախացած և ազատագրված Արցախի հետ պատմական նոր հորիզոնների առջև գտնվող երկրում հաջողվեց զանգվածային գիտակցության հեղաշրջում իրականացնել և պայքարի սլաքն ուղղել դեպի ներս:

Պետությանը իր հիմնական խնդիրներից, արտաքին մարտահրավերներից շեղելը, այսպես կոչված, նախկին թալանչիների դեմ ներքաղաքական հալածանքների սանձազերծումը այլ բան չէին, քան դասակարգային պայքարի սադրում, ինչն այսօր էլ բախտախնդիր կառավարողների համար շարունակում է համարվել առաջնահերթություն: Մյուս կողմից՝ իր չդադարող ներքին «հեղափոխության» պատճառով երկրի մեկ քառորդը կորցրած, հազարավոր անմեղ մահերի պատճառ դարձած իշխանությունը, դեռ ռազմադաշտի վերածված տարածքներից իր դիակները չհավաքած, գերիներին չազատած, երկրի սահմաններից թշնամու շարունակվող ներթափանցումը չկասեցրած, առիթ ու անառիթ հայտարարում է պատերազմ պարտադրած թշնամու հետ բարեկամության, տնտեսական հարաբերությունների և երկրի հաղորդակցական ուղիները նրա ծավալապաշտական ծրագրերի առջև բացելու մտադրության մասին: Շարունակվող ներքին հալածանքների պայմաններում թուրք-արևմտյան թելադրանքին ենթակա իշխանությունը բացարձակապես անտարբեր է գրավյալ Արցախի ճակատագրի նկատմամբ, իսկ իր ղեկավարած պետության սահմանների պաշտպանությունը պատրաստ է հանձնելու ցանկացած օտար պետության: Իսկ ժողովո՛ւրդը, որի ուսերին հեծած՝ նա շարունակում է պահպանել իր իշխանությունը: Ժողովրդի իշխանապաշտ հատվածի մեջ են նրանք, ովքեր նույն իշխանության թողտվության պատճառով դարձել են բնավեր կամ սեփական բնակավայրում հայտնվել են դարավոր թշնամու թակարդում, նրանք են, ովքեր խոնարհվում ու համբուրում են այն ձեռքերը, որոնք թաթախված են իրենց ու իրենց ազգի զավակների արյան մեջ:

Երբ թեկուզ անհատ անձինք կարող են թույլ տալ իրենց բարձրաձայնել, թե ազատվել ենք Արցախի բեռից, երբ գլուխ են բարձրացնում հայության այս կամ այն հատվածի նկատմամբ իրենց անբարյացակամության մասին խոսողներ, իսկ երկիրը պարտության տարած և շարունակվող անկումը կասեցնելու անընդունակ արկածախնդիրները շարունակում են իրենց կործանարար կառավարումը, նշանակում է, որ լրջորեն խաթարված են տվյալ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը և ինքնապաշտպանական բնազդը: Երբ դասակարգային պայքարի պղտոր ջրերում հայտնված զանգվածների համար ցեղասպան

թուրքն ավելի հանդուրժելի է, քան իրենց երկրի նախկին իշխանավորները, պետք է հասկանալ, որ երկիրը գնում է պետականության կորստի, իսկ նույն ժողովուրդը՝ ինքնաոչնչացման: Իրողությունն այն է, որ բոլոր պարագաներում գլխավոր գործոնը ժողովուրդն է, որովհետև թե՛ նվիրյալները և թե՛ տականքը մշտապես և ամենուր լույս աշխարհ են գալիս, իսկ ժողովուրդը որոշում է, թե ում նախապատվություն տալ: Իրականությունը պետք է փոխվի, ինչպես 1918 և 1988 թվականներին, բայց իրականությունը հնարավոր չէ փոխել՝ ժողովրդին փոխարինելով մեկ ուրիշով: Հայ ժողովուրդը այս միակն է, և մնում է փոխել նրան կամ, այլ խոսքով, լուսավորել նրա մթագնած ու աղավաղված գիտակցությունը, արթնացնել նրա ազգային ինքնագիտակցությունը, հիշողությունը, արժանապատվությունն ու ըմբոստ ոգին: Հետպատերազմյան յոթ ամիսների պայքարի ընթացքում հաջողվեց այդ հեղաշրջումը առաջ բերել հսկայական զանգվածների շրջանում, բայց, վախենալով այդ ընթացքից, խորամանկ ու նենգ ինքնակոչը կանխեց զարգացումները՝ կազմակերպելով վաղաժամ ընտրություններ: Հնարավոր դարձավ ուռճացող ազատագրական պայքարը ժամանակավորապես շեղել իր ուղուց, բայց հնարավոր չէ կասեցնել դրա օրինաչափ ընթացքը ընդհանրապես: Լուսավորչական ու դաստիարակչական ջանքերի շնորհիվ զանգվածների գիտակցությունը պետք է ազատագրվի հայրենադավ և հակահայ ուժերի գերությունից: Այդ աշխատանքի ոչ գլխավոր, բայց կարևոր ամբիոնը կարող է դառնալ խորհրդարանը: Կրկնենք ևս մեկ անգամ, որ մրցակցությունը քաղաքական ուժերի մեջ չէ, այլ քաղաքական նպատակների՝ կկասեցվի՞, թե՞ կշարունակվի հայ ժողովրդի և հայոց պետականության կործանումը: Հայության ներկա սերունդները կանգնած են անցյալի ու ապագայի առջև պատմական պատասխանատվության հանդիման: ■

Տարածաշրջանային աշխարհաքաղաքականությունը և համահայկական մարտահրավերները

Վարդան Պետրոսյան
ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ

1. Տարածաշրջանային աշխարհաքաղաքականության հիմնական միտումները

Աշխարհի քաղաքական քարտեզի վերաձևումը, ըստ էության, չդադարող գործընթաց է, բայց այդ երևույթը տեսանելի է դառնում, երբ տեղային (լոկալ) խմորումներն ակտիվանում են նվաճողական պատերազմների, նոր ժամանակներում՝ նաև գունավոր հեղափոխությունների տեսքով: Երկրորդը միայն առաջին հայացքից կարող է ներքին գործընթաց թվալ, իսկ իրականում այն նույնպես մեծ տերությունների կողմից քաղաքական ազդեցության ոլորտների վերաբաշխման անմիջական ցուցիչներից է: Ասվածի վառ օրինակներն են դեպի Արևմուտք ձգտող Ուկրաինան և Վրաստանը՝ իրենց «մայդանային» և «վարդերի» հեղափոխություններով, որոնք շուրջ մեկ տասնամյակ փորձում են ռուսական ազդեցության դաշտի ձգողականությունը հաղթահարել ՆԱՏՕ-ին ինտեգրվելու ճանապարհով, սակայն դեռևս հեռու են դրանից: Ըստ ամենայնի, նման նպատակ է հետապնդում նաև 2018-ին Հայաստանում իշխանափոխություն իրականացրած «քայլողների» խմբակը: Մեր «թավշյա հեղափոխություն» կոչվածը խորքում նույնպես գունավոր հեղափոխություն էր և հրահրվել ու ուղղորդվել է նույն քաղաքական կենտրոններից, ինչ որ ուկրաինականն ու վրացականը:

Այդպես եղել է միշտ՝ պետական կազմավորման ստեղծման շրջանից ի վեր, և, ըստ ամենայնի, այդպես լինելու է միշտ: Օրինակ, փոքրասիական տարածաշրջանում, որի բնիկ էթնոսներից ենք նաև մենք՝ հայերս, նշված գործընթացները սկիզբ են առել առնվազն մ.թ.ա. 5-4-րդ հազարամյակներից (Ակկադական տերություն, Արատտա, Ասորեստան և այլն) և շարունակվում են մինչ օրս: Այդ շրջանից ի վեր տարածաշրջանի քաղաքական պատմությունը մի քանի, ընդհանուր առմամբ՝ երեքից հինգ հարյուր տարին մեկ թևակոխել է որակական ակտիվության նոր փուլ. փոխվել են գլխավոր դերակատարները (իմա՝ տարածաշրջանային աշխարհաքաղաքական կենտրոնները), փոխվել են աշխարհի քաղաքական քարտեզի վերաձևման եղանակները, բայց չի փոխվել դրանց բուն էությունը:

Մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը, որը պաշտոնական ձևակերպում ստացավ Բելովեժյան պայմանագրով (1991 թ., դեկտ. 8), աշխարհի քաղաքական քարտեզի վերջին գլոբալ վերաձևումը տեղի էր ունեցել Երկրորդ աշխարհամարտից հետո՝ Պոտսդամի կոնֆերանսում (1945 թ., հուլ. 17 – օգոս. 2): Դրանից հետո աշխարհը, ըստ էության, շուրջ հիսուն տարի ապրեց երկբևեռ կառուցվածքով: Բևեռներից մեկը ձևավորվել էր ԽՍՀՄ-ի շուրջ (սոցիալիստական ճամբարի երկրներ), մյուսը՝ ԱՄՆ-ի՝ ներառելով հիմնականում Կենտրոնական և Արևմտյան Եվրոպայի երկրները: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո աշխարհը միաբևեռ դարձնելու, այն է՝ իր առանցքի շուրջը վերակազմավորելու ԱՄՆ-ի ձգտումը այսօր էլ ավելի հեռու է իրողություն դառնալուց: Ավելին, անցած երեք տասնամյակների ընթացքում բավականաչափ հզորացել է ոչ միայն Ռուսաստանի Դաշնության (ՌԴ)՝ որպես ԽՍՀՄ-ի հիմնական իրավահաջորդի ռազմական ներուժը, և վերջինը տարբեր տարածաշրջաններում լուրջ հակազդեցություն է ցույց տալիս ԱՄՆ-ի վերոհիշյալ նկրտումներին, այլև ձևավորվում է երրորդ բևեռը՝ ի դեմս Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ): Իսկ ՉԺՀ-ի քաղաքական և տնտեսական շահերը գոնե ներկա փուլում ավելի համադրելի են ՌԴ-ի համապատասխան շահերի հետ, քան՝ ԱՄՆ-ի: Բացի այդ, ԱՄՆ-ը (այս դեպքում կարելի է ասել՝ առհասարակ Արևմուտքը) նշված համատեքստում գրեթե անհաղթահարելի դիմադրության է հանդիպում նաև տարածաշրջանային այլ խաղացողների, օր.՝ Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) կողմից և ժամանակ առ ժամանակ հարկադրված է լինում մեղմել իր կոշտ դիրքորոշումները: Իհարկե՝ որպես «միջանկյալ միջոց»: Ըստ էության, աշխարհի քաղաքական քարտեզի վերաձևման շրջանակներում էր նաև այսպես կոչված «արաբական գարուն» ծրագրի գործարկումը, որից Թուրքիան՝ իբրև ԱՄՆ-ի ռազմավարական դաշնակից, փորձում է առավելագույն օգուտները քաղել՝ ծավալվելով դեպի Օսմանյան կայսրության երբեմնի սահմանները: Արաբական աշխարհում Թուրքիայի հիմնական զոհերն են առայժմ Սիրիան և Իրաքը, որոնց տարածքներում շուրջ մեկ տասնամյակ չդադարող ռազմական գործողությունները վաղուց ավարտված կլինեին այդ երկրների պարտությամբ, ընդ որում՝ տարածքային զգալի կորուստներով, եթե չլիներ ՌԴ-ի օգնությունը Սիրիայի Հանրապետությանը, ԻԻՀ-ի աջակցությունը Իրաքին (ոչ բացահայտ), ինչպես նաև՝ վերջինիս տարածքում ԱՄՆ-ի կողմից Թուրքիային հակակշռող դերը: Սակայն շատ ավելի վտանգավոր են Թուրքիայի

ծավալապաշտական նկրտումները դեպի Արևելք, մասնավորապես՝ Միջին Ասիա, դեպի այսպես կոչված «թուրանական տափաստանները», որտեղից միջնադարում դուրս են եկել թյուրքական ցեղախմբերը և մորեխի նման իրենց ճանապարհին ոչնչացնելով ամեն ինչ՝ հասել մինչև Միջերկրականի ափերը, կործանել Բյուզանդական կայսրությունը (1453 թ.)՝ նրա տեղում հիմնելով իրենցը՝ Օսմանյանը: Ակնհայտ է, որ Թուրքիան, որպես շիրմա օգտագործելով Առաջավոր Ասիայի մի շարք ժողովուրդների (երկրների) հետ ունեցած էթնիկական և կրոնական ընդհանրությունները, փորձում է դառնալ նոր աշխարհաքաղաքական կենտրոն՝ ԱՄՆ-ի, ՌԴ-ի և ՉԺՀ-ի կողքին: Իհարկե, միամտություն կլինի կարծել, որ Արևելքի մահմեդական երկրների (օր.՝ Պակիստանի, Ղազախստանի, Ադրբեջանի) քաղաքական վերնախավերը չեն գիտակցում Թուրքիայի իրական նպատակները, բայց մեծ հաշվով վերջինի սկսած խաղը առայժմ և մոտ ապագայում փոխշահավետ է: Օր.՝ Ադրբեջանը 2020-ի 44-օրյա պատերազմում Թուրքիայի գործուն աջակցությամբ հաջողության հասնելով (մեր կարծիքով՝ ժամանակավոր) Ղարաբաղյան հակամարտությունը ռազմական ճանապարհով հանգուցալուծելու իր նախաձեռնության մեջ՝ ոչ միայն վերադարձրեց առաջին պատերազմում (1990-ականներ) կորցրած տարածքները, այլև նախկին ԼՂԻՄ-ի որոշ մասեր և հաչս տարածաշրջանային տերությունների՝ մեծացրեց իր քաղաքական կշիռը, իսկ այժմ փորձում է հաղթողի դիրքերից խոսել հայկական երկու հանրապետությունների հետ: Մի բան, որը նախկինում՝ շուրջ 26 տարի, նրան չէր հաջողվում ոչ մի կերպ: Ղազախստանը ԵԱՏՄ-ի և ՀԱՊԿ-ի անդամ է, և թվում է՝ դրանով երաշխավորված է նրա և՛ տնտեսական, և՛ քաղաքական անվտանգությունը, բայց «Թյուրքալեզու պետությունների համագործակցությանը» Ղազախստանի անդամակցությունը ոչ միայն անվտանգության լրացուցիչ երաշխիքներ է պարունակում, մեծացնում նրա կշիռը թյուրքական ժողովուրդների աչքում, այլև ավելի ևս կարևորում նրա դերը նույն ՀԱՊԿ-ի և ԵԱՏՄ-ի շրջանակներում՝ ակնարկելով, որ վերջիններն իր քաղաքական և տնտեսական անվտանգության միակ երաշխավորները չեն: Ըստ այդմ՝ Ղազախստանն իրեն ավելի անկաշկանդ է զգում ՌԴ-ի առանցքի շուրջը ձևավորված վերոհիշյալ երկու կառույցներում, ի տարբերություն, օրինակ, Բելառուսի, որի ղեկավարը Արևմուտքի «գրոհներին» դիմագրավելու այլ տարբերակ չունի, քան ՌԴ-ի օգնությանն ապավինելը:

Թուրքիան իր նպատակները հետապնդում է՝ հմտորեն օգտվելով Արևմուտքի և ՌԴ-ի միջև առկա հակամարտությունից՝ խուսանավելով այդ երկու բևեռների միջև: Թե որքան կշարունակվի այդ խաղը, դժվար է ասել, բայց, դատելով վերջին հարյուրամյակի պատմությունից, պիտի կարծել, որ ճիշտ պահին Թուրքիան կկողմնորոշվի՝ որ բևեռում հանգրվանել: Նա դա ցույց է տվել առնվազն երկու անգամ. 1) 1920-ի ամռանը, երբ ի դեմս Քեմալ Աթաթուրքի՝ գործարքի մեջ մտավ բոլշևիկյան Ռուսաստանի հետ և վերջինի օգնությամբ ոչ միայն չեզոքացրեց Անտանտի երկրների՝ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կողմից իր տարածքային մասնատման սպառնալիքը, առհասարակ դիմագրավեց նրանց ճնշումներին, այլև նպաստեց խորհրդայնացած Ադրբեջանի սահմանների ընդարձակմանը ի հաշիվ պատմական հայկական տարածքների. 2) 1946-ին, երբ արևմտյան երկրների, մասնավորապես ԱՄՆ-ի աջակցությամբ կանխեց խորհրդային զորքերի մուտքն իր տարածք՝ այդպիսով երկրորդ անգամ չեզոքացնելով մասնատման վտանգը: Ակնհայտ է, որ այն բևեռը, որում վճռորոշ պահին կհանգրվանի Թուրքիան, չի լինի տարածաշրջանային իր երեքհարյուրամյա (սկսած Պետրոս Մեծի ժամանակներից, երբ Ռուսաստանը Թուրքիայից պոկեց Ղրիմը) հակառակորդի նախաձեռնած դաշինքը: ԱՄՆ-ը փորձում է Թուրքիային՝ որպես ՆԱՏՕ-ի իր դաշնակցի, օգտագործել ՌԴ-ի դեմ, առհասարակ՝ արևելյան տարածաշրջանի գերտերությունների դեմ, այսինքն՝ նաև ԻՀՀ-ի և ՉԺՀ-ի, բայց Թուրքիան այդ խաղին տրվում է այնքանով, որքանով այն տեղավորվում է իր սեփական մտադրությունների ծիրում: Երբեմն նույնիսկ հակադրվում է (օր.՝ ռուսական Ս-400 հակաօդային պաշտպանության համակարգերի գործարքը ՌԴ-ի հետ, որը դեռևս շարունակվում է)՝ այդպիսով, ըստ ամենայնի, բարձրացնելով ԱՄՆ-ի տարածաշրջանային դաշնակիցը մնալու իր գինը:

Մեծ պատերազմը, որի մասին հաճախ է խոսվում վերջին շրջանում, ըստ էության, ձեռնտու չէ հիմնական խաղացողներից և ոչ մեկին: Բացի այն, որ այդպիսի պատերազմը շատ ծանր հետևանքներ կարող է ունենալ բոլոր մասնակիցների համար, նախապես հնարավոր էլ չէ կանխատեսել, թե այն ինչպիսի ելք կունենա, որովհետև հնարավոր չէ կանխատեսել, թե, օրինակ, հակամարտող կողմերի ինչպիսի կազմ կլինի այդ պատերազմում: Այս առումով բացառություն է, թերևս, ԱՄՆ-ը, որը, հեռու գտնվելով ռազմական գործողությունների հնարավոր օջախներից, ինչպես գործող հրաբուխներից, կարող է լինել այդպիսի պատերազմից միակ շահողը, երբ հակամարտող կողմերը բավականաչափ կթուլանան և իր համար հեշտ կլինի թելադրել բոլորին: Ենթադրելի մեծ պատերազմի դեպքում ԱՄՆ-ը մեծ հաշվով կկիրառի նույն մարտավարությունը, ինչ և Երկրորդ աշխարհամարտի տարիներին, երբ մի քանի անգամ հետաձգեց նացիստական Գերմանիայի դեմ 2-րդ ճակատի բացումը, և բացեց միայն այն ժամանակ, երբ պարզ դարձավ, որ ԽՍՀՄ-ը միայնակ կարող է վայելել հաղթողի դափնիները: Իհարկե, ասվածը չի նշանակում, թե հանուն այն բանի, որ պատերազմ չլինի, տարածաշրջանային տերությունները տեղի կտան Թուրքիայի բոլոր հավակնությունների առջև, որովհետև նրանք չեն կարող չհասկանալ, որ այդ դեպքում Թուրքիան իր նպատակներին կհասնի «խաղաղ» նվաճման (Վրաստան) կամ ոչ մեծ կոնֆլիկտներ հրահրելու ճանապարհով (Սիրիա, Իրաք), ինչպես որ վարվում է հատկապես վերջին տասը տարիներին: ՌԴ-ը առայժմ նախընտրում է

Թուրքիայի նկատմամբ վարել երկակի՝ մի ձեռքով՝ «համագործակցելու» (իրականում՝ ՆԱՏՕ-ի և Թուրքիայի միջև բացված ճեղքը խորացնելու), մյուսով՝ նրան զսպելու մարտավարություն՝ փորձելով այդ ճանապարհով խուսափել մեծ բախումից կամ առնվազն այն հետաձգել իր համար ավելի նպաստավոր ժամանակների: Այդ խաղը հիշեցնում է անցում մազե կամրջով, բայց, հնարավոր է, որ աշխարհաքաղաքական ներկա իրավիճակում ՌԴ-ի համար նախընտրելին է: Իհարկե, ոչ ՌԴ-ը, ոչ էլ տարածաշրջանային մյուս տերությունները՝ ՉԺՀ-ն և ԻԻՀ-ը, չեն կարող չգիտակցել, որ այս պահի մարտավարությունը հեռանկարային տեսանկյունից գուցե և իրեն չարդարացնի, և Թուրքիայի հետ առճակատումը դառնա անխուսափելի, որովհետև վերջինի հեռահար նպատակները (այսպես կոչված՝ «պլան մաքսիմումը») վերջնասահման չունեն. դրանք ձգտում են այն եզրագծին, որին տվյալ պահին կհասնի իրենց հրանոթներից արձակված արկը (այժմ արդեն՝ բայրաքթարը): Նվազագույնը, որին, ըստ ամենայնի, փորձում է հասնել Էրդողանյան Թուրքիան՝ որպես նոր տիպի սուլթանություն, Արևելքի գլխավոր խաղացողներից մեկը դառնալն է: Էրդողանի սուլթանական նկրտումների իրագործման ճանապարհին թյուրքական ժողովուրդները, ինչու ոչ՝ առհասարակ կրոնական եղբայրակիցները (այսինքն՝ նաև ոչ թյուրքական մահմեդական ժողովուրդները, օր.՝ պակիստանցիները) պարզապես գործիք են, իսկ նրանց տնտեսական հնարավորությունները՝ սեփական կարողականությունը բազմապատկելու միջոց, որովհետև Թուրքիան չի կարող չգիտակցել, որ մեծ հակամարտության դեպքում իր տնտեսական ռեսուրսները չեն բավարարի տարածաշրջանային գերտերություններից նույնիսկ մեկի, օր.՝ ՌԴ-ի կամ ՉԺՀ-ի հետ չափվելու համար:

Ենթադրվող մասշտաբների հակամարտության դեպքում ԱՄՆ-ի ուղղակի ներգրավվածությունը հավանական չէ (այդ դեպքում անխուսափելի կդառնա Երրորդ համաշխարհայինը), բայց նա կարող է մասնակցել ռեսուրսների մատակարարումով կողմերից մեկին, ըստ ամենայնի՝ Թուրքիային, փորձելով իր ձեռքում պահել վերահսկիչ փաթեթը:

Հայկական երկու պետությունները սեպի պես խրված են Թուրքիայի կայսերական նկրտումների ճանապարհին:

2. Հայկական իրականությունը կամ «Հարատև կռիվ»

Ինչպիսի՞ն պիտի լինի մեր վարքագիծը նշված զարգացումների համատեքստում: Թերևս ոմանք կասեն՝ ի՞նչ վարքագծի մասին կարող է մտածել պատերազմում պարտված և այդ պարտությունից դեռևս ուշքի չեկած ժողովուրդը: Ժողովուրդը՝ միգուցե, բայց նրա քաղաքական առաջնորդները և մտավորականությունը այդպես մտածելու իրավունք չունեն, որովհետև այլընտրանքը կարող է լինել ինքնաոչնչացումը: Ավելին՝ պատերազմում պարտված կողմը, այսինքն՝ մենք, պարտավոր է ոչ միայն արագ

Արաբական գարուն

մտածել, այլև՝ արագ գործել, որովհետև դանդաղելը ևս համարժեք է ինքնաոչնչացման: Դրա համար մեկ անգամ ևս պիտի արձանագրել որոշ իրողություններ, որոնց գիտակցումը եղել է նաև անցած երեսուն տարիների ընթացքում, բայց որոնք ավելի պարզորոշ մեր առջև ծառացել են հատկապես վերջին պատերազմին հաջորդող շրջանում: Այդպիսիք են.

Ա) Մենք պիտի ելնենք այն իրողությունից, որ Արցախի հիմնահարցը լուծված չէ: Այն կարող է լուծված համարել Ադրբեջանը, որովհետև նրա վիճակը այժմ շահեկան է: Մյուս կողմից՝ ակնհայտ է, որ թշնամին մտադիր չէ բավարարվել ձեռքբերածով: Նա միշտ փորձելու է պոկել ավելին՝ ընդհուպ ՀՀ-ին թուլացնելու այն աստիճան, որ վերջինը ոտքի կանգնելու և կրկին պայքարելու հնարավորություն չունենա երկար ժամանակ: Հետևաբար չարդարացված «լավատեսությամբ» տրամադրված շրջանակներից հատկապես ետպատերազմյան շրջանում կրկին հնչող տեսակետը, թե մեր անհաջողությունների պատճառը իբրև թե մեր իսկ «առավելապաշտությունն» է, հետևաբար՝ անիրատեսությունը, հակասում է առկա իրողություններին: Որքան էլ լուրջ չընդունենք Ի. Ալիևի պարբերաբար կրկնվող ծավալապաշտական նկրտումները, թե «Զանգեզուրը, Սևանը, Էրիվանը պատմական ադրբեջանական հողեր են» (այլ հարց է, թե ինչպես կարող է քոչվորը ինչ-որ տեղ «պատմական հողեր» ունենալ), իրենք՝ ադրբեջանցիները, գնալով լուրջ են ընդունում հաճախ կրկնվող պատմագիտական այդ կեղծիքը: Ավելին, ինչպես ցույց տվեցին վերջին ամիսների ներհայաստանյան զարգացումները, այդ խայծը կուլ է տվել նաև «հայի տականքը», որին բնորոշ է անհայրենիք՝ ստամոքսային մտածողությունը:

Բ) Ռազմավարական դաշնակցի մասին մեր հանրային պատկերացումներն իրատեսական չեն, որովհետև դրանք չեն տեղավորվում առհասարակ դաշնակցի մասին քաղաքագիտական պատկերացումների տրամաբանության մեջ: Հետևաբար մենք չունենք «ռազմավարական դաշնակից» ըստ մեր հանրային ըմբռնման: Ավելին՝ առհասարակ չեն լինում այդպիսի դաշնակցային հարաբերություններ: 44-օրյա պատերազմը ևս փաստեց, որ, անկախ տարբեր հանգամանքներից, ՀՀ ռազմավարական դաշնակիցը եղել և մնում է ՌԴ-ը, իսկ մեր բնական դաշնակիցներն են

Իրանը և Չինաստանը: Դա այդպես է առաջին հերթին այն պատճառով, որ նշված բոլոր երկրները խնդիրներ ունեն մեր դարավոր թշնամու՝ Թուրքիայի հետ. վերջինի ծավալապաշտական նկրտումները հակադրվում են նրանց պետական շահերին: Բայց այդ երկրները տարբեր կարգի խնդիրներ ունեն նաև Արևմուտքի, մասնավորապես՝ ԱՄՆ-ի հետ, որի հետ մենք առնվազն այդպիսի խնդիրներ չունենք: Եվրոպական տերություններից Ֆրանսիան մեզ բարեկամ պետություն է: Նույնը հնարավոր չէ ասել, օր., Մեծ Բրիտանիայի մասին, որը աշխարհաքաղաքական գործընթացներում դեռևս շարունակում է դրսևորել գորշ կարդինալի իր երբեմնի վարքագիծը: Անգլիական կապիտալը այնքան է սերտաճել թյուրքական պետությունների, այդ թվում՝ ադրբեջանական կապիտալի հետ, որ միամտություն կլինի նրանից հայանպաստ դիրքորոշում ակնկալել նույնիսկ խոսքային մակարդակում: Չմոռանանք, որ Մեծ Բրիտանիան եվրոպական միակ տերությունն է, որը դեռևս չի ճանաչել հայկական ցեղասպանությունը և ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդի անդամ միակ երկիրն է, որը 44-օրյա պատերազմի ընթացքում վետո դրեց Ադրբեջանի վարքագիծը քննելու առաջարկության վրա: Այդ իմաստով մեր տարածաշրջանում բրիտանական քաղաքականությունը կրկնում է ուղիղ հարյուր տարի առաջվա իր վարքագիծը: 1918 թ. դեկտեմբերի սկզբներին Բաքվում դաշնակիցների զորքերի՝ ազգությամբ բրիտանացի հրամանատար գեներալ-մայոր Թոմսոնը Անդրանիկի զորամասին արգելեց մտնել Շուշի, երբ Ղարաբաղի հայության օգնության կանչով նա արդեն բերդաքաղաքի մատույցների մոտ էր, որովհետև բրիտանացիները հասցրել էին գայթակղվել Բաքվի նավթը տնօրինելու հեռանկարից: Գերմանիայի Դաշնության մասին «բարեկամ» բառը կարելի է գործածել մեծ վերապահումով: Մենք չենք կարող մոռանալ, սակայն, որ ինչպես արցախյան առաջին, այնպես էլ երկրորդ՝ 44-օրյա պատերազմում ՌԴ-ից ենք ստացել կենսականորեն անհրաժեշտ աջակցությունը:

Դաշնակցային հարաբերությունները ենթադրում են փոխադարձություն, բայց արդյո՞ք «քայլողների» վարչախումբը բավարար չափով անկեղծ է եղել մեր դաշնակից երկրների հետ: Դրա վկայությունները չունենք: Հետևաբար վերջին պատերազմում մեծ հաշվով մենք հնձեցինք այն, ինչ ցանել էին «քայլողները»: Սկզբունքորեն հարցի էությունը չի փոխվում նույնիսկ այսպես կոչված «Լավրովյան պլանի» առկայության պայմաններում: Դաշնակիցների հետ հարաբերություններում «քայլողների» վարքագիծը հնարավոր չէ բնորոշել այլ կերպ, քան՝ երկդիմի, որը քաղաքական տգիտության դրսևորում է, եթե չասենք՝ դավաճանություն ազգային շահերի դեմ, անկախ այն բանից, այդ վարքագիծը պետության արտաքին քաղաքական կուրսի վեկտորների քողարկված փոփոխության արդյունք է, թե՝ պարզապես անգրագիտության: Գաղտնիք չէ, որ Ռուսաստանին անդրկովկասյան տարածաշրջանը անհրաժեշտ է ամբողջությամբ կամ առնվազն պետք

Կ. Պոլսի գրավումը թուրքերի կողմից

է, որ Վրաստանն ու Ադրբեջանը վերջնականապես անցում չկատարեն հակառակորդ ճամբար՝ ՆԱՏՕ: Հասկանալի է, որ ՌԴ-ի կողմից կարող են լինել Ադրբեջանին մեր ազգային-պետական շահի, առաջին հերթին՝ Արցախի հաշվին գոհացնելու փորձեր: Հասկանալի է նաև, որ մեծ հաշվով ՌԴ-ի համար էական չէ՝ այս կամ այն տարածքը կլինի ՀՀ-ի կազմում, ԱՀ-ի կազմում, թե Ադրբեջանի, կարևորը՝ որ ինքը գոնե մասամբ գոհացնի բոլոր կողմերին էլ (ամեն մեկին յուրովի) և առանց լուրջ խնդիրների, տարածաշրջանը պահի իր հակակշռի տակ: Սակայն դա դեռևս չի նշանակում, որ մենք էլ պիտի ունենանք ավանդական հայկական հարսի պահվածք, ինչպիսին որ այսօր է (իհարկե՝ առերևույթ, որովհետև, ինչպես նշեցինք, «քայլողները» երկդիմի խաղի մեջ են): ՌԴ-ն առաջ է մղում իր քաղաքական օրակարգը, մենք էլ պիտի հնարավորինս առաջ մղենք մեր ազգային-պետական շահից բխող օրակարգը: Մենք հետևողականորեն և հնարավոր բոլոր միջոցներով պիտի հետապնդենք մեր ազգայինպետական շահը, եթե նույնիսկ այն ոչ միշտ է համադրվում մեր ռազմավարական դաշնակցի տարածաշրջանային հետաքրքրությունների հետ: Այդ առումով կարող է ուսանելի լինել հենց մեր թշնամու՝ Ադրբեջանի գործելաոճը, որը, ի դեպ, ՌԴ-ի «ռազմավարական դաշնակիցը» չի համարվում: Վաղուց է նկատվել, որ մեր ազգային շահերից բխող վարքագիծ չի կարող դրսևորել կապիտուլյացիոն փաստաթուղթ ստորագրած իշխանությունը և չի էլ դրսևորում: Հետևաբար պետք են իշխանություններ, որոնց քաղաքական փորձառությունը, ազգային շահերի խորքային գիտակցումը և միջպետական հարաբերություններում դրանք առաջ տանելու հաստատակամությունը կասկածներ չեն հարուցի: Այլևս աքսիոմատիկ ճշմարտություն է, որ «քայլողների» վարչախումբն ի վիճակի չէ այդպիսի կեցվածք դրսևորել, բայց նաև ակնհայտ է, որ պողոսը, որը իբրև թե «պողպատե մանդատով» է օժտել «քայլողներին», ունակ չէ ընկալելու այդ աքսիոմատիկ ճշմարտությունը: Պողոսը մնացել է «ներկանախկին» հանկերգի վրա, նա ունակ է ընկալելու միայն տվյալ պահի իր նեղ մասնավոր շահը: Պողոսը չունի Հայրենիքի և Պետականության խորքային ընկալում: Ընդ որում, խոսքը միայն հայաստանցի պողոսի մասին չէ, այլև համահայկական պողոսների: Հետևաբար,

ազգային խնդիրների լուծման ճանապարհին պողոսն ընդհանրապես դաշնակից չէ: Ավելի հավանական է հակառակը, ինչպես հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Պողոսը շարունակում է մնալ իրեն «երեք միլիոն վարչապետներից մեկը» զգալու թմբիրի մեջ: Նրան թվում է, թե քաղաքական ընդդիմությունը բարձրագոչ կարգախոսների քողի տակ փորձում է խլել իր՝ իրականում չունեցած իշխանությունը:

Գ) Առանց ազգային նկարագրով, փորձառու, ինտելեկտուալ, պետական արժեքների խոր ըմբռնումով իշխանությունների, մենք ոչ միայն չենք կարող հաջողություններ ունենալ որևէ բնագավառում, այլև մեծ է վտանգը, որ հերթական անգամ կարող ենք կորցնել պետականությունը: Ակնհայտ է նաև, որ պողոսների «պողպատե մանդատով» օժտված «քայլողների» վարչախումբը, չսպասելով նույնիսկ նոր կառավարության ձևավորմանը, ետընտրական շրջանում նախահարձակ է լինում, որպեսզի քաղաքական ընդդիմությանը հարկադրի նահանջել և հաշտվել իր պարադոքսալ գոյության հետ: Նույնքան ակնհայտ է, սակայն, որ առկա իրավիճակի հետ հաշտվելը համազոր է այս անհայրենիք վարչախմբի մեկ այլ տեսակի վերածվելուն, այսինքն՝ դավաճանի: Ուստի, անկախ հունիսյան արտահերթ ընտրություններում ԿԸՀ-ի արձանագրած և ՍԴ-ի վավերացրած արդյունքներից, ազգային-պետական շահի հրամայականն է՝ «կառավարական օթյակներից» օտարել «քայլողների» վարչախմբը:

Դ) Ազգային-պետական շահը գերակա է ամեն ինչի նկատմամբ: Այդ գիտակցումը, սակայն, չունեն հատկապես նրանք, որոնք ի պաշտոնե պարտավոր էին այդպիսի բարձր գիտակցական վարքագիծ դրսևորել: Խոսքս վերաբերում է և՛ իշխանական բուրգի գագաթնամերձ պաշտոնյաներին, որոնց ճնշող մեծամասնությունը անցած ութ ամիսների ընթացքում ապացուցեց, որ չունի Հայրենիքի և Պետականության տարրական ըմբռնում, և՛ հատկապես Սահմանադրական դատարանին, որը պարզապես գործեց պիղատոսաբար (իհարկե, պարզ է, որ ՍԴ-ի բոլոր անդամները չեն ունեցել նույն դիրքորոշումը, բայց ինչպես օրենքի, այնպես էլ դրսից դիտողի տեսանկյունից ՍԴ-ն միասնական մարմին է): Իհարկե, թե՛ առաջին, թե՛ երկրորդ կարգի պաշտոնյաների նմանօրինակ վարքագիծը նորություն չէ: Պետական չինովնիկը, մասնավորապես՝ բարձրաստիճան չինովնիկը այդպիսին է եղել բոլոր վարչակազմերի ժամանակ: Բայց կա մի էական տարբերություն. նույնը չեն ժամանակները: Անցած երեսուն տարիների ընթացքում մենք չենք ունեցել հասարակության պառակտվածության և պետականության վտանգվածության այնպիսի բարձր աստիճան, ինչպիսին որ առկա է նիկոլական Հայաստանում: Եվ որ ավելի վտանգավոր է՝ ետպատերազմյան նիկոլական Հայաստանում: Իրավասու բարձրաստիճան պաշտոնյաներից և հատկապես ՍԴ-ի անդամներից ակնկալվում էր սեփական «ես»-ից վեր կանգնելու, իրենք իրենցից հասուն լինելու գիտակցականություն,

«Թավշյա հեղափոխության» հանրահավաք Երևանում

բայց նրանք այդ առումով ոչնչով չտարբերվեցին շարքային պողոսից: Մատների վրա կարելի է հաշվել նշված բարձր չափանիշով քննություն բռնած պաշտոնյաներին:

Ե) Իրավիճակը պահանջում է համազգային ներուժի առավելագույն համախմբում: Բայց ինչի՞ կամ ո՞ւմ շուրջ համախմբվեն ազգային ուժերը: Մի իշխանությա՞ն, որը մեզ պատուհասած աղետի գլխավոր մեղավորն է, բայց չունի իր մեղքի գիտակցումը: Մի իշխանությա՞ն, որի ոչ միայն պատերազմական, այլև ետպատերազմյան շրջանի վարքագիծը ուղղակի հակապետական է: Պետական բարձրաստիճան չինովնիկների ճնշող մեծամասնության վարքագիծը ուղղակի նողկալի է: Դա ոչ միայն պետական ապարատի բարոյալքման բարձր աստիճանի ցուցիչ է, այլև, որ ավելի վտանգավոր է, հասարակական գիտակցության խոր անկման ցուցիչ:

Այս պայմաններում ո՞վ է ազգային-պետական շահի իրական կրողը, ո՞ւմ հետ պիտի դաշնակցել պետականության նավը վերջնական կործանումից փրկելու համար: Կարծում ենք՝ այդ հարցերի պատասխանները փնտրելիս ուղենշային պիտի լինի երկու սկզբունք. 1) երբ վտանգված է ազգային-պետական շահը, այն պաշտպանելու ճանապարհին ընդունելի կարող են լինել բոլոր մեթոդները, 2) հայկական պետականության վերելքը կարող է լինել միայն Արցախի հետ միասին:

Չնայած վերը ներկայացված զգալիորեն խճողված իրականությանը, որն առանձնապես լավատեսության նախադրյալներ չի պարունակում, ելքը մեկն է՝ համազգային առողջ ներուժի համախմբումը: Իրատեսական չէ մտածել, թե առնվազն կարճաժամկետ հեռանկարում պողոսն ու պիղատոսը կգիտակցեն իրենց վարքագծի կործանարարությունը պետականության համար: Իսկ հանուն այդ համախմբումն իրողություն դարձնելու մեզ անհրաժեշտ է պայքար քրիստափորյան ըմբռնումով, այն է՝ «Հարատև կռիվ», որպեսզի «պողպատե մանդատով» հրապուրվածները ի վերջո գիտակցեն՝ քանի դեռ չկա անկեղծ նվիրում ազգային արժեքներին և չկա դրանք կենսագործելու պողպատե կամք, չի օգնի որևէ մանդատ: Այդ ճանապարհին ազգային իշխանությունների առաջին քայլերից մեկը պիտի լինի մեր բնական դաշնակիցների հետ հարաբերությունները վստահության նոր մակարդակի բարձրացնելը:

Թրքական կայսերապաշտութեան հաշուեյարդարը

Հրազդան Սարգսի Ջէյթլեան
Սթրուէր Ճարտարապետական գրասենեակի հիմնադիր, (Լոս Անճլէս), հրապարակագիր և բանաստեղծ



Արցախի գոյամարտին 2020-ի վերջաւորութեան մեր ձախողութիւնները բացատրել փորձող երկու սխալական մօտեցումներ լայն տարածում գտան հայկական քաղաքական մամուլին մէջ և ընկերային ցանցերուն վրայ՝ հակառակ իրենց պարզունակ և կրկնաբանական տրամաբանութեան:

Առաջինը, որ թէև հազիւ թէ համոզեց Հայաստանի յունիսեան ընտրութիւններու քուէարկածներէն քիչ մը աւելի քան մէկուկէս առ հարիւրը միայն, կը շարունակուի առաջ քշուիլ Լևոն Տէր-Պետրոսեանի և ՀԱԿ-ի կողմէ և այն է, որ ձախողեցանք, քանի որ չհետապնդեցինք հարցի լուծման աւելի «լուրջ», աւելի «ռացիոնալ» մօտեցում, ինչպէս իրենք կը սիրեն ըսել (երևի հայերէն «բանական» բառը չգործածելով աւելի հաւատալի կը դառնայ իրենց տեսակէտը): Ըստ ասոնց՝ աւելի ռացիոնալ մօտեցում մը եղած պիտի ըլլար նախկին ԼՂԻՄ-ի շուրջ մեր՝ իսնամական թուականներուն ազատագրած պատմական հայապատկան հողերը արագ վերադարձնելը «փոխզիջումներով»՝ վաստկելու համար ապագային Արցախի մէջ դարձեալ ինքնավարութեան քուէարկութիւն անցկացնելու իրաւունքին խոստումը ազերի «գաղթականներուն վերադարձէն» ետք: Պարզապէս զաւեշտական է այս մօտեցումը, քանի որ հակառակորդ կողմերէն միայն մե՛նք է, որ միշտ «փոխզիջումներով» զբաղցուեցանք, իսկ «Ատրպէյճան» միայն ու միայն մերժեց ՈՐԵՒԷ «փոխզիջում»:

Երկրորդ մօտեցումը՝ մանրավաճառուած Նիկոլ Փաշինեանի կողմէ, որ իր մատչելիութեամբ համոզեց ձախողութենէն խոնջած մեծամասնութիւնը, այն է, որ մենք ձախողեցանք 2020-ի վերջաւորութեան, քանի որ, ըստ Փաշինեանի, ամէն ինչ սխալ ըրած էինք մինչև 2018 թուականը, և բաւարար ժամանակ չէր եղած 2018-2020 թթ. սխալները շտկելու…

2020 թուականի վերջաւորութեան Արցախի գոյամարտի մէջ մեր ձախողութիւնները իրականութեան մէջ կատարելապէս ուրիշ և աւելի բանական բացատրութիւն ունին ու աւելի պարզ պատճառ:

Փետրուար 1988-ին Արցախեան շարժումը սկսաւ Ստեփանակերտի մէջ ո՛չ տեղական ինքնավարման պահանջով (Արցախը խորհրդային լուծի տակ «ինքնավար» մարզ մըն էր, ԼՂԻՄ, արդէն ըստ կարգավիճակի սահմանումին), այլ Արցախի՝ Ատրպէյճանէն անկախացումին և Հայաստանին միացումին պահանջով: Արցախեան շարժումը շուտով վերածուեցաւ հայկական աննախադէպօրէն մասսայական ազգային շարժումի մը թէ՛ Արցախի և թէ՛ Հայաստանի մէջ, շարժումի մը, որու հիմնական առաջատար նպատակը խորհրդային իշխանութեան կողմէ թրքական ժողովուրդներու սիրաշահման զոհաբերուած Արցախի՝ Ատրպէյճանի բռնակցման պատմական անարդարութեան և Հայաստանէն մասնատումին սրբագրումն էր: Ազգային արդարութեան վերահաստատման այդ հզօր շարժումը դարձաւ, առանց որևէ չափազանցումի, այն կայծը, որմէ սկսան խորհրդային ապազգային կառուցուածքին փլուզման խարոյկը և խորհրդային իշխանութեան փոշիացումը, երբ մէկը միւսին ետևէ խորհրդային լուծի տակ ազգ-հանրապետութիւնները, ներառեալ Ռուսիան, ոտքի կանգնեցան՝ անկախութիւն հռչակելով:

Արցախի՝ Ատրպէյճանին կցումը 1923-ին Ստալին բռնապետի ֆիաթով խորհրդային իշխանութեան կողմէ թրքական կայսերապաշտութեանը սիրաշահելու և դրամատիրական Արևմուտքի դէմ դարձնելու դաւ մըն էր, որ յաջողելու ոչ մէկ գրաւական ունէր, և որ լման ձախողեցաւ, երբ Թուրքիա դարձաւ և մնաց ՆԱԹՕ-ի անդամ ցայսօր:

Քանի որ Արցախը խլուած էր Հայաստանէն թրքական կայսերապաշտութեան սիրաշահման համար հիմնականօրէն (ուրիշ պատճառ գոյութիւն չունէր հայ մեծամասնութեամբ պատմականօրէն հայապատկան այս շրջաններուն՝ Հայաստանէն պոկումին), ուրեմն Արցախի խլումը անուղղակի արգասիքն էր և ըստ արդիւնքի բաղկացուցիչ մասը հայութեան թիւի՝ բռնութեամբ նուազեցման, Հայաստանի մասնատումին և տկարացումին օսմանեան իթթիհատական, քեմալական թէ յետքեմալական թրքական պետութեան շարունակական կայսերապաշտական քաղաքականութեան պատմական չարիքին: Ուրիշ խօսքով՝ Արցախի անկախացման դատը մասնիկն էր հայ ժողովուրդի դիմադրութեան՝ թրքական կայսերապաշտական պետական քաղաքականութեան, որ 19-րդ դարու վերջէն սկսեալ կը նպատակադրէ ուղղակի և անուղղակի միջոցներով հայութեան ջնջումը և Մեծ եղեռնէն ետք վերապրած Հայաստանի մասնատումն ու շարունակական տկարացումը:

Արցախի 1990-ական թուականներու ազատամարտիկներուն համար Արցախի դատը մասնիկն էր մասնատուած Հայաստանի վերաամբողջացման, հայութեան ազգահաւաքին և հայապատկան բռնագրաւուած հողերու ազատագրման ազգային-ազատագրական արդար պայքարին: Արցախի դատի լուծումը առանձին կարելի չէր դիտել ընդհանրապէս

Հայ դատի պատմական լուծումէն: Այս իմաստով Արցախեան գոյամարտը բնական շարունակութիւնն էր 1970/80-ական թուականներու Հայ դատի լուծումը պահանջող սփիւռքեան հայ մարտիկներու պայքարին, պայքար մը, որ իր կարգին պատմական հայ յեղափոխական շարժմանը վերանորոգումն էր:

Արցախեան պայքարը, ուրեմն, բնաշրջական յեղափոխութիւնն իսկ էր պատմական հայ յեղափոխութեան, որ սկսած էր Արցախեան շարժման սկիզբէն ուղիղ մէկ դար առաջ՝ 1880-ական թուականներու վերջաւորութեան: Եւ երբ յատկապէս Արցախի ազատամարտիկներու աննկուն առաջատարութեամբ (ճակատներէն ազդելով հայկական պետական մարտավարութեան ուղղութեան վրայ), նորանկախ Հայաստանի նորաստեղծ բանակի մասնակցութեամբ հայութիւնը յաղթեց 1992-էն 1994-ին, կը թուէր, թէ Արցախի և Հայաստանի վերամիաւորման պատմական ժամը հասած էր:

Յարակարծականօրէն և անբնականօրէն յաղթական կողմին համար, Հայաստանի նորանկախ պետականութեան անդրանիկ ղեկավարութիւնը, առաջնորդուելով Լևոն Տէր-Պետրոսեանի հիմնականօրէն սխալական, բայց տիրապետող մօտեցումներով, այդ ճիշդ մոմենտին չյայտարարեց Հայաստանի ու Արցախի միացումը և անհասկնալիօրէն, հակառակ մեր յաղթանակին, որոշեց ենթարկուիլ մեր շահերը չբաժնող և մեր շահերուն հակառող, իրենց շահերէն մղուած օտար պետութիւններու նենգ և անձնասէր խրատներուն, մինչև իսկ Արցախի անկախութիւնը չճանչցաւ, բան մը, որ անհեթեթութեան գագաթնակէտն էր և է տակաւին:

Օտար տարբեր պետութիւնները, պայմանաւորուած իրենց շահերով, ընդհանրապէս թրքամէտ էին 1994-ին և ե՛ն տակաւին, միշտ կը նախընտրեն Հայաստան գործածել իբրև ճնշման լծակ՝ աւելի մեծ Թուրքիան և թրքական աշխարհը պահելու իրենց ծիրին մէջ կամ սիրաշահելու իրենց ազդեցութեան շրջանակին մէջ: Անսալ օտար պետութիւններու ոչ անկեղծ յորդորներուն և չճանչնալ Արցախի անկախութիւնը ինքնուսնականներու մեր յաղթանակներէն ետք սխալ մըն էր, որ պատմութիւնը ցոյց պիտի տայ իբրև ամէնէն ծանրակշիռ սայթաքում, և սխալ մը, որ յանգեցաւ մեր վերջին ձախողութիւններուն:

Եթէ ատենին Արցախը Հայաստանի մաս հռչակուած ըլլար, Արցախի վրայ յարձակում Հայաստանի սահմաններուն վրայ յարձակում պիտի ըլլար՝ սկզբունքով կիրառման մէջ դնելով Հայաստանի պաշտպանողական դաշինքները, դաշինքներ, որ չգործադրուեցան 2020-ին՝ ըստ յայտարարութեանց, որովհետև Արցախը Հայաստանի մաս չէր, պաշտօնապէս նոյնիսկ Հայաստանի համար:

Ըստ Տէր-Պետրոսեանի՝ ռացիոնալ փոխզիջումներով կարելի էր և կարելի է լուծել Արցախի դատը: Խորհրդային ապազգային մշակոյթի ուղեղալուացման և ժողովուրդներու եղբայրութեան առասպելին հաւատացած համայնավար միջազգայնական հօր մը ազդեցութեան տակ դաստիարակուած այս մարդը, հակառակ իր պատմաբանական ուսումին, չկրցաւ

ըմբռնել տարրականը՝ թրքական ցեղապաշտութեան անզիջող կուսակրօնութեան եօթը հարիւր տարիներու այլամերժականութիւնը և այս ցեղապաշտութեան հիմնականօրէն քանդիչ դերը Արցախեան դատի հոլովոյթին վրայ:

Հակառակ ակադեմիկոսի իր մտաւորական ենթադրելի պաշարին, որ զինք պատրաստած պէտք է որ ըլլար տեսնելու տարբեր պետութիւններու բարդ հակասութեանց մառախուղին ընդմէջէն Հայաստանի՛ ռազմավարական շահերու յստակ առաջնահերթութիւնը, Տէր-Պետրոսեան կատարելապէս խաբուեցաւ և Հայաստանը մխրճեց փոխան Արցախի անկախութեան ճանաչմամբ ամրագրուած, Արցախի միացման ռազմավարութեան, «փոխզիջողական» բանակցութիւններու երկար գործընթացի մը մէջ, ուր ամէն քայլափոխի օտար պետութիւնները Ատրպէյճանի ամբողջականութեան յանկերգը նուագեցին՝ կէտեր արձանագրելով Թուրքիոյ և Ատրպէյճանի հետ ի վնաս մեզի և ի շահ իրենց: Հայաստանը մնաց աւազախառուած Արցախի ապագայ կարգավիճակի անյստակ «սթաթուսի» որոշման յետաձգման հոլովոյթի մը մէջ: Հայաստանը կրկնեց ու կրկնեց ինքնորոշման մարդկային իրաւունքի ճշմարտութիւնը բոլորին խուլ ականջներուն: Ատրպէյճանը, պաշտպանուած անուղղակիօրէն օտար պետութիւններու կողմէ և իր դաշնակից Թուրքիոյ զօրաւոր ուղղակի աջակցութեամբ, պարզապէս մերժեց ՈՐԵՒԷ «փոխզիջում» և օրնիբուն պատրաստուեցաւ գերարդիական պատերազմի: Ուրիշ խօսքով՝ Տէր-Պետրոսեան մեր յաղթանակէն անմիջապէս ետք չորս թանկագին տարիներ մսխեց ինքնիշխանութեան սկզբունքին շուրջ բանակցութիւններով՝ առանց որևէ յաջողութեան, ինքնիշխանութիւն մը, որ Արցախը սկզբունքով արդէն իսկ ունէր խորհրդային ԼՂԻՄ-ի օրերէն, երբ մեր հարցը՝ ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ, ՊԻՏԻ ԸԼԼԱՐ ՍԿՍԵԼՈՎ ՄԵՋՄԷ, ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ՀՌՉԱԿՈՒՄ ԵՒ ՄԻԱՑՈ՛ՒՄ:

Տէր-Պետրոսեանի մօտեցումը այնքան անյաջող դարձաւ, որ ի վերջոյ իր ամէնէն մօտիկ գործընկերները իրեն կից տուին և զինք ճամբու դրին: Սակայն, հակառակ իր հրաժարականին, հայկական պետութեան առաջին ղեկավարին և անոր կողմնակից Ժիրայր Լիպարիտեանի մօտեցումները դժբախտաբար դարձան չխոստովանուած տոկմա իր յաջորդներուն

Հանրահավաք Ստեփանակերտում, 1988 թ.

համար ևս:

Ընդհանրապէս, երբ նոր պետութիւններ իրենց անդրանիկ ռազմավարական մօտեցումները կը բանաձևեն և կը դնեն պետական գործադրութեան, գնացքը կը շարժի այդ որոշակի ուղղութեամբ, և միայն հզօր յեղափոխութիւն մը կրնայ հիմնականօրէն փոխել գնացքի ուղղութիւնը: Մեր պարագային մէկը միւսին ետևէն ներպալատական փոփոխութիւններով իշխանութիւն ստանձնած Քոչարեան և Սարգսեան շարունակեցին զանազան պզտիկ տարբերութիւններով Տէր-Պետրոսեանի նոյն հիմնականօրէն սխալական մօտեցումը:

2018-ի Տէր-Պետրոսեանի գաղափարական սանիկ Փաշինեանի թաւշեայ շարժումն ալ, փաստօրէն, ո՛չ մէկ շօշափելի փոփոխութիւն բերաւ Հայաստանի հիմնականօրէն տէրպետրոսեանական արցախեան քաղաքականութեան մէջ, որ մնաց եզերուած ինքնորոշման իրաւունքի կիրարկելիութեան բանավէճով, սահմաններու ամբողջականութեան սկզբունքին ծիրին մէջ:

Հակառակ սահմաններու անձեռնմխելիութեան սկզբունքի իր չարաշահումին, քանի որ ինքնավար Արցախը Ատրպէյճանի սահմաններէն ներս կը գտնուէր, թրքական դրդումով, Ատրպէյճանը տիպականօրէն «ա լա թուրքա» հետաքրքրուած չէր որևէ միջազգային իրաւունքի սկզբունքով ընդհանրապէս: Ո՛չ ինքնավարութեան սկզբունքով (տես ԼՂԻՄ-ի լուծարումը Ատրպէյճանի կողմէ 1991-ին), ո՛չ ալ նոյնիսկ սահմաններու անձեռնմխելիութեան սկզբունքով (տես 2021-ին Հայաստանի սահմանները փոխելու իր բռնի փորձերը այս օրերուս): Սումկայիթէն Գէտաշէն և Հատրութէն Սև լիճ Ատրպէյճանը հետաքրքրուած էր և է միայն ու միայն հայութեան վտարումով և հայկական հողերու բռնի խլումով:

Հայաստանը առաջին օրէն իսկ՝ ինքնանական թուականներէն, պէտք է որ յայտարարեր ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ, որ հարցը ինքնավարութեան հարց չէր, քանզի նախկին ԼՂԻՄ-ը ինքնավար էր Արցախեան շարժման սկիզբէն առաջ, այլ Արցախի ԱՆԿԱԽԱՑՈՒՄԸ ԵՒ ՎԵՐԱՄԻԱՒՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ հետ իրրև թրքական կայսերապաշտութեան կողմէ Հայաստանի և հայութեան քանդումին ի դէմ ՀԱՅ ԴԱՏԻ լուծման հոլովոյթի ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐԸ:

Մեր պետական ղեկավարութեան սխալը ռացիոնալիզմի պակասը կամ սխալները շտկելու ժամանակ չունենալը չէր... Մեր պետական ղեկավարութեան սխալը եղաւ և է այն, որ Ատրպէյճանի հայաջնջման փորձը չդիտեց իբրև թրքական ֆաշականութեան նորովի դրսևորումը Արցախեան գոյամարտի սկիզբէն մինչև այսօր, նոյնիսկ քառասունչորս օրերու մեր ձախողութենէն ետք, ձախողութիւն մը՝ ի դիմաց թուրքական բանակի և սպայակոյտի ղեկավարային լայնամասշտաբային մասնակցութեան Ատրպէյճանի՝ Արցախի վրայ յարձակման մէջ:

Մեր պետական ղեկավարութեան սխալը երևակայելու անկարողութիւնը եղաւ. չկրցան մտքով տեսնել, որ թշնամին Ատրպէյճանը չէր միայն, և չկրցան կանխատեսել, որ 27 սեպտեմբեր 2020-ին դէմ հանդիման պիտի գտնուէինք թրքական կայսերապաշտութեան բոլոր միջոցներուն միաժամանակեայ կատարեալ շղթայազերծման:

Մինչև իսկ 15 յունիսի Շուշիի թուրք-ատրպէյճանական դաշինքի հռչակագիրէն ետք տակաւին յիմարներ կան մեր պետական ղեկավարութեան մէջ, որ չեն անդրադառնար, որ մեր վերապրումի պայքարը Արցախի մէջ պայքարն է թրքական կայսերապաշտութեան դէմ, և խաղաղութիւն ու ապահովութիւն գոյութիւն չունին և չեն կրնար ունենալ հայութեան համար այնքան ատեն, քանի դեռ վերջնական հաշուեյարդարի չէ ենթարկուած թրքական կայսերապաշտութիւնը:

Պատմութիւնը ցոյց տուաւ, որ ինքնավարութեան ու սահմանային անձեռնմխելիութեան սկզբունքներու սուտ մրցակցութեան շուրջ երկարաձգուող բանակցութիւնները թատրոն էին պարզապէս. Թուրքիան և Ատրպէյճանը լծուած էին հիմնականօրէն պատերազմի պատրաստութեան և ռազմական ամբողջարկութեան: Երբ Թուրքիոյ և Ատրպէյճանի պատերազմական պատրաստութիւնները հասան այն մակարդակին, որ պատերազմի ընթացքին յաղթական արդիւնքի հասնելու կարելիութիւնը ընդունելի հաշտյթ դարձաւ իրենց համար, ժամանակը հասած էր, և Թուրքիոյ ուղղակի մասնակցութեամբ ու ղեկավարութեամբ Ատրպէյճան յարձակեցաւ:

2020-ի վերջին մարտերուն կարևորագո՛յն ուսանելի դասը այն է, որ թրքական կայսերապաշտութիւնը երբէք չէ դադրած գործադրելէ եղեռնի շարունակութիւնը: Այդ պատճառով Հայ դատի հետապնդումը ողջ հայութեան պետական և ոչ պետական ուժերուն միակ իրատեսական ուղղութիւնն է այսո՛ր, երբ Թուրքիոյ և Ատրպէյճանի դրսևորած շարունակուող նպատակը Հայաստանը խղճալի ճամբարի մը վերածելն է: Հայութեան ուղղակիօրէն և անուղղակիօրէն շարունակուող եղեռնը դադրեցնելու ՄԻԱԿ միջոցը թրքական կայսերապաշտութեան վերջնական ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐՆ է:

2020-ի վերջին ազերի թուրքերուն ի գործ դրած բարբարոսութիւնները փաստեցին, որ Մեծ եղեռնը պատմական անցած հանգրուան չէ, այլ թրքական կայսերապաշտութեան շարունակուող քաղաքականութիւն մինչև մեր վերջը իբրև պետական ազգ:

Հայ դատի հետապնդումը, Հայոց ցեղասպանութեան ճանաչումը /Արցախի դատը «իրարմէ անկախ» ՉԵՆ...

ՆՈՅՆ պայքարն է՝ կասեցնելու այսօր ՀԱՅՈՒԹԵԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ԵՂԵՌՆԸ Արցախի մէջ:

Արցախի դատը մասնիկն է թրքական կայսերապաշտական դաւերով մասնատուած և տկարացուած Հայաստանի վերամբողջացման, և Արցախի դատի լուծումը առանձին կարելի չէ դիտել:

Ազգաջնջման շարունակուող երկդարեան ոճիրով մասնատուած Հայաստանի վերամիաւորման և եղեռնային այս ոճիրի արդարահատոյցը կարելի չէ իրագործել առանց թրքական կայսերապաշտութեան հաշուեյարդարին:

Ի՞նչ կրնայ նշանակել թրքական կայսերապաշտութեան հաշուեյարդարը: Թրքական կայսերապաշտութեան հաշուեյարդարը պատմական այն հանգրուանն է, երբ Թուրքիա կամաւոր կ՚ընդունի երկու դար երկարող հայութեան ազգաջնջումի իր մեղքը, կը համաձայնի նիւթական ու հողային հատուցման և կը հիմնագրէ իր այս պարտաւորութիւններն ու վերջնականապէս կը վանէ կայսերապաշտական ծաւալապաշտութիւնը ի վնաս հայութեան իր պետական ռազմավարութենէն: Առանց այդ հաշուեյարդարին՝ չկայ Հայ դատի և Հայ դատի արցախեան էջին վերջնական լուծում: Առանց այդ հաշուեյարդարին՝ թրքական կայսերապաշտութիւնը միշտ ալ պիտի շարունակէ փորձել խորտակել Հայաստանը, Արցախը և ընդհանրապէս հայութիւնը:

Ի՞նչ պէտք է ըլլայ մեր ուղին հիմա, որպէսզի պատճառենք թրքական կայսերապաշտութեան հաշուեյարդարը:

Նախ՝ հայ յառաջդիմական ուժերը պէտք է յաջողին համոզել ռուսական քաղաքական միտքը, որ թրքական դէպի արևելք տարածումը նոյնքան վտանգաւոր է Հայաստանի և Ռուսիոյ համար՝ անկախ մարտավարական ժամանակաւոր հարցական առաւելութենէ մը (ան ալ թերևս) այս հանգրուանին, ռուս-թրքական գործակցութիւններով արևմտեան պլոքին մէջ մակերեսային հակասութիւն ստեղծելու խաղով:

Ռուսիոյ ռազմաքաղաքական միտումներուն մէջ տակաւին գոյութիւն ունի նախկին ստալինեան քաղաքականութեան ցախաւել մնացորդ այն մօտեցումը, որ կը տեսնէ շահ Ռուսիոյ համար Արցախեան դատի օգտագործման մէջ՝ թրքական աշխարհը «սիրաշահելու» արևմտեան ծիրէն դուրս՝ Արևմուտքէն անկախ «գործընկերութիւն» ստեղծելով Թուրքիոյ և Ռուսիոյ միջև շրջանային հարցերու լուծման մէջ (Արցախ, Սուրիա, Լիպիա): Ասիկա երէկի ստալինեան կատարելապէս ձախողած սովետական քաղաքականութեան այսօրուան վիժուկն է: Այս իրականութեան մէջ բոլորովին անիրապաշտ և սխալ քաղաքականութիւնը քանի՞ անգամ պիտի ձախողի, որպէսզի Ռուսիա անդրադառնայ, որ հոդ երկարժամկէտ շահ չկայ իր համար: Ստալինեան ներշնչումով ի վնաս Արցախի թրքական աշխարհը Արևմուտքէն անջատելու սին փորձը ռազմավարական տեսակէտէ սխալ էր և սխալ է, քանի որ թրքական դէպի արևելք տարածումը միայն ու միայն Ռուսիոյ տկարացման կրնայ տանիլ (տես թրքական հակառուսական քաղաքականութիւնը Ուքրանիոյ մէջ):

Վերջապէս՝ Ռուսիա ինքնին կառուցուած է թուրանական արևելեան հրոսակացեղախումբերու ձիւնաթաղման մէջ: Ռուսիա պիտի ուզէ՞ արդեօք վերադառնալ մոսկովեան պետութեան մը իրավիճակին՝ շրջապատուած թուրանական արևելեան պետութիւններու վոհմակներով:

Հայ յառաջդիմական ուժերը հսկայական գործը ունին հիմա՛ համոզելու Քրէմլինը, որ ստալինեան ներշնչումով Թուրքիոյ սիրաշահման յոյսերով քաղաքականութիւնները ձախողած են մի՛շտ անցեալին և պիտի ձախողին ՄԻՇՏ:

Թրքական կայսերապաշտութեան միջամտութիւնը Արցախեան գոյամարտին մէջ չպէտք է որ յաջողի, այլապէս յաջորդ արարը պիտի ըլլայ Սիւնիքի կտրատումը, Սիւնիքի ընդմէջէն թուրանական հողային կապի հաստատումը:

Ժամանակն է, որ դիմագրաւենք և հակադարձենք այս կայսերապաշտութեանը՝ արձանագրելով մեր սահմանադրութեան մէջ իբրև անփոփոխելի հիմնայօդուած, որ Արցախը էր, է և պիտի ըլլայ մինչև վերջ Հայաստան: Հայաստանի նոր խորհրդարանը պէտք է վերամշակէ Հայաստանի սահմանադրութեան մէջ հայահաւաքի և հողահաւաքի հայկական արևելութեան ռազմավարութիւնները: Հայկական արևելութեան հիմնարար այս սկզբունքներուն հիման վրայ Հայաստանի սահմանադրութեան մէջ պէտք է վիմագրուի, որ Հայաստան չի կրնար ընդունիլ Թուրքիոյ և Ատրպէյճանի սահմանային ամբողջականութիւնը այնքան ատեն, քանի դեռ Թուրքիայ չէ ընդունած հայութեան ազգաջնջումի իր ոճիրը, Մեծ եղեռնը և պատրաստակամութիւն չէ յայտնած հատուցման ու հայապատկան գողցուած հողերու վերադարձին, և այնքան ատեն, քանի դեռ Արցախը իբրև Հայաստանի անբաժան մաս չէ ճանչցուած Ատրպէյճանի կողմէ:

Ի պատասխան Ալիևի յայտարարութեան, թէ ինք լուծած է Արցախի հարցը վերջնականօրէն, Հայաստանի նոր խորհրդարանը Արցախը Հայաստանի անբաժանելի մաս պէտք է հռչակէ անմիջապէս, որպէսզի Հայաստանի ցանկացած կառավարութիւն օրէնքով ստիպուած ըլլայ ըստ այնմ գործել: Հայաստանի բանակը իր վերքերը լիզելու ժամանակ չունի. պատրաստուի՛նք պատմական Արցախի մնացորդացի պաշտպանութեան:

Արցախի Հանրապետութեան անկախութեան ճանաչումը Հայաստանի կողմէ այլևս անժամանցելի է և հրատապ: Մեր դաշնակից Ռուսաստանի նախագահը ինքը ընդունեց 9 նոյեմբեր 2020-ի յայտարարութեան օրերուն, որ երբէք չէր հասկցած՝ ինչու Հայաստանը այդ քայլը ցարդ չէր առած: Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը՝ Ժան-Իվ լը Տրիանը, նոյն նոյեմբերի վերջաւորութեան Հայաստանի կողմէ Արցախի Հանրապետութեան անկախութեան ճանաչում չունենալը մատնանշեց չարափաստօրէն արդարացնելու համար, որ Ֆրանսայի կառավարութիւնը պէտք չէ ճանչնայ Արցախի անկախութիւնը:

Հիմի ի՞նչ լռենք և չառնենք այդ քայլը, երբ Ատրպէյճանի նախագահ աւազակը Սիւնիքի և Երևանի՝ ազերիական հող ըլլալու մասին կը ճառաբանէ:

Հայաստանի յառաջդիմական քաղաքական

Հայ զինվորները 44 օրյա պատերազմի ժամանակ

ուժերուն կ'իյնայ Հայաստանի խորհրդարանին մէջ այս ճանաչման օրէնսդրութեան անցման ապահովումը:

9 նոյեմբեր 2020-ի համաձայնագիրը խաղաղաբեր համաձայնութիւն չէ և չի կրնար ըլլալ այնքան ատեն, քանի դեռ Արցախը անկախ չէ Ատրպէյճանէն: Զինադադարը կրկներևոյթ է լոկ, օդացոլութիւն, միրաժ: Չորս տարիէն, ԵԹԷ ՈՉ ԱՒԵԼԻ ՇՈՒՏ, Ատրպէյճանը պիտի պահանջէ, որ ռուս զինուորները հեռանան «Ատրպէյճանի տարածքներէն», և, օգտագործելով թրքական կայսերապաշտութեան լման կարողականութիւնը և բոլոր լծակները, պիտի յարձակի *լիքուիպացնելու* Արցախը: Ձայլամի բնազդ է կարծել այլապէս: Միակ իրապաշտական մարտավարութիւնը օրնիբուն պատրաստուիլն է պատերազմի եկող յաջորդ փուլին:

Խաղաղութիւն երբէք չի կրնար ըլլալ այնքան ատեն, քանի դեռ թուրքը հայեր կը խողխողէ հայապատկան հողերու վրայ:

Մասնագէտներ, ակադեմականներ և այլք կը խօսին Արցախեան «առաջին» կամ «երկրորդ» պատերազմներուն մասին իբրև սկսուած և աւարտած պատերազմներու: Արցախեան պատերազմը դադրած չէ, չէ վերջացած և չի կրնար վերջանալ այնքան ատեն, քանի դեռ հայ ազգի պատմական իրաւունքը չէ վերահաստատուած Արցախի մէջ: Հրադադարը հանգրուան մըն է պարզապէս: Պատերազմը առանց մեր յաղթանակին աւարտած չի կրնար ըլլալ:

Փաստօրէն, զինադադար անգամ գոյութիւն չունի, աւելի ճիշդ՝ զինադադարը յարգողը մենք ենք միայն խեղճօրէն, ի գին ամէն ինչի: Թշնամին զինուած խուժումներով օրըստօրէ կը մտնէ Հայաստան, սահմանային շրջանները, քիչ մը ամէնուր, անպատիժ, մինչև իսկ… առանց հակահարուածի: Մեր պետութիւնը ՄԵՐ սահմանները պաշտպանելու համար կը դիմէ ՕՏԱՐ երկիրներու, որոնց համար ատրպէյճանական զինուած խուժումները անկարևոր «սահմանային դէպքեր» են լոկ: Ասիկա պետական մօտեցում չէ: Ցանկացած խուժում Հայաստանի սահմաններէն ներս պէտք է ստանայ ՀԱԿԱՀԱՐՈՒԱԾ և ռազմավարական արդար նախահարուած այլուր:

Թշնամին տակաւին կը պահէ պատերազմական հայ գերիներ՝ հակառակ համաձայնագրի՝ գերիներու վերադարձման պայմաններուն, և նոր գերիներ կը գերեվարէ: Հայ գերիներու վերադարձը մուրալը պետական մօտեցում չէ: Ականաքարտէսներու վաճառումը գերիներու վերադարձին համար, տկարացնելով մեր պաշտպանողական կարողութիւնը, դարձեալ սխալ մօտեցում է: Գերիները կը փոխանակուին. այդ է գերիներու հարցը լուծելու միջոցը: Մենք ալ ազերի գերիներ պէտք ունինք, և անոնց՝ մեր երկիրը խուժող զինուորները այդ փոխանակելի գերիները պէտք է որ ըլլան:

Թշնամին երբէք հոգեբանական կացութեան մէջ պէտք չէ որ ըլլայ, որ կարծէ, թէ իր յաջողութիւններով Արցախի հարցը «լուծած» է վերջնականապէս, և եթէ է, այդ տպաւորութիւնը պէտք է վերացուի: Ընդհակառակը՝ Արցախի դատը պէտք է վերածուի իր համար այնպիսի վտանգաւոր և հսկայական «գլխացաւի» մը, որ թշնամին ի՛նք ուզէ, որ Արցախը անջատուի:

Արցախի գրաւեալ շրջաններուն մէջ թշնամին հանգիստ չպէտք է մնայ Հատրութէն Շուշի, քանի որ մե՛նք հանգիստ չենք՝ արտաքսուած մեր հողերէն: Թշնամին պէտք չէ զգայ «յաղթական», «անպատիժ», քոմբրոմիսով անհետաքրքիր: Եթէ չկայ ելք ու ճար, ապա ժամանակն է՝ անհամաչափ, յեղափոխական և ի հարկին արտապետական պայքարի:

«Ատրպէյճանն» էր, է և պիտի մնայ թրքական կայսերապաշտութեան սիրաշահման նուէր արուեստական պետութիւն մը՝ հիմնուած հայկական բնակչութեան ոչնչացման ոճիրին սկզբնական մեղքին վրայ, և որ կը համախմբէ թայֆայական օպսքուրանթիսթ բռնապետութեան մը տակ, իրարու անհաւատարիմ շարք մը ցեղային ու կրօնական խմբաւորումներ, և որու միակ հարստութիւնը և գերարդիական զէնքեր գնել կարենալու միակ ազդակը քարիւղի արդիւնաբերութիւնն է (արդիւնաբերութիւն մը, որ պատմականօրէն կը պարտի հայ գործարարներու հանճարին և ջանքերուն): Յաջորդ տասնամեակներուն, երբ մարդկութիւնը անդին կ'անցնի ածխաջրածինական ուժանիթի գործածութենէն՝ մէկ կողմէ, և գոյութիւն ունեցող պաշարներու սպառումով՝ միւս կողմէ, քարիւղը պիտի դադրի ռազմավարական առաւելութիւն ըլլալէ: Քարիւղի շահերու պակսումով ժամանակի ընթացքին իր նիւթական միջոցներու նուազումով պիտի տկարանայ նոյնիսկ Ատրպէյճանի ռազմավարական դաշնակցութիւնը թուրանական միւս պետութիւններուն և մինչև իսկ Թուրքիոյ հետ, և ապագային նուազ հարուստ Ատրպէյճան մը հաւանաբար ի վիճակի պիտի չըլլայ շարունակելու գերարդիական նմանաչափ զինամատակարարումը Իսրայէլէն:

Սատարենք Ատրպէյճանի ցեղային և կրօնական ընկճուած խմբաւորումներուն քաղաքական ինքնահաստատման, որ անոնք հատու ներքին կիցերով խախտեն Ատրպէյճան խրճիթի խարխուլ հիմերը:

Արցախի հանդէպ յաջողութիւն արձանագրելու համար Ատրպէյճանը ինքզինք վերածեց վասալ նահանգի մը էրտողանեան Թուրքիոյ, բան մը, որ իր իսկ պետական շահերուն անյարիր է, և ստիպուեցաւ ընդունիլ օտար ռուսական բանակը, որ կը պաշտպանէ Արցախը Ատրպէյճանէն, և ասիկա յիմար Ալիևին «յաղթանակն» է, որու համար մսխեց քարիւղի օրըստօրէ պակսող շահերը:

Թրքական կայսերապաշտութիւնը չենք կրնար հաշուեյարդարի ենթարկել լոկ պայքարելով Արցախի մէջ այս կայսերապաշտութեան դէմ: Թրքական

կայսերապաշտութիւնը նահանջի մղելու համար ուրիշ ելք ու ճար չունինք՝ բացի պայքարը ընդարձակելէ:

Ժամանակը մեզի հետ է:

Թուրքիան չի կրնար երկարժամկէտ մնալ էրտողանեան արկածախնդրական մենատիրութեան տակ, քանի որ իր իսկ շահերը կը պահանջեն, որ ան նահանջէ ռիսկերով յղի համաթուրանական միթի երկրպագումէն:

Թուրքիա ամէն ինչ կ'ընէ ինքզինք ներկայացնելու համար իբրև համածին ազգ պետութիւն մը, երբ իրականութեան մէջ ոչինչ է, փոքր կայսրութիւն մը, ուր շարք մը ժողովուրդներ կ'ապրին թուրք իշխանաւոր ցեղախումբի լուծին տակ, և որու երկարժամկէտ վերապրումի հեռանկարը, ըստ իր ներկայ կայսերապաշտ ղեկավարութեան, «թուրք» արուեստական կոչումին մէջ ձուլումն է ներքին ժողովուրդներուն և համաթուրանական ընդլայնումը:

Մենք պէտք է քաջալերենք և սատարենք Թուրքիոյ մէջ ապրող ինքնուրոյն ժողովուրդներուն և կրօնական փոքրամասնութիւններուն ինքնութեան վերելքին ու անոնց իրաւունքներուն հաստատմանը, յատկապէս ճիգեր ներդնենք մեր ՔԻԻՐՏ եղբայրներու ղեկավարներուն քով քովի բերելու, թելադրենք, որ իրենց ուժը իրենց միութեան մէջ տեսնեն: Օգնենք, որ այս հսկայ ժողովուրդը, ցեղախումբի և վարձկանութեան մտայնութենէն ձերբազատուելով, որոշէ դառնալ ԱԶԳ և ունենայ ՀԱՅՐԵՆԻՔ հոն, ուր մեծ թիւերով է՝ անկախանալով Թուրքիայէն:

Թրքական կայսերապաշտութեան հաշուեյարդարին ամէնէն իրատեսական ուղին ԱՆԿԱԽ ՔՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ստեղծումն է: Պէտք է օգնենք մեր քիւրտ եղբայրներու ազգացման դատին: Հայաստանը չի կրնար չըլլալ, բնականաբար է' և պէտք է որ ըլլայ Թուրքիոյ մէջ քրտական պետութեան արդար գաղափարին ներշնչման փարոսը:

Իրաքի և Սուրիոյ մէջ քրտական ինքնավար շրջաններու հաստատմամբ այլևս պարզապէս ժամանակի հարց է, որ Թուրքիոյ քրտական մասսաները ուզեն առնուազն նոյնը ընել Թուրքիոյ մէջ: Ռազմավարական պայմանները վերջապէս դարձած են բարենպաստ, և Թուրքիայ ժամանակառումբին պատրոյգը մեր քիւրտ եղբայրներն են, որ պիտի վառեն:

Թրքական կայսերապաշտութիւնը մեզմէ լաւ գիտէ, որ ռազմավարական կացութիւնը վերջապէս դարձած է փոփոխական և վտանգաւոր իր համար: Ասոր համար է արդէն, որ կատաղած շան պէս կայսերապաշտական Թուրքիան յարձակեցաւ Սուրիա՝ տկարացնելու և կասեցնելու քրտական շրջանային կառավարման կառոյցը, օժանդակեց Ատրպէյճանին Արցախի մէջ, կը պահէ Կիպրոսի կէսը գրաւուած, կը սպառնայ Յունաստանին, միջամուխ է լիպիական քաղաքացիական պատերազմին մէջ և հիմա ներկայութիւն է Աֆղանիստանի մէջ:

Ապրիլ 2021-ին Հայաստանը հաստատեց հիւպատոսարան քրտական Էրպիլ քաղաքին մէջ: Վերջապէս: Բայց ո՞ւր են հայկական բանակի խորհրդականները Ղօճաւայի մէջ՝ ի դիմաց թրքական բանակին և թրքական վարձկաններուն: Սուրիոյ հայ գաղութի ֆիզիքական պաշտպանութիւնը և Թուրքիոյ կողմէ սուրիացի վարձկաններու կազմակերպումը և փոխադրութիւնը Ատրպէյճան Արցախի դէմ պատերազմին մէջ գործածութեան համար հայկական պետութեան պաշտպանողական ներկայութիւնը Ղօճաւայի մէջ անհրաժեշտ կը դարձնեն:

Թուրքիա և Ատրպէյճան միասին ռազմափորձեր ըրին Կարսի մէջ այս տարուայ ապրիլին, ուրեմն հայկական յատուկջոկատայիններն ալ ռազմափորձեր պէտք է ընեն Ղօճաւայի մէջ:

Ստեղծենք հայկական պետական յատուկ տարատեսակ կառոյցներ, ակադեմական ամպիոններ՝ շարունակական համագումարներով, համակրական կրուբներ, արտապետական կազմակերպութիւններ՝ ուղղակի գործողութեան համար և այլն: Այս բոլորը՝ ուսումնասիրելու և օգնելու համար Թուրքիոյ մէջ թրքական լուծի տակ ապրող ժողովուրդները՝ ՎԵՐԱՊՐԱԾ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ (ներառեալ կորսուած հայերը), մեր եղբայր ՔԻԻՐՏԵՐԸ, մեր եղբայր ԵԶԻՏԻՆԵՐԸ, մեր եղբայր ԱՍՈՐԻՆԵՐԸ, ԼԱԶԵՐԸ, ԱԼԵՒԻՆԵՐԸ, ՐՕՄԱՆԵՐԸ, ՉԵՐՔԷԶՆԵՐԸ:

Այս տարի Յունաստան, Կիպրոս, Եգիպտոս զինուորական համագործակցութեան պատմական համաձայնագիր կնքեցին. անընդունելիօրէն բացակայ էր Հայաստանը:

Մեր լոզունքը թող ըլլայ՝ «թրքական կայսերապաշտական չարիքի զոհեր միացէ՛ք»: ՀԱՅԱՍՏԱՆ, մեր ՔԻԻՐՏ եղբայրները, ՅՈՒՆԱՍՏԱՆ, ՅՈՅՆ ԿԻՊՐՈՍ, ՍՈՒՐԻՈՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ, ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼԻՊԻԱ, ԵԳԻՊՏՈՍ, ՄԱԻ (UAE) և այլք: Ըլլանք ղեկավար ազդակ, ձգտինք միագրել այս ուժերը թրքական ակրէսիաները դիմակայող պաշտպանողական դաշնագրութեան մէջ:

Ռազմավարական ներկայ հանգրուանը կատարելապէս աննախադէպ առիթ մը կը ստեղծէ միաւորելու շարք մը պետութիւններ և ուժեր, որ հետզհետէ աւելի վտանգաւոր կերպով կը զգան իրենց մորթին վրայ համաթուրանական չարիքի էրտողանեան հանգրուանի աւերները: Հայաստանը և հայութեան յառաջդիմական ու յեղափոխական քաղաքական ուժերը ՂԵԿԱՎԱՐ ԴԵՐ պէտք է ստանձնեն ռազմավարական դաշնագրութեան մը ստեղծման մէջ՝ վերջնականապէս թաղելու համար համաթուրանական ցեղապաշտութիւնը:

Նոյեմբեր 9-10-ի տխրահռչակ համաձայնագիրը Արցախեան «երկրորդ» պատերազմի աւարտը չէ, այլ անյաջող հանգրուան մը լոկ: Ոչ մէկ համաձայնագիր կրնայ բաժնել Հայաստանի մաս Արցախը Հայաստանէն, եթէ մենք պատրաստ ենք անկոտրում մարտունակութեան, եթէ մենք պատրաստ ենք դիմակայելու վերջնականապէս թրքական կայսերապաշտութիւնը Արցախի մէջ և Արևմտահայաստանի մէջ:

Անզիջող մարտունակութիւնը միակ ուղին է, որ կը տանի յաջողութեան ուժերու հանդէպ, որոնց նպատակը հայութեան իսպառ բնաջնջումն է:

Խաղաղութիւն անկարելի է առանց թրքական կայսերապաշտութեան հաշուեյարդարին:

Ռուսաստանը և մենք

Արտաշես Շահբազյան

Ռուսական կայսերական ինքնասիրությունը հավանաբար երբեք թույլ չի տա խոստովանել, որ 2020 թվականին Արցախի դեմ սանձազերծված պատերազմը պարտությամբ ավարտվեց ոչ միայն հայկական երկու պետությունների, այլև հենց Ռուսաստանի համար: Օրվա քաղաքաքարոզչական պահանջին ականջալուր ռուսական իշխանամերձ վերլուծական-քաղաքագիտական մտքի մի շարք ներկայացուցիչներ ներկայումս ընդունել են դժգոհ կեցվածք, թե իբր «ձանձրացանք ձեզ համար ամեն ինչ անելուց, իսկ դուք կախվել եք մեր օձիքից, կարծես հավերժ պարտական ենք ձեզ պես անշնորհակալ ազգին»: Արվում են նաև վերլուծություններ, թե իբր ժամանակն է քաղաքական հաշվարկները կառուցելու հակառակորդ կողմերի վրա: Որոշակի նպատակներով աչք վախեցնելու, հեռավորություն վերցնելու այս կեցվածքն ընդունողները գուցե կարծում են, թե դիմացի կողմը սովետական դասագրքերից այն կողմ բան չի կարդացել կամ դեռ գտնվում է մեռած, բայց չհուղարկավորված խորհրդային պատմաքաղաքական պրոպագանդայի սգո սրահում: Մնում է միայն հայտարարվի, թե Ռուսաստանը երկու հարյուր տարի զբաղված է միայն մեզ փրկելով՝ ի վնաս իր շահերի: Բայց ինքներս կհայտնվենք անհեթեթությունների դաշտում, եթե տրվենք զգացական մակարդակում պատմական իրողությունների շուրջ պարզաբանումների գայթակղությանը: Ավելի տրամաբանական է սթափորեն որդեգրել յուրաքանչյուրի համար սեփական շահերի գերակայության սկզբունքը, ինչի մասին վերջին տարիներին բազմիցս բարձրաձայնել է Ռուսաստանի ղեկավարությունը: Այս սկզբունքից բխող առաջնահերթություններին համապատասխան էլ պետք է ծրագրել և զարգացնել երկրների միջև հարաբերությունները:

Մեր տարածաշրջանում ռուսական գերակա շահն այն է, որ Կովկասը նախ և առաջ բուֆերային գոտի է, պատվար է, որը պետք է հեռու պահի Թուրքիային Ռուսաստանից, ինչպես և վերջինիս համար դառնա ճակատի երկրորդ գիծ ապագայի բոլոր անխուսափելի պատերազմների ժամանակ: Պատմական անխուսափելիությունն էլ բխում է այն իրողությունից, որ աշխարհում դժվար է գտնել հավերժ թշնամի երկու այլ պետություններ, որպիսիք են Ռուսաստանն ու Թուրքիան: Թուրքիայի համար Ռուսաստանն այն խոչընդոտն է, որը թույլ չի տալիս տիրել Կովկասին, հասնել պատմական հայրենիք, սողոսկել Ռուսաստանի թուրքացեղ ու իսլամաբնակ տարածքներ, ինչպես և ավելի լայն շառավղով տարածվել դեպի ասիական արևելք, այլ խոսքով՝ իրագործել պանթուրանական և պանթյուրքական, իսկ ժամանակակից բնորոշմամբ՝ նեոօսմանական երազանքները: Ավելին՝ վերջին շրջանում Ռուսաստանը չեզոքացրեց Ղրիմը կիսագրաված թաթարական հինգերորդ շարասյանը և, այնտեղ դիրքավորվելով, լրջորեն թուլացրեց Սև ծովում Թուրքիայի ռազմական հնարավորությունները, քթին տալով սահմանափակեց թուրքական ազդեցության տարածումը Սիրիայում և առհասարակ դաշնակցային մտերմություն է դրսևորում այնպիսի երկրների հանդեպ, որոնց նկատմամբ Թուրքիան կամ արդեն իրականացնում է բացահայտ և ոչ բացահայտ ագրեսիա, կամ դեռ չի սկսել:

Ներկա ժամանակների ամենից ցինիկ ու համարձակ մարտահրավերը թերևս Թուրքիայի ներխուժումն էր Կովկաս ժամանակակից տեխնիկական միջոցներով, սեփական և վարձկան զորամիավորումներով, ինչպես և պատերազմը ղեկավարելու գլխավոր, թեև կուլիսային դերակատարությամբ: Գայլը խորհրդանիշ ընդունած կայսերապետության հոգեբանությունն է իրենը համարել այն ամենը, ինչը ցանկալի է, կաղկանձելով նահանջել, չոքել ու սողալ, երբ հարվածում են, բայց և երբեք չհրաժարվել ուզածին հասնելու մտասևեռումից: Ապագային գայլային ախորժակով նայող այսօրվա Թուրքիան իր նեոօսմանական հավակնություններից դժվար հրաժարվի անգամ, երբ սուլթանական տեսիլքներով մտագար Էրդողանին փոխարինի մեկ ուրիշը:

2020 թվականի աշնանը ոտնձգություն թույլ տալով ռուսական ազդեցության ավանդական գոտու նկատմամբ՝ Թուրքիան անշուշտ նկատի էր առել Ռուսաստանի քաղաքական կաշկանդվածության հանգամանքը, պատերազմական գործողությունների մեջ չներքաշվելու զգուշավորությունը և այլն, բայց զարմանալի է, որ Էրդողանի հաշվարկներին համապատասխան եղավ ռուսական հակազդեցությունը՝ չնայած աշխարհաքաղաքական և ռազմավարական այն հնարավոր կորստին, որն ակնհայտ էր: Նույն Ռուսաստանը մինչ այդ ավելի մեծ համարձակություն դրսևորեց մերձավորարևելյան տարածաշրջանում, որի նկատմամբ ազդեցությունը կորցրել էր դեռևս ԽՍՀՄ փլուզման օրերին, և որն ի վերջո աշխարհաքաղաքական այնպիսի կենսական գոտի չէր նրա համար, ինչպես Կովկասը: Մյուս կողմից՝ կային նույնպիսի և ավելի հիմնավոր պատճառներ, որոնք պետք է արդարացնեին ազդեցության ավանդական գոտում նրա հակաահաբեկչական գործողությունները: Փոխարենը ռուսական ավիացիան իսլամ ահաբեկիչներին երբեմն-երբեմն հարվածում էր կովկասյան պատերազմական գոտուց հեռու գտնվող Սիրիայում, իսկ ով այդ ուղերձներից չափազանցված հետևություններ պետք է աներ, կովկասյան թատերաբեմում շարունակում էր անել այն, ինչ նպատակադրել էր: Ռուսական ոչ պաշտոնական դիվանագիտության գործառույթն իրականացնող վերլուծական կենտրոնները փորձեցին արդարացնել Արցախի շուրջ տեղի ունեցողը՝ պատճառաբանելով, թե ներքաշվելու դեպքում Ռուսաստանը կդադարեր դիտվել որպես միջնորդ և կարժանանար Ադրբեջանի հիասթափությանը: Իրականում հիասթափվող Ադրբեջանը նպատակների իրականացմանը չհասնելու դեպքում հաշտության միջնորդության խնդրանքով

վազելու էր Մոսկվա, ինչպես նախկինում:

Հարյուրամյա, երբեմնի ինտերնացիոնալ Ադրբեջան պետությունը արցախյան ագրեսիայից հետո ամբողջովին տեղափոխվեց ազդեցության թուրքական դաշտ, իսկ, որ այս դեպքում ամենահատկանշականն է, երկրի հիմնական բնակչությունը ակնհայտորեն դարձավ ռուսատյաց ու թուրքամետ: Այնպես որ Իլհամ Ալիևի մոտ կրկին ռուսական նոստալգիաներ արթնացնելը, մեծ հաշվով, նույնքան անիմաստ գործ է, որքան ենթադրելը, թե պատմաքաղաքական նախընտրությունները հստակեցրած, թուրքացեղության ինքնագիտակցությամբ ժողովրդի վերածվող հանրության մեջ հնարավոր է ռուսամետ գործիչների առաջմղումը:

Այսպիսով՝ ամենամեծ և իրական կորուստը, որ ունեցավ Ռուսաստանը անկախացման օրերից ի վեր, քաղաքական հավասարակշռություն պահպանող Ադրբեջանի նավարկումն էր թուրքական նավահանգիստ:

Ռուսաստանի անվճռականությանը հետևած ռազմավարական հաջորդ կարևոր զիջումը թույլ տալն էր, որ թուրք-ադրբեջանական տանդեմի և արևմտյան ուժերի հետ գաղտնի գործարքի մեջ գտնվող Փաշինյանը հասցնի վերջիններիս հանձնել Հադրութն ու Շուշին: Թեև նույն այդ օրերին Ռուսաստանը բավարար լծակներ ուներ զինադադար պարտադրելու պատերազմի օրերին իրենից ամբողջովին կախման մեջ հայտնված գերագույն գլխավոր հրամանատար Փաշինյանին: Ռուսաստանի ղեկավարության հորդորին չհետևելու հայտարարություններն այս դեպքում նույնքան թերահավատորեն են ընկալվում, որքան հայտարարությունը, թե Ռուսաստանն ինչ կարող էր անել, եթե Հայաստանը մինչ այդ նույնիսկ չէր ճանաչել Արցախի անկախությունը: Շատ լավ հիշողություն ունենալու կարիք չկա մտաբերելու համար, թե նույն մերձկրեմլյան քաղաքագետ-վերլուծաբաններն ու հենց միջնորդ կողմերի քաղաքական գործիչները մշտապես որքան բացասաբար են վերաբերվել այդ գաղափարին, ինչը նույնպես շատ հասկանալի է: Այդ դեպքում կարող էր բանակցությունների խաղաղ գործընթացը դուրս գալ վերահսկողությունից, և օրինակ Ռուսաստանի համար խիստ մշուշոտ կդառնար հակամարտության շփման գծում խաղաղապահի առաքելություն իրականացնելու հեռանկարը: Այլապես Ռուսաստանը կարող էր նույնիսկ գլխի գցել այն քայլի մասին, որը գոնե հայկական նախորդ ղեկավարությունները կանեին առանց վարանելու:

Իր պահանջը պարտադրելով՝ արդեն Հադրութի և մանավանդ Շուշիի անկումից հետո Ռուսաստանը կորցրեց Ադրբեջանին մնացած հարավային սահմանամերձ հատվածի նկատմամբ վերահսկողությունը, որին տեսանելի հեռանկարում վերապահվելու է աշխարհաքաղաքական կարևորագույն դերակատարություն: Ըստ էության, դրանով նա կորցրեց նաև վերահսկողությունը Ադրբեջանի նկատմամբ, որի ղեկավարության համար վաղը-մյուս օրը ավելի հեշտ կլինի բացատրել իր

Ռուս-թուրքական պատերազմ

ժողովրդին, թե ինչու չի կարող իր իշխանությունը տարածել նաև Ռուսաստանի կողմից վերահսկվող մոտ 2 հազար քառակուսի կիլոմետրանոց արցախյան միջանցքի վրա: Իսկ ռուսական զինվորական ստորաբաժանումները, անկախ իրենց քանակից ու սպառազինությունից, կարող են անընդհատ տեղաշարժվել Մարտակերտից մինչև Լաչին և հակառակ ուղղությամբ, սակայն այդ մանևրները դժվար թե որևէ կերպ ազդեն Շուշիի պատից հարավ տեղի ունեցող իրադարձությունների վրա: Այս գոտում Ռուսաստանի ազդեցությունը լրիվ չեզոքացնելու համար թուրքական զույգ պետություններին մնում է լուծել զանգեզուրյան միջանցքի հարցը, որի ուղղությամբ էլ նրանք աշխատում են ամբողջ եռանդով ու հմտորեն:

Ռուսաստանը շարունակում է Ադրբեջանի հետ լեզու գտնելու ջանքերը այն պայմաններում, երբ Հայաստանը դիտարկվում է ոչ թե առևտրի կողմ, այլ առևտրի առարկա: Նա ձգտում է ամրապնդելու խաղաղապահների կարգավիճակը, թույլ չտալու, որ Ադրբեջանն ամբողջովին հեռանա իրենից, ասելիք ունենալու Սյունիքով անցնելիք ճանապարհի կամ միջանցքի հարցում և այլն: Ռուսաստանը նաև շարունակում է առերևույթ եղբայրական հարաբերությունները Թուրքիայի հետ՝ լուծելով մարտավարական ինչ-ինչ խնդիրներ և փորձելով ձև անել, թե կարևորություն չի տալիս դիմացի կողմի պարբերաբար հրամցրած ոչ եղբայրական անակնկալներին: Առհասարակ կարելի է ամրագրել, որ դարավոր ու ոխերիմ «բարեկամության» այս թատերախաղում Ռուսաստանը լուծում է մարտավարական խնդիրներ, իսկ Թուրքիան՝ ռազմավարական: Հենց միայն արցախյան մրցասպարեզում կարելի է հաշվել, թե երկարատև ու հիմնական նշանակության ռազմավարական ինչ առավելություններ նվաճեց Թուրքիան, և մարտավարական կարճաժամկետ ինչ շահեր են ապահովում ռուսական ձեռքբերումները:

Ի դեպ, այս առումով ևս կարծես թե կրկնվում է հարյուր տարի առաջվա պատկերը: Բոլշևիկյան

հեղափոխության մոլեռանդները Լենինի գլխավորությամբ տարված իրենց հեղափոխությունը դեպի արևելք տարածելու մտասևեռմամբ և այդ ճանապարհին ամենահարմար երկիր դիտարկելով ամենաանհարմար երկիր Թուրքիան՝ պատերազմում պարտությունից հետո ծնկի եկած թշնամի պետությանը ոտքի կանգնեցրին, կատարեցին վերջինիս բոլոր քմահաճույքները: Մասնավորապես երրորդ կողմին զիջելով ցարական կայսրության մեջ գտնված և տվյալ պահին նրան չպատկանած տարածքներ՝ կարճ ժամանակ անց նրանք խաբված էին դուրս գալու արդեն ուժեղացած Թուրքիայի կողմից: Բացասաբար գնահատելով Լենինի այդ քաղաքականությունը՝ ժամանակակից Ռուսաստանը գնում է նույն կարճատև ու կասկածելի շահերի ետևից: Միևնույն ժամանակ Թուրքիան մի ձեռքը բարեկամաբար մեկնում է Ռուսաստանին, մյուս ձեռքով ՆԱՏՕ-ին հրավիրում է Կովկաս, իսկ իրականում երկուսի միջև լուծում է սեփական խնդիրները: Ավելին՝ նա հաջողությամբ փորձարկում է Ռուսաստանի համբերությունը իր նկատմամբ՝ բացահայտ թշնամական վարք դրսևորելով Ղրիմի և Ուկրաինայի ռուսաբնակ ըմբոստ շրջանների հարցում:

Սխալ կլինի եզրակացնել, թե Կովկասում ստեղծված պատկերը միայն Հայաստանի ներկայիս իշխանության օրերին ձևավորվեց: Անկախության առաջին տարիներից սկսած՝ այստեղ ակտիվորեն աշխատել է Արևմուտքը և, ինչպես համոզվում ենք, Ադրբեջանն ու Թուրքիան: Իսկ ինչպե՞ս է աշխատել Ռուսաստանը: Կարելի է ենթադրել, որ Ռուսաստանի դեսպանատունը հավանաբար անցկացնում էր յուրաքանչյուր տարվա համար պլանավորված իր հանդիպումները քաղաքական ուժերի հետ և պատուհանից հետևում էր արևմտյան դեսպանատների ակտիվ աշխատանքին: Հետևանքներից մեկն էլ այսօր Հայաստանում հակառուսական իշխանության գոյությունն է և հակառուսական տրամադրությունների աննախադեպ աճը հանրության տարբեր շերտերում: Իհարկե, այդ հակառուսականությունը ինքն իրեն չի բորբոքվում ու խորանում, և կույրն էլ կհասկանա, թե հայաստանյան ինչ ուժեր են կանգնած այդ քարոզչության ետևում: Մոռացած պատմության դասերը, մեր օրերի արցախյան ողբերգության նկատմամբ տարածաշրջանով

Արտաքսված Ղրիմի թաթարների ցույցը Կիևում

շահագրգիռ ուժերի անտարբերությունը՝ հայ ժողովուրդը սկսել է հավատալ, թե Արևմուտքն իր զորքով կգա փրկության, և իրականում սողցում է ծառի այն ճյուղը, որի վրա նստած է: Հայ ժողովուրդն այս ճանապարհով արագացնում է որպես պետական ազգ անկումը, իսկ Թուրքիան ստանում է Կովկասը մարսելուց հետո Ռուսաստանի ու Կենտրոնական Ասիայի վրա գրոհելու իրական հնարավորություն:

Այս իրավիճակից Հայաստանի փրկության առաջին պայմանը հակաազգային-օտարահպատակ իշխանությունից հնարավորինս շուտ ազատագրումն է: Ռուսաստանին ու Հայաստանին անհրաժեշտ է արմատապես և ռազմավարական մասշտաբով վերանայել գործնական փոխհարաբերությունները Կովկասի և, ինչու չէ, Մերձավոր Արևելքի ապագայի ճարտարապետության համատեքստում: Նիկոլփաշինյանական կապիտուլացված գործիչների կամազրկությունից օգտվելով՝ Ռուսաստանը կարող է դարձյալ կորզել կարճաժամկետ օգուտներ ու առավելություններ, իսկ հեռագնա նպատակներ հնարավոր է ծրագրել ազգային ու լուրջ իշխանությունների հետ, որոնք խորապես կգիտակցեն և անկեղծորեն կլծվեն ընդհանուր շահերից բխող ռազմավարական խնդիրների լուծմանը ռազմավարական գործընկերների հետ: Մեզ անհրաժեշտ է հայաստանակենտրոն անկախ, համարձակ և նախաձեռնող իշխանություն, որը հաջողությամբ կաշխատի Ռուսաստանի և առհասարակ բոլոր դաշնակիցների հետ ոչ թե հակադրությունների վրա ճարպիկ խաղեր խաղալով, այլ շահերի ու գործողությունների հստակ ու կանխատեսելի համադրումների սկզբունքով: Հայաստանը պետք է կարողանա դրսևորել իր հնարավորություններն ու առավելությունները և հետևողականորեն ընդլայնի դրանց սահմանները: Իհարկե մենք չէ, որ ուրիշներին, մասնավորապես և Ռուսաստանին, պետք է բացատրենք իրենց շահերը, բայց մենք պետք է կարողանանք փաստել այլոց շահերի հետ մեր ռազմավարական անփոփոխելի շահերի համընկնումը՝ գործնականում ապացուցելով դա և հավատ ներշնչելով մեր՝ վստահելի գործընկեր լինելու հարցում: Անվիճելի է մեկ բան՝ փոքր և մեծ տարածաշրջանները գտնվում են գլոբալ փոփոխությունների շեմին: Արցախյան վերջին պատերազմը այդ սցենարի մեջ էր մտնում, որին մասնակցեցինք՝ կորցրած մեր բոլոր դաշնակիցներին և առանց աջակցության՝ չհաշված ռուսական ռազմական օժանդակությունը:

Աշխարհաքաղաքական նոր իրողությունները այսուհետ Ռուսաստանին առնչվելու են ուղղակիորեն, և նա մեզ կդիտի կամ որպես գործընկեր, կամ առևտրի առարկա, կամ հակառակորդ: Ընտրությունը նրանն է, բայց մենք ասելիք ու անելիք ունենք, եթե իհարկե ունենք և եթե ունակ ենք համոզիչ լինելու:

Սյունիքի նկատմամբ ադրբեջանական հավակնությունները և Նախիջևանի խնդրի ազդեցությունը այդ ամենի վրա

Արտյոմ Տոնոյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

Մի անգամ՝ 2018 թ., ԵՊՀ իրանագիտության ամբիոնում Հարավային Կովկասի հարցերով մասնագիտացած իրանցի մասնագետների հետ քննարկում էինք արցախյան հակամարտության հարցում իրանական դիրքորոշումը, և իրանցի մասնագետներից մեկը մի միտք ասաց, որը 2019 թ. դեկտեմբերին գրեթե բառացի հիշել և մեջբերել եմ սոցիալական ցանցերից մեկի իմ էջում. «*Երբեմն ձեզ՝ հայերիդ, որպես հակամարտության կողմ, երբեմն էլ նաև ադրբեջանական քարոզչության ազդեցությամբ թվում է, որ արցախյան հիմնախնդիրն Ադրբեջանի համար ամենակենսական խնդիրն է, այնինչ իրականում ամենակենսականը ոչ թե Արցախն է, այլ Նախիջևանը: Արցախը այս պահին չկա իրենց համար, բայց Նախիջևանը դեռ կա, ու դեռ պետք է կարողանալ այն պահել: Քանի դեռ Նախիջևանը չունի ցամաքային սահման Ադրբեջանի հետ, պոտենցիալ կորստյան ենթակա տարածք է: Նկատի ունեցեք, որ «արցախյան հակամարտություն» կոչվողը ձեր հակառակորդների համար ընդամենը հարմար պատրվակ է իրենց թիվ մեկ խնդիրը լուծելու և հարմար առիթի դեպքում հերթական պատերազմի սանձազերծմամբ դեպի Նախիջևան տանող ցամաքային ուղի որոնելու համար»:*

Այս քննարկման ու իրանցի փորձագետի ձևակերպումների մասին հարկ եղավ հաճախ հիշել, հատկապես երբ պատերազմի ավարտից գրեթե անմիջապես հետո Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը սկսեց նախ խոսել «Զանգեզուրի միջանցքի» մասին, ապա, ի թիվս ՀՀ այլ տարածքների, «պատմական ադրբեջանական հող» անվանեց նաև Սյունիքը՝ սեփական ժողովրդին խոստանալով շուտով վերադառնալ այդ տարածքներ: Ադրբեջանական կողմն այդ ամբողջ ընթացքում չբավարարվեց միայն հայտարարություններով, այլ ձեռնարկեց նաև որոշակի իրական ու չափելի գործողություններ՝ սադրանքների դիմելով և զավթելով ՀՀ ինքնիշխան տարածքի տարբեր հատվածներ, այդ թվում նաև՝ Սյունիքի մարզում: Ավելին՝ Իլհամ Ալիևը իր իսկ կողմից «պատմական ադրբեջանական տարածք» հորջորջված Զանգեզուրի զավթման համար պատմագիտական և գաղափարական կեղծ լծակներ ստեղծելու նպատակով փոփոխություններ արեց Ադրբեջանի վարչաքաղաքական քարտեզում՝ ստեղծելով «Արևելյան Զանգեզուրի տնտեսական շրջան» անունով տարածքային միավոր, իսկ ավելի ուշ արդեն բացահայտ հայտարարեց, որ եթե կա «Արևելյան Զանգեզուր», կա նաև «Արևմտյան Զանգեզուր», որը նույնպես «պատմական ադրբեջանական տարածք է»: Ակնհայտ է, որ այստեղ ևս կիրառվում է այն հայտնի մոդելը, որը՝ որպես պանթյուրքականության և ադրբեջանական

ծավալապաշտության բաղկացուցիչ մաս, կիրառվել է և այժմ էլ շարունակում է կիրառվել ինչպես Հայաստանի, այնպես էլ Իրանի դեպքում: Եթե ՀՀ ողջ տարածքը Ադրբեջանի պատմության դասագրքերում և այդ երկրի ԳԱ պատմության ինստիտուտի հրատարակած աշխատանքներում անվանվում է «Արևմտյան Ադրբեջան», ապա Իրանի հյուսիսային տարածքները կամ պատմական Ատրպատականը ողջ Ադրբեջանում ճանաչված է որպես «Հարավային Ադրբեջան»:

Ըստ էության, ադրբեջանական կողմը պատերազմի ավարտից հետո անում է հնարավորն ու անհնարինը, անգամ սպառնում ուժի կիրառմամբ և նոր պատերազմով, որպեսզի, ի հաշիվ ՀՀ Սյունիքի մարզի, ունենա ցամաքային ուղիղ կապ Նախիջևանի Ինքնավար Հանրապետության հետ, և այդ ցամաքային ճանապարհն ունենա առնվազն միջանցքի կարգավիճակ, քանի դեռ չի հաջողվել բռնազավթել ողջ Սյունիքը:

Ալիևի հայտարարությունները Սյունիքի վերաբերյալ մեզանում հաճախ են մեկնաբանվում միակողմանիորեն, պարզ ծավալապաշտության և հակահայկականության համատեքստում, այնինչ դրանց ընդունումը դեռ չի նշանակում տեսնել խնդրի խորքը և էությունը:

ԽՍՀՄ փլուզումը և արցախյան հակամարտության ակտիվ պատերազմական փուլը, Հեյդար Ալիևի նախիջևանյան ակտիվ գործունեության շրջանը (1990-1993 թթ.) և նույն այդ ժամանակահատվածում Բաքվի անցած քաղաքական անկայունության և խոր ցնցումների փուլը ցույց տվեցին, որ Ադրբեջանի համար չլուծված խնդիր է ոչ միայն Արցախյան հարցը, այլ նաև Նախիջևանի հարցը:

Չունենալով ցամաքային սահման Ադրբեջանի հետ՝ Նախիջևանն ունի ցամաքային սահմաններ Ադրբեջանի հետ հակամարտության մեջ գտնվող Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև Իրանի Իսլամական Հանրապետության և Թուրքիայի հետ: Ընդ որում, միայն վերջին 100 տարվա ընթացքում

նշված 3 պետություններից 2-ը՝ Հայաստանը և Թուրքիան, կարողացել են պարբերաբար իրենց վերահսկողությունը հաստատել ամբողջ Նախիջևանի կամ դրա մեծ մասի վրա: Հայաստանի դեպքում դա եղել է 1919 թ. գարնանը՝ տևելով մինչև նույն տարվա հուլիսը, Թուրքիայի դեպքում՝ 1919 թ. հուլիսից մինչև Նախիջևանի խորհրդայնացումը: Փոքր-ինչ այլ է իրավիճակը Իրանի դեպքում, որը միայն 1828 թ. է զիջել Նախիջևանի խանությունը ցարական Ռուսաստանին:

Նախիջևանը խնդրահարույց է Ադրբեջանի համար մի քանի առումներով.

- Չունի ցամաքային սահման Ադրբեջանի հետ:
- Ունի ինքնավար հանրապետության կարգավիճակ, ինչը բարդացնում է այն Ադրբեջանի փաստացի վերահսկողության տակ պահելը, հատկապես երբ այնտեղ իշխանության է լինում պետական կառավարման փորձ և քաղաքական լայն հավակնություններ ունեցող առաջնորդ:
- Սահմանակցում է Իրանին և գտնվում նրա կրոնական և տնտեսական բավական ուժեղ ազդեցության տակ:
- Սահմանակցում է Թուրքիային, գտնվում նրա ոչ միայն քաղաքական և սոցիալ-տնտեսական, այլև մասամբ ռազմական ազդեցության տակ:
- Ունի ՀՀ-ի հետ ձգվող բավական երկար սահման, որի պաշտպանությունը նույնպես առանց ցամաքային սահմանի կարող է լինել բարդ առաջադրանք:

Ինքնավար հանրապետության կարգավիճակը, Ադրբեջանի հետ սահման չունենալը, Իրանի և Թուրքիայի հետ սահմանակցությունը և ուղիղ շփումները, ի տարբերություն ԱՀ վարչական և անգամ տնտեսական շրջանների, Նախիջևանին կենտրոնի հետ հարաբերություններում դարձնում են բավական տարբեր և նույն այդ կենտրոնից անկախ գործող: Այդպիսին էր իրավիճակը նախկինում, որոշակի տարբերություններով այդպիսին է նաև այսօր:

Հեյդար Ալիևը 1990-1993 թթ., երբ Նախիջևանի խորհրդարանի նախագահն էր, Նախիջևանում շատ դեպքերում վարում էր կենտրոնից անկախ և որևէ կերպ Բաքվի հետ չհամաձայնեցված քաղաքականություն, կատարում պաշտոնական այցեր հարևան երկրներ, կնքում պայմանագրեր, վերցնում դրամական վարկեր՝ չունենալով Բաքվի ոչ համաձայնությունը, ոչ թույլտվությունը: Հեյդար Ալիևի այդ թվականների հարցազրույցներն ու հետագա հուշերը այդ շրջանի մասին բացահայտ ցույց են տալիս Նախիջևանի դե ֆակտո անկախությունը և Հեյդար Ալիևի վարած անկախ քաղաքականությունը Նախիջևանի բոլոր հարևանների, այդ թվում՝ ՀՀ-ի նկատմամբ: Օրինակ՝ 1993 թ. օգոստոսի 10-ին «Собеседник» թերթի թղթակցին տված հարցազրույցի ժամանակ Հեյդար Ալիևը այն հարցին, թե ինչպես է իրեն հաջողվել Նախիջևանը զերծ պահել Հայաստանի հետ զինված հակամարտության մեջ մտնելուց, պատասխանել է. *«Ես մշտապես շփման մեջ էի Հայաստանի ղեկավարության հետ, և ինձ հաջողվեց նրանց հետ ընդհանուր լեզու գտնել: Նախիջևանցիները ինձ հենց այդպես էլ ասացին, որ պատրաստ են դիմանալու թե՛ սովին, թե՛ ցրտին, միայն թե չպատերազմեն»:*

1999 թ. հոկտեմբերին մեկ այլ առիթով Հեյդար Ալիևն անդրադարձել է նաև Նախիջևանում եղած ժամանակ իր ունեցած հարաբերություններին Իրանի և Թուրքիայի հետ՝ մասնավորապես նշելով. *«Ես մի քանի անգամ Թուրքիա գնացի: Արտասովոր բան էր, բայց Թուրքիայի այն ժամանակվա վարչապետ Սուլեյման Դեմիրելը որոշում ընդունեց 100 միլիոն դոլար վարկ տրամադրելու Նախիջևանին, որպեսզի դրանով պարեն գնվի և բերվի Նախիջևան: Դա մեզ համար փրկություն էր: Սակայն Ադրբեջանում այդ ժամանակ իշխանությունը ԱԺՃԿ-ի ձեռքերում էր: Նախիջևանում գտնվող նրանց ներկայացուցիչները սրան դեմ հանդես եկան: Նրանք ինձ հարցնում էին, թե ինչպես և երբ եմ վերադարձնելու այդ վարկերը, արդյոք դա հետո Ադրբեջանի հաշվին եմ վերադարձնելու: Ասացի. «Եղբայր, քո ինչ գործն է, քո փորն ինչո՞ւ է ցավում, թե մենք ինչպես ենք դա վերադարձնելու»: Ես գիտեի, որ դա վարկի անվան տակ տրվել է մեզ որպես օգնություն: Այլ կերպ չէր կարող լինել: Դա մեր հանդեպ Թուրքիայի վերաբերմունքի մի դրսևորում էր: Ադրբեջանի ղեկավարներն այն ժամանակ իմ մասին այստեղ-այնտեղ ինչեր ասես, որ չէին խոսում: Ասում էին՝ Հեյդար Ալիևը քանդում է մեր պետականությունը, գնում է Թուրքիա, ինքնագլուխ վարկ վերցնում, ինքնագլուխ բաներ անում:*

Հետո ես գնացի Իրան: Գնալուցս առաջ բանակցեցինք, Իրանից էլեկտրաէներգիայի գիծ քաշեցինք: Դա էլ ծանր պայմաններում եղավ...

Ես գնացի Իրան, որ Նախիջևանի փրկության համար մի օգնություն ձեռք բերեմ: Երբ գնացի այնտեղ, Ադրբեջանի ԱԳ նախարար Թոֆիգ Գասիմովը Իրանին նոտա ուղարկեց, թե «դուք խախտում եք պետական կարգը, Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը չունի իրավասություն՝ անկախ արտաքին քաղաքականություն վարելու: Դուք նախագահական ինքնաթիռ եք ուղարկել Նախիջևան

և Հեյդար Ալիևին փարել եք Թեհրան»:

Հենց հասա Իրան, երկրորդ օրը այդ նույան ինձ ցույց փվեցին: Ջարմանք արտահայտեցի: Ասացին, որ «թող նրանք գնան գրողի ծոցը, մենք լավ գիտենք մեր անելիքը, Նախիջևանում մեր եղբայրներն են ապրում»»:

Հետևաբար Սյունիքի հանդեպ Ադրբեջանի հավակնությունների ու ոտնձգությունների խորքում ընկած հիմնական պատճառը ոչ միայն և ոչ այնքան Հայաստանից պարզապես նոր տարածքներ պոկելն է, որքան Նախիջևանի հետագա կարգավիճակի և այդ տարածքը Ադրբեջանի վերահսկողության տակ պահելու հարցի լուծումը: Իլհամ Ալիևը չունի որևէ երաշխիք, որ վաղը Նախիջևանում չի կրկնվի այն, ինչ տեղի է ունեցել 1991-1993 թթ.՝ իր հոր ղեկավարման տարիներին, երբ Նախիջևանը փաստացիորեն դուրս էր եկել Ադրբեջանի վերահսկողությունից: Այդ սցենարի կրկնության հարցն այնքան նուրբ է ու Ադրբեջանի համար այնքան վտանգավոր, որ Իլհամ Ալիևը չհամարձակվեց անգամ թոշակի ուղարկել Վասիֆ Թալիբովին այն դեպքում, երբ 2 տարի առաջ բուն Ադրբեջանում ազատվեց, այսպես կոչված, բոլոր «հինգվարդիականներից»: Դժվար չէ կռահել, թե ինչպես էր արձագանքելու Վասիֆ Թալիբովը, եթե Ալիևը որոշեր նրան էլ արժանացնել Ռամիզ Մեհդիևի ու մյուսների ճակատագրին:

Նախիջևանին հատուկ են երևույթներ, որոնք մշտապես ԱՀ հասարակական-քաղաքական տարբեր կազմակերպությունների և լրագրողների ուշադրության կենտրոնում են: Դրանցից են, օրինակ.

- Խորհրդարանի նախագահ Վասիֆ Թալիբովի, նրա որդու և այդ կլանի միահեծան իշխանությունը Նախիջևանում և հսկայական ֆինանսական միջոցների, տնտեսական կառույցների տիրապետումը:
- ՆԻՀ առանձին համազորային բանակի հրամանատար Քյարամ Մուստաֆաևի և նրա թիմի մեծ ազդեցությունը Նախիջևանի ողջ տարածքում:
- Եվ Նախիջևանում, և՛ ՆԻՀ առանձին համազորային բանակում տիրող իրավիճակը բացասական իմաստով էականորեն տարբեր է Ադրբեջանի մնացած տարածքում և ԱՀ ԶՈՒ-ում տիրող իրավիճակից: Համարվում է, որ Նախիջևանում հաստատված բռնատիրական կարգերն իրենց

բռնվանդակությամբ գերազանցում են ալիևյան բռնատիրությանը:

Մյուս հետաքրքրական փաստն այն է, որ Ադրբեջանում թե՛ քաղաքական, թե՛ հասարակական տարբեր շրջանակներ ունեն վախեր առ այն, որ Նախիջևանում կարող է ամեն պահի տեղի ունենալ շրջադարձային փոփոխություն, անցկացվել անկախության հանրաքվե և հռչակվել Ադրբեջանից բացարձակ անկախությունը: Այս թեմայով խոսակցությունները ակտիվացել էին հատկապես 2020 թ. մայիս-հունիս ամիսներին, և այդպիսի վտանգի մասին հեռուստատեսային մի քանի հարցազրույցների միջոցով ակտիվորեն բարձրաձայնում էր Ադրբեջանի լիբերալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդ Ֆուադ Ալիևը՝ ընդգծելով, որ նման սցենարի դեպքում դրանում մեծ է լինելու արտաքին ուժերի դերը, և հենց արտաքին ուժերի կողմից է հնարավոր նմանատիպ գործընթացի հրահրումն ու իրականացումը:

Ամփոփելով պետք է ընդգծել, որ 44-օրյա պատերազմից հետո ՀՀ տարածքների, հատկապես Սյունիքի հանդեպ դրսևորվող ադրբեջանական սուր հավակնությունները, տարածքային պահանջների առաջքաշումը, դրանց համար գաղափարական և պատմական հիմքերի ակտիվ փնտրտուքը պետք է դիտարկել ոչ միայն Ադրբեջանի պարզ ծավալապաշտության և հակահայկական քաղաքականության, ինչպես նաև պատերազմից հետո բացված ախորժակի համատեքստում, այլև ԱՀ տարածքային խնդիրների և այդ տարածքների հետագա կարգավիճակի հեռանկարների ու ռիսկերի, դրանցից բխող խնդիրների շրջանակներում: ■

Լիբանան. անդունդ գլորվող մերձավորարևելյան Շվեյցարիան

Արմեն Պետրոսյան
Արևելագետ, տարածաշրջանային հարցերով փորձագետ

Օգոստոսի 4-ը առաջին տարելիցի օրն է Բեյրութի նավահանգստի ողբերգական պայթյունի, որը պատճառ էր դարձել ավելի քան 200 մարդու մահվան, շուրջ 8000-ի վիրավորման, նյութական հսկայական վնասի: Աղետի առաջին տարելիցը լիբանանցի ժողովուրդը ոգեկոչեց նաև դրա հետևանքով արդեն 1 տարի շարունակվող ներքաղաքական, սոցիալ-տնտեսական, ֆինանսաբանկային, պարենային, առողջապահական և, ավա՛ղ, արդարադատության լրջագույն ճգնաժամի պայմաններում, քանի որ մինչ օրս հանցավոր անփութության իրական մեղավորներից որևէ մեկը պատասխանատվության չի ենթարկվել, այն դեպքում, երբ պայթյունից օրեր անց՝ օգոստոսի 10-ին, վարչապետի պաշտոնից հրաժարական ներկայացրած Հասան Դիաբը և նրա կառավարությունը խոստացել էին հանցագործությունը բացահայտել հաշված օրերի ընթացքում:

Պայթյունի պատճառով ավելի ակտիվացան դեռևս 2019թ. հոկտեմբերի 17-ից բռնկված համաժողովրդական բողոքի գործողությունները: Ցուցարարների շարքերը համալրեցին նաև զոհերի և վիրավորների հարազատները, որոնք սոցիալ-տնտեսական, քաղաքական, առողջապահական պահանջներին ավելացրին նաև պայթյունի հետաքննության, արդարության ամրագրման պահանջը: Մեկ անգամ չէ, որ նման գործողությունները, դուրս գալով վերահսկողությունից, վերաճել են զանգվածային բախումների ցուցարարների ու իրավապահների, իսկ, որ ավելի վտանգավոր է, տարբեր համայնքների ներկայացուցիչների միջև: Դիաբի կառավարության հրաժարականից շուրջ 1 տարի անց Լիբանանի քաղաքական ուժերին դեռևս չի հաջողվել նոր կառավարություն ձևավորել: Նախ Գերմանիայում Լիբանանի դեսպան Մուստաֆա Ադիբը (2020 թ. օգոստոսի 31-ից շուրջ մեկ ամիս), ապանախկին վարչապետ Սաադ Հարիրին (հոկտեմբերի 22-ից սկսած մոտ 9 ամիս),տարաբնույթխորքային խնդիրներին հանդիմանապարդյուն ջանքերից հետո այդպես էլ չկարողանալով նոր կառավարություն ձևավորել,հրաժարվեցին վարչապետի պաշտոնից:

Կառավարության ձևավորման հերթական փորձը

2021 թ. հուլիսի 26-ին Լիբանանի նախագահ Միշել Աունը նոր խորհրդակցություններից հետոնշանակեց վերջին 1 տարվա ընթացքում վարչապետի արդեն երրորդ թեկնածուին՝ ծագումով Տրիպոլիից, դավանանքով սուննի մուսուլման (ըստ երկրի Սահմանադրության՝ պարտադիր պայման) Նաջիբ Միկաթիին: Մեկ օր անց Լիբանանի խորհրդարանը ձայների մեծամասնությամբ (118 պատգամավորներից 72 կողմ) հաստատեց նրա թեկնածությունը:Հարկ է նշել, որ Միկաթիի թեկնածությունը չպաշտպանած 42 պատգամավորների թվում էին նաև ՀՅԴ ներկայացուցիչները:

Պաշտոնը ստանձնելուց հետո Միկաթին հայտարարեց, որ, Սահմանադրության համաձայն, ինքը պետք է ստանա պատգամավորների վստահության քվեն, սակայն իրականում իր նպատակն է ստանալ ժողովրդի վստահության քվեն, որովհետևչունի կախարդական փայտիկ և հրաշքներ գործել չի կարող: Լիբանանի նոր վարչապետի մտահոգությունը բավականաչափ օբյեկտիվ է, քանի որ երկիրը հայտնվել է բազմաշերտ ճգնաժամում:

Համաշխարհային բանկը 2021 թ. ապրիլ ամսվա իր զեկույցում Լիբանանի ներկայիս տնտեսական փլուզումը դասակարգել է 19-րդ դարի կեսերից ի վեր վատթարագույն ճգնաժամերի տասնյակում, գուցե անգամ եռյակում: Լիբանանի ՀՆԱ-ն 2020 թ. նվազել է 20 %-ով և հասել 33 միլիարդ դոլարի շեմին: Պետական պարտքը մոտենում է 100 միլիարդ դոլարի կառավարության անպատասխանատու վարկային քաղաքականության հետևանքով: Ազգային արժույթի փոխարժեքը 2019 թ.-ից նվազել է 90 %-ով և հուլիսի սկզբին հասել մեկ դոլարի դիմաց 18 հազար լիրայի: Լիբանանում առկա է սպառողական ապրանքների հարցում ժողովրդի գնողունակության խիստ անկման, իսկ բնակչության որոշ շերտերի համար՝ նաև սովի իրական հեռանկար, քանի որ երկիրը ներմուծում է առաջին անհրաժեշտության ապրանքների 85 %-ը: Մինչդեռ երկրի կենտրոնական բանկը (Banque du Liban) ունի ընդամենը 15 միլիարդ դոլարի արժութային պահուստներ: Աննախադեպ չափերի է հասել նաև աղքատությունը: Ներկայումս լիբանանցիների 45 %-ն աղքատ է, իսկ երկրի բնակչության 22 %-ի կենսամակարդակը ցածր է աղքատության շեմից: COVID-19 համավարակով պայմանավորված՝ դեղորայքի պակասը խորացրել է առողջապահական ճգնաժամը: Իսկ դիզելային վառելիքի ներկրման հարցում ծագած դժվարությունները ոչ միայն կենցաղային խնդիրների, այլև էներգամատակարարման համակարգում կոլապսի պատճառ են դարձել: Բացի նշվածներից՝ միջազգային կառույցները առաջիկայում Լիբանանի համար կանխատեսում են նաև խմելու ջրի ճգնաժամ:

Ինչ խոսք, վարչապետի պաշտոնում Միկաթիի նշանակումը և նոր կառավարության ձևավորման հնարավորությամբ պայմանավորված որոշակի լավատեսության ու վստահության մթնոլորտը դրական

ազդեցություն ունեցան նաև ֆինանսատնտեսական ոլորտի վրա: Մասնավորապես, լիբանանյան լիրան կրկին վերարժևորվեց՝ ամերիկյան դոլարի դիմաց 24 հազարից նվազելով 15 հազարի, ապա դարձյալ աճելով մինչև 18 հազարի սահմանը:

65-ամյա քաղաքական գործիչ և Լիբանանի ամենահարուստ գործարարներից մեկը՝ Միկաթին, արդեն երկու անգամ ղեկավարել է Լիբանանի կառավարությունը՝ 2005 թ. նախկին վարչապետ Ռ. Հարիրիի սպանությունից հետո առաջացած խոր ճգնաժամի և 2011-2014 թթ. հարևան Սիրիայում հակամարտության թեժացման շրջանում: Հարկ է նշել, որ Միկաթին, ի տարբերություն լիբանանցի շատ առաջնորդների, չի պատկանում որևէ քաղաքական դաշինքի կամ ընտանիքի: Սակայն քաղաքական ներգրավվածությունից դուրս արհեստավարժների ազգային համաձայնության կառավարության ձևավորման հարցում նա, ինչպես իր իրավանախորդները, արդեն իսկ բախվում է լուրջ մարտահրավերների՝ լիբանանյան կառավարման համակարգի առանձնահատկություններով պայմանավորված, որոնք զգալի կշիռ ունեն կործանարար բազմաշերտ ճգնաժամում:

Կառավարման և քաղաքական համակարգերի ճգնաժամը

2021 թ. հուլիսի 26-ին Լիբանանի նախագահ Միշել Աունը նոր խորհրդակցություններից հետո նշանակեց վերջին 1 տարվա ընթացքում վարչապետի արդեն երրորդ թեկնածուին՝ ծագումով Տրիպոլիից, դավանանքով սունի մուսուլման (ըստ երկրի Սահմանադրության՝ պարտադիր պայման) Նաջիբ Միկաթիին: Մեկ օր անց Լիբանանի խորհրդարանը ձայների մեծամասնությամբ (118 պատգամավորներից 72 կողմ) հաստատեց նրա թեկնածությունը: Հարկ է նշել, որ Միկաթիի թեկնածությունը չպաշտպանած 42 պատգամավորների թվում էին նաև ՀՅԴ ներկայացուցիչները:

Պաշտոնը ստանձնելուց հետո Միկաթին հայտարարեց, որ, Սահմանադրության համաձայն, ինքը պետք է ստանա պատգամավորների վստահության քվեն, սակայն իրականում իր նպատակն է ստանալ ժողովրդի վստահության քվեն, որովհետև չունի կախարդական փայտիկ և հրաշքներ գործել չի կարող: Լիբանանի նոր վարչապետի մտահոգությունը բավականաչափ օբյեկտիվ է, քանի որ երկիրը հայտնվել է բազմաշերտ ճգնաժամում:

Հանրահավաք Բեյրութում

Համաշխարհային բանկը 2021 թ. ապրիլ ամսվա իր զեկույցում Լիբանանի ներկայիս տնտեսական փլուզումը դասակարգել է 19-րդ դարի կեսերից ի վեր վատթարագույն ճգնաժամերի տասնյակում, գուցե անգամ եռյակում: Լիբանանի ՀՆԱ-ն 2020 թ. նվազել է 20 %-ով և հասել 33 միլիարդ դոլարի շեմին: Պետական պարտքը մոտենում է 100 միլիարդ դոլարի կառավարության անպատասխանատու վարկային քաղաքականության հետևանքով: Ազգային արժույթի փոխարժեքը 2019 թ.-ից նվազել է 90 %-ով և հուլիսի սկզբին հասել մեկ դոլարի դիմաց 18 հազար լիրայի: Լիբանանում առկա է սպառողական ապրանքների հարցում ժողովրդի գնողունակության խիստ անկման, իսկ բնակչության որոշ շերտերի համար՝ նաև սովի իրական հեռանկար, քանի որ երկիրը ներմուծում է առաջին անհրաժեշտության ապրանքների 85 %-ը: Մինչդեռ երկրի կենտրոնական բանկը (Banque du Liban) ունի ընդամենը 15 միլիարդ դոլարի արժութային պահուստներ: Աննախադեպ չափերի է հասել նաև աղքատությունը: Ներկայումս լիբանանցիների 45 %-ն աղքատ է, իսկ երկրի բնակչության 22%-ի կենսամակարդակը ցածր է աղքատության շեմից: COVID-19 համավարակով պայմանավորված՝ դեղորայքի պակասը խորացրել է առողջապահական ճգնաժամը: Իսկ դիզելային վառելիքի ներկրման հարցում ծագած դժվարությունները ոչ միայն կենցաղային խնդիրների, այլև էներգամատակարարման համակարգում կոլապսի պատճառ են դարձել: Բացի նշվածներից՝ միջազգային կառույցները առաջիկայում Լիբանանի համար կանխատեսում են նաև խմելու ջրի ճգնաժամ:

Ինչ խոսք, վարչապետի պաշտոնում Միկաթիի նշանակումը և նոր կառավարության ձևավորման հնարավորությամբ պայմանավորված որոշակի լավատեսության ու վստահության մթնոլորտը դրական ազդեցություն ունեցան նաև ֆինանսատնտեսական ոլորտի վրա: Մասնավորապես, լիբանանյան լիրան կրկին վերարժևորվեց՝ ամերիկյան դոլարի դիմաց 24 հազարից նվազելով 15 հազարի, ապա դարձյալ աճելով մինչև 18 հազարի սահմանը:

65-ամյա քաղաքական գործիչ և Լիբանանի ամենահարուստ գործարարներից մեկը՝ Միկաթին, արդեն երկու անգամ ղեկավարել է Լիբանանի կառավարությունը՝ 2005 թ. նախկին վարչապետ Ռ. Հարիրիի սպանությունից հետո առաջացած խոր ճգնաժամի և 2011-2014 թթ. հարևան Սիրիայում հակամարտության թեժացման շրջանում: Հարկ է նշել, որ Միկաթին, ի տարբերություն լիբանանցի շատ առաջնորդների, չի պատկանում որևէ քաղաքական դաշինքի կամ ընտանիքի: Սակայն քաղաքական ներգրավվածությունից դուրս արհեստավարժների ազգային համաձայնության կառավարության ձևավորման հարցում նա, ինչպես իր իրավանախորդները, արդենիսկ բախվում է լուրջ մարտահրավերների՝ լիբանանյան կառավարման համակարգի առանձնահատկություններով պայմանա-

վորված, որոնք զգալի կշիռ ունենկ ործանարար բազմաշերտ ճգնաժամում:

Կառավարման և քաղաքական համակարգերի ճգնաժամը

Լիբանանում գործող պետական կառավարման համակարգը համայնքային է: Այն արտացոլում է լիբանանյան հասարակության բազմաշերտ կառուցվածքը՝ կազմված էթնոդավանական տարբեր խմբերից: Այդ համայնքային սկզբունքի հիման վրա էլ 15-ամյա քաղաքացիական պատերազմից (1975 - 1990 թթ.) հետո հաստատվել է ներկայիս սահմանադրական կարգը, որի հիմքում քաղաքական հավասարակշռությունն է: Ըստ այդ կարգի՝ յուրաքանչյուր կրոնական համայնք Լիբանանի հասարակության մեջ ունեցած տեսակարար կշռին համապատասխան ներկայացվածություն ունի պետական իշխանության մարմիններում: Այսպես՝ երկրի նախագահի պաշտոնը մշտապես զբաղեցնում է մարոնի քրիստոնյա, խորհրդարանի նախագահինը՝ շիա, վարչապետինը՝ սուննի մուսուլմանական համայնքի ներկայացուցիչ. նույն սկզբունքով էլ բաշխված են տեղերն օրենսդիր մարմնում:

Այդուհանդերձ, տասնամյակներ շարունակ Լիբանանում իշխող առանցքային քաղաքական ուժերն ու գործիչներն իրենց ձեռքում են կուտակել նաև երկրի տնտեսական կապիտալի պատկառելի բաժինը՝ վերահսկելով հիմնական դրամական հոսքերը, ինչի հետևանքով երկիրը կուտակել է հսկայական պետական պարտք (90 մլրդ դոլար կամ ՀՆԱ-ի 150 %-ը) և կանգնել ֆինանսական խոր ճգնաժամի առջև: Երկրի մի շարք կարևոր պաշտոններ ասես սեփականաշնորհվել են որոշ գործիչների կամ ընտանիքների կողմից: Լիբանանի բարձրագույն իշխանությունը, գործող քաղաքական ուժերը կորցրել են վստահությունը հասարակության մի ստվար հատվածի շրջանում:

Լիբանանյան քաղաքական համակարգի կարևոր առանձնահատկություններից մեկն էլ արտաքին դերակատարների ազդեցությունն է ներքին գործընթացների վրա: Բանն այն է, որ երկրի ազդեցիկ կրոնական համայնքներն ունեն սեփական արտաքին հովանավորները, իսկ վերջինների փոխհարաբերությունների բնույթն ուղղակիորեն արտացոլվում է նաև Լիբանանի տարածքում: Այսպես՝ քրիստոնյա մարոնիների հովանավորը հիմնականում Ֆրանսիան է, սուննի մուսուլմաններինը՝ Սաուդյան Արաբիան, շիաներինը՝ Իրանը: Ներկայում շարունակվող Էր-Ռիադ-Թեհրան, Արևմուտք-Իրան, Իսրայել-Իրան հակասություններն էականորեն դրսևորվում են նաև Լիբանանի տարածքում՝ միտված իրանամետ «Հիզբալլահ» կրոնաքաղաքական կառույցի ազդեցության զգալի սահմանափակմանը: Այս իրողությունները հավելյալ բարդություններ են ստեղծում կառավարության ձևավորման շուրջ ներլիբանանյան բանակցային գործընթացի համար:Խնդիրն այն է, որ ստեղծված բազմաշերտ ճգնաժամի հաղթահարման համար Լիբանանին անհրաժեշտ է ֆինանսական զգալի աջակցություն, որի ցուցաբերման համար հնարավոր հովանավորները ներկայացնում են հստակ նախապայմաններ, որոնց առանցքում դարձյալ Իրանի

Բեյրութի նավահանգստի պայթյունը

ազդեցության հնարավորինս չեզոքացումն է:

Ներքաղաքական ճգնաժամի ընթացքը

Լիբանանում ներքաղաքական ճգնաժամը սկիզբ էր առել դեռևս 2019 թ. հոկտեմբերի 17-ից՝ պայմանավորված համաժողովրդական խաղաղ ցույցերով և բողոքի այլ գործողություններով: Դրանց համար առիթ էր հանդիսացել կառավարության հարկային քաղաքականությունը, մասնավորապես՝ «WhatsApp»-ի և այլ մեսինջերների ծառայությունների դիմաց ամսական 6 դոլար հարկ սահմանելու վերաբերյալ որոշումը: Թեև ավելի ուշ իշխանությունները չեղարկեցին այդ որոշումը, սակայն բողոքի գործողություններն այդպես էլ չդադարեցին: Իր բնույթով քաղաքացիական, խաղաղ և միասնական շարժման մասնակիցները պահանջում էին կառավարության հրաժարականը, սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում, կոռուպցիայի և ապօրինի հարստացման դեմ արմատական պայքար, հափշտակված ֆինանսական միջոցների վերադարձ, արդարություն և այլն:

Քաղաքացիական խաղաղ շարժման արդարացի պահանջները ճգնաժամի տարբեր շրջափուլերում ստացան քաղաքական երանգներ՝ պարունակելով նախ կառավարության, ապա իշխանության բոլոր ճյուղերի հրաժարականի, նոր սահմանադրության ընդունման, դրա միջոցով Լիբանանում գործող կառավարման համայնքային համակարգի վերացման և նոր՝ քաղաքացիական, գաղափարական-քաղաքական համակարգի հիման վրա իշխանության ճյուղերի ձևավորման կոչեր և այլն: Քաղաքացիական շարժումը չուներ մեկ ընդհանուր առաջնորդ կամ համակարգող թիմ, հետևաբար նրա պահանջների հիմնական հասցեատերը դարձյալ երկրում իշխող քաղաքական ուժերն էին: Իսկ ներկայացվող պահանջների տրամաբանությունը հետևյալն էր. պետք է ձևավորվեր նոր՝ որևէ քաղաքական կախվածությունից զերծ արհեստավարժների անցումային կառավարություն, որը պետք է մշակեր նոր սահմանադրություն, հարակից օրենքներ՝ դուրս համայնքային համակարգից, դրանց հիման վրա էլ պետք է անցկացվեին խորհրդարանական ընտրություններ, և ձևավորվեր նոր իշխանություն:

2019 թ. հոկտեմբերի 29-ին վարչապետ Սաադ Հարիրին և նրա գլխավորած կոալիցիոն կառավարությունը հրաժարական տվեցին: Դրանից հետո լիբանանյան

իշխանությունները, հիմնական քաղաքական ուժերը փորձում էին գտնել ստեղծված իրավիճակից դուրս գալու ելքեր, կառավարության ղեկավարի ընդունելի թեկնածուներ, որոնք կտրականապես մերժվեցին ժողովրդական շարժման մասնակիցների կողմից, որոնք ցանկանում էին կառավարության ղեկին տեսնել նոր՝ գործող համակարգի և հիմնական քաղաքական ուժերի հետ կապեր չունեցող գործչի:

Ի վերջո, դեկտեմբերի 19-ին նախագահ Միշել Աունը հիմնական քաղաքական ուժերի հետ տևական խորհրդակցություններից հետո վարչապետի պաշտոնում նշանակեց ինժեներ, Բեյրութի Ամերիկյան համալսարանի պրոֆեսոր, 2011-2014 թթ. կրթության նախարարի պաշտոնը զբաղեցրած անկախ քաղաքական գործիչ Հասան Դիաբին, իսկ հունվարի 21-ին՝ տևական ծանր բանակցություններից, կողմակի տարաբնույթ խոչընդոտներ հաղթահարելուց հետո, Դիաբին ի վերջո հաջողվեց ձևավորել 20 նախարարությունից կազմված մասնագետների կառավարություն (այդ թվում՝ 6 կին, բողոքի ակցիայի մասնակիցներ), որում նախարարական պորտֆելների բաշխումը, սակայն, դարձյալ հիմնված էր համայնքային հավասարակշռության վրա: Ասել է թե՝ եթե նոր կառավարությունը ձևով համապատասխանում էր համաժողովրդական շարժման պահանջներին, ապա բովանդակությամբ՝ ոչ: Ուստի սպասելի էր, որ այն ևս չէր կարող բացարձակ աջակցություն վայելել հասարակության շրջանում:Այդ կառավարությունն ընդամենը 7 ամսվա կյանք ունեցավ՝ կորոնաճգնաժամի հետևանքով առաջացած օբյեկտիվ խնդիրների պատճառո և հատկապես Բեյրութի նավահանգստում պայթյունից հետո ներկայացնելով հրաժարական:

Այնուհետև վարչապետի պաշտոնում նշանակված և՛ Գերմանիայում Լիբանանի դեսպան Մուստաֆա Ադիբը, և՛ նախկին վարչապետ Սաադ Հարիրին, դարձյալ քաղաքական քվոտայով հիմնականում մասնագետների կառավարություն ձևավորելու գործընթացում բախվելով նույնաբնույթ խնդիրների, անցած շուրջ 1 տարվա ընթացքում այդպես էլ չկարողացան համաձայնության գալ նախագահ Աունի և մյուս առանցքային քաղաքական ուժերի հետ: Բանն այն է, որ մարոնական համայնքի ներկայացուցիչներ նախագահ Միշել Աունը և «Ազատ հայրենասիրական շարժման» առաջնորդ Ջիբրան Բասիլը պնդում էին, որ նոր կառավարությունում նախագահը ունենա արգելափակող 1/3 ներկայացվածություն, ինչը մեծապես թուլացնելու էր վարչապետի դիրքերը:

Կուտակված խնդիրները լուծելու հարցում ձևավորվելիք նոր կառավարության հաջողելը, վստահաբար, խիստ կասկածելի է: Ամենայն հավանականությամբ, կազմավորվելու դեպքում նոր կառավարության գլխավոր գործառույթը լինելուէ անցումային տրամաբանությամբ ընդամենը մի քանի ամիս անց՝ 2022 թ. գարնանը, երկիրը հերթական խորհրդարանական ընտրություններին հնարավորինս անցնցում հասցնելը: Իսկ ներքին լրջագույն բարեփոխումների համար անհրաժեշտ են ժամանակ և արտաքին ֆինանսական լայնածավալ աջակցություն, առանց որոնց՝ երկիրը չի կարող հաղթահարել իր առջև ծառացած խորքային և համակարգային խնդիրները, որոնք միավորել էին Լիբանանի քաղաքացիների ճնշող մեծամասնությանը՝ մոռացության տալով համայնքային վաղեմի թշնամանքը: Բայց երկուսն էլ խիստ սահմանափակ են, չնայած որ Միկաթին կառավարություն ձևավորելուց առաջ ստացել է արտաքին՝ ամերիկա-ֆրանսիա-սաուդական լայն աջակցություն: Եթե Միկաթիին հաջողվի ձևավորել նոր անցումային կառավարություն՝ պահպանելով քաղաքական որոշակի հավասարակշռություն, ապա մինչև առաջիկա ընտրությունները հնարավոր է, որ Լիբանանը ստանա ֆինանսական որոշակի աջակցություն՝ առաջնահերթ խնդիրները լուծելու համար առաջնորդվելով իրավիճակային լուծումների տրամաբանությամբ: Մինչդեռ խորքային բարեփոխումների և լիբանանյան փողոցի պահանջների իրականացումը կժառանգվի հետընտրական ժամանակաշրջանին, քանի որ լիբանանյան և միջազգային հանրությունների կողմից պահանջված համակարգային փոփոխությունը կարող է երկիրը տանել անորոշության և քաոսի: Նման իրավիճակում կտրուկ քայլերը, առանց փուլային խորքային բարեփոխումների, հղի են վտանգավոր հետևանքներով 1,5 տասնամյակ քաղաքացիական պատերազմ ապրած և իրար նկատմամբ թշնամաբար տրամադրված արտաքին հակամարտ դերակատարների, ինչպես և հակամարտության ազդեցության անմիջական կրող Մայրիների երկրի համար:

Լիբանանահայ համայնքի կեցվածքը

Բարեկամ լիբանանցի ժողովրդին վիճակված դժվարին փորձություններից անմասն չի մնացել նրա անքակտելի բաղադրիչներից մեկը հանդիսացող լիբանանահայ համայնքը: Լիբանանցի մեր ազգակիցները բեյրության պայթյունի հետևանքով կրել են մարդկային կորուստներ, իսկ ճգնաժամի հետևանքով՝ նաև նյութական զգալի վնասներ: Լիբանանահայ համայնքը, թրծված պատմական խրթին իրադարձությունների մեջ, ճգնաժամի ողջ ընթացքում դրսևորել է պետականամետ դիրքորոշում: Շարքային քաղաքացիները բողոքի գործողությունների ընթացքում մեծ մասամբ զորակցել են խաղաղ ցուցարարներին, իսկ հոգևոր համայնքապետերն ու քաղաքական կուսակցությունները իրենց կառուցողական կեցվածքով հնարավորինս նպաստել են ստեղծված իրավիճակի դրական հանգուցալուծման փորձերին: Մինչդեռ Լիբանանում շարունակվող բազմաշերտ ճգնաժամի հետևանքով ուռճանում են այն խորքային խնդիրները, որոնց բախվում է մերձավորարևելյան տարածաշրջանի ամենակազմակերպված և ազդեցիկ հայ համայնքներից մեկը: Միանշանակ զարգացումների նման անորոշ ընթացքը պատճառ է դառնալու համայնքում առկա արտագաղթի տրամադրությունների աճին՝ սոցիալ-տնտեսական, ֆինանսական, հումանիտար, քաղաքական և այլ խնդիրներին ավելացնելով նաև անվտանգայինը:

Արձագանք Սևրի պայմանագրին (101-ամյակի առթիվ)

Արարատ Հակոբյան
պատմ. գիտ. դոկտոր, ՀՊՏՀ պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող

101 տարի առաջ Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափար-պահանջը ստացավ իր իրավական ձևակերպումը:

Ցեղասպանություն ապրած հայ ժողովրդի քաղաքական պահանջատիրության՝ միջազգային իրավապայմանագրային մարմնավորումը դարձան 1920 թ. օգոստոսի 10-ին, Անտանտի 13 պետությունների, Հայաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև Փարիզի արվարձան Սևրում կնքված պայմանագիրը և ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի կողմից քարտեզի վրա գծված ինչպես և նույն թվականի նոյեմբերի 22-ին հայ-թուրքական սահմանի վերաբերյալ համապատասխան փաստաթղթով ամրագրված անբեկանելի **իրավարար (Arbitrage)** վճիռը: Առաջին աշխարհամարտից, Հայոց մեծ եղեռնից ու անկախ պետականության վերականգնումից հետո Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի պայմանագրային ամրագրման փաստը[1] որ իմաստ ու բովանդակություն հաղորդեց Հայկական հարցին:

Սևրի պայմանագիրը, ասել է թե՝ հայ ժողովրդի համար Միացյալ Հայաստանի տեսլականը, անխզելիորեն կապված է Հայոց մեծ եղեռնի միջազգային ճանաչման ու փոխհատուցման պահանջների հետ: Մոռացության մատնել Սևրը կնշանակի ըստ էության հաշտվել ու մոռացության մատնել նաև Հայոց ցեղասպանությունը:

Սևրյան իրադարձություններից մեկ դար անց, մեր ժամանակների աշխարհաքաղաքական մակընթացությունների ու տեղատվությունների պայմաններում ու հատկապես Արցախյան 44-օրյա ձախող պատերազմի հետևանքով մեզանում, հատկապես քաղաքական-իշխանական որոշ շրջանակների կողմից սերմանվող հոռետեսական տրամադրությունների պայմաններում, կարծում ենք, անկախ առաջացած դժվարություններից՝ տարածքների նոր կորուստ, մեծաթիվ զոհեր, շրջափակում, նոր պատերազմի սպառնալիքներ, ներքին դիմակայություններ, քովիդ կոչված հիվանդություն և այլն, հայ ժողովուրդն իրավունք չունի մոռացության մատնելու պատմականորեն ձևավորված իր արդար դատը՝ Արևմտահայաստանի մեր պապենական նահանգների պահանջատիրությունը, որը, ինչպես ասվեց, միջազգայնորեն ամրագրվեց Սևրի պայմանագրով և ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճռով: Հարկ է արձանագրել, որ դրանք միջազգային փաստաթղթեր են, որոնք շարունակում են ուժի մեջ մնալ և մինչ օրս միջազգային որևէ այլ փաստաթղթով անվավեր կամ չեղյալ չեն ճանաչվել: Սա նշանակում է, որ մենք **իրավունքի ուժով** պետք է շարունակենք մնալ մեր կորսված հայրենիքի վերադարձի պահանջատեր, պետք է շարունակենք բազմակողմ պայքարը մինչև վերջ՝ մեր հայրենի եզերքին տեր դառնալու համար: Եվ դա պետք է արտահայտվի ոչ միայն խոսքերով, կոչերով, քարոզչությամբ, փաստավավերագիր նյութեր հավաքելով ու համապատասխան գրականություն ստեղծելով, այլև միջազգային կառույցներում ու ատյաններում ազգովի ջանքեր գործադրելով, իսկ հարկ եղած դեպքում պետք է պատրաստ լինել նաև պայքարի: Յուրաքանչյուր հայ մտքով, հոգով և գործով պետք է ձգտի ու հասնի հայ ազգի նվիրական նպատակի իրականացմանը, ձգտի մեր ազգային-քաղաքական երազանքը դարձնելու իրականություն: Կրկին շեշտենք, որ Արցախյան վերջին պատերազմում ինչ-ինչ կառույցների ձախողումների պատճառով ունեցած անհաջողություններն ամենևին չեն նշանակում, թե մենք մոռացության պետք է մատնենք մեր պատմական արդար դատն ու իրավունքը՝ վերստին տեր դառնալու մեր բուն հայրենի տարածքներին:

Խորհրդային ժամանակներից և ոչ պակաս չափով նաև ներկա դժվարին ու լարված ժամանակներում մեր պարտված վիճակի հոգեբանական ծանր խորապատկերին տարածում է գտել մերժելի մտայնություն, որ եթե ուժդ չի պատում, մի՛ դիմիր մեծ, անիրականանալի պահանջների, այլ համակերպվի՛ր ու բավարարվի՛ր քո ունեցածով: Այլ խոսքով՝ ներկա պայմաններում շարունակվում է, գուցե ավելի բարձրաձայն, տուրք տրվել տերպետրոսյանական խաղաղասիրական-պարտվողական հայտնի թեզին՝ մոռացության մատնելու Հայ դատն ու պատմական հողերին տեր դառնալու երազանքային պահանջը և հաշտվելու հարևանների հետ: Նման տեսակետին կարելի է հակադարձել նրանով, որ եթե խոսքը հայրենի տարածքների կորստի, դրանց բզկտման ու իրար միջև բաժան-բաժան անելու մասին է, ապա, անկախ ունեցած ուժից ու հնարավորությունից, դրա դեմ արժանապատիվ երկիրն ու ազգը պետք է պայքարեն բոլոր հնարավոր ձևերով ու միջոցներով: Եթե այսօր համակերպվենք եղած կորստի հետ, ապա վաղն արդեն նոր անդառնալի կորուստների ականատեսը կլինենք: Սա է ազգերի ու ժողովուրդների լինելիության մասին ճշմարտության փիլիսոփայությունը: Եթե անգամ այսօր կամ ժամանակային տվյալ փուլում հնարավոր

չլինի մեր համազգային օրինական իրավունքները վերականգնել, ապա, չհամակերպվելով և լռելյայն չհաշտվելով հայկական տարածքների բռնագրավման (օկուպացման) փաստի հետ, պետք է մի կողմից շարունակել աշխատանքները միջազգային ատյաններում հայտարարությունների, հայտագրերի, բողոքների և այլ միջոցներով ու ձևերով, իսկ մյուս կողմից՝ իբրև պատգամ փոխանցել մեր ներկա և գալիք սերունդներին շարունակել ջանքերը՝ տեր դառնալու հայրենի եզերքին:

Միջազգային դիվանագիտության մեջ արդեն մեկուկես դար շրջանառվող **Հայկական հարցի** առանցքը եղել ու մնում է Արևմտյան Հայաստանի (Տաճկահայաստանի) ճակատագրի վճռման հարցը: Պատմական իրողությունն այն է, որ վերջին տասնամյակներին քաղաքականապես բուռն կերպով շրջանառվող և մեզ առավել հուզող Արցախյան հարցը չպետք է խառնել միջազգային ձևակերպում ստացած Հայկական հարցի հետ, թեև պատմական, աշխարհագրական, էթնիկ, մշակութային և այլ առումներով դրանց միջև կա ներքին հոգևոր կապ:

Արդի իրողությունների լույսի ներքո ընթերցողի մոտ ակամա կարող է հարց ծագել, թե ավելի քան մեկ դար առաջ արդեն ստորագրված (Թուրքիան չի ստորագրել) և **Միացյալ և Անկախ Հայաստանի** ձևակերպմամբ եզրույթ-պահանջը ներառած Սևրի պայմանագրին որ երկիրը առաջինը համապատասխան փաստաթղթերով պաշտոնապես դեմ արտահայտվեց և դրանով, փաստորեն, իր պաշտպանության տակ առավ Թուրքիային: Հիշեցնենք, որ Առաջին աշխարհամարտից հետո ծանր ժամանակներ ապրող Թուրքիայում, 1919 թ. երկրորդ կեսից՝ նրա անատոլիական մասում, Մ. Քեմալ փաշայի նախաձեռնությամբ գլուխ բարձրացրեց թուրքական ազգայնական քեմալական շարժումը, որն իր սուր ծայրերից մեկով ուղղված էր Հայկական հարցի դեմ[2]: 1920 թ. հունվարի 28-ին թուրքական պառլամենտի (մեջլիսի) կողմից ընդունվեց, այսպես կոչված, **«Ազգային ուխտը» (Misak-iMilli),** որում նշվում էր Թուրքիայի անբաժանելիության մասին, և այն մեծապես ուղղված էր Հայկական հարցի դեմ: Եվ ահա, միմյանց ռազմավարական շահերի համընկնման հիման վրա, 1920 թ. ապրիլից տեղի ունեցավ միջազգայնորեն չճանաչված բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի, ասել է թե՝ Լենին-Քեմալ մերձեցում, և կնքվեց դաշինք: 1920 թ. օգոստոսի 24-ին որպես հետևանք խորհրդա-թուրքական (Գ. Չիչերին-Բ. Սամի բեյ) մոսկովյան բանակցությունների (Սևրի պայմանագրից ուղիղ 14 օր անց) նախաստորագրվեց 8 կետանոց «**բարեկամության**» պայմանագիրը, որն իր սուր ծայրով ուղղված էր հենց Սևրի պայմանագրի չճանաչմանը, փաստորեն՝ հայ ժողովրդի իղձերի խորտակմանը[3]: Այն հետո ամրագրվեց Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի (իրականում մարտի 18-ի) ռուս-թուրքական երկրորդ, այժմ արդեն «**բարեկամության և եղբայրության**» (Գ. Չիչերին-Յու. Քեմալ բեյ)

Վ. Վիլսոնը կնոջ հետ

պայմանագրում[4]: Հետևանքն այն եղավ, որ Վ. Լենինի գլխավորած Ռուսաստանի բոլշևիկյան կառավարությունն առաջինը ճանաչեց թուրքական «Ազգային ուխտը», իսկ շատ շուտով՝ 1920 թ. ամռան-աշնանը, ոսկով, զենք-զինամթերքով և այլ միջոցներով աջակցեց քեմալական բանակին, ինչի հետևանքով Հայաստանը ծանր պարտություն կրեց, նրա տարածքները բզկտեցին ու բաժանեցին միմյանց միջև, իսկ Սևրի մեծախոստում պայմանագիրն ու վիլսոնյան իրավարար վճռով ձևավորվելիք ավելի քան 160 հազար քառ. կմ տարածքով Միացյալ Հայաստանի պայմանագրային պահանջը մնացին օդից կախված ու անկատար: Կրկին ուզում ենք արձանագրել պատմական այն փաստը, որ Խորհրդային Ռուսաստանը առաջին երկրներից մեկն էր, եթե ոչ առաջինը, որ չի ճանաչել Սևրի պայմանագիրը, այդ թվում նաև՝ այդ պայմանագրի «Հայաստան» բաժնի 88-93-րդ հոդվածներով ներկայացված Միացյալ և Անկախ Հայաստանի տեսլականի իրագործումը[5]: Իսկ հայ բոլշևիկ, ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը Սևրի պայմանագիրը բնորոշել է իբրև «Թուրքիային ուժով պարտադրված երկրորդ ասիական Վերսալ»[6]:

Վերադառնալով մեր ժամանակներին և ավելի քան մեկ դար առաջ ձևավորված Հայկական հարցը սևրյան ձևակերպմամբ դիտարկելով ռուս-թուրքական հարաբերությունների ներկա համապատկերում և համեմատելով այն մեր ժամանակներում Հայաստան-Արցախ հիմնահարցի առնչությամբ Ռուսաստան-Թուրքիա, ավելի կոնկրետ՝ Պուտին-Էրդողան քաղաքական-դիվանագիտական խաղերի հետ՝ դժվար չէ տեսնել որոշակի ընդհանրություն ու նմանություն մեկ դար առաջ և մեր օրերում տեղի ունեցող ռազմաքաղաքական իրադարձությունների միջև: Այսպես՝ եթե այն ժամանակ Հայաստանի Հանրապետության տարածքները բզկտելու հիմնական դերակատարը քեմալական Թուրքիան էր՝ Ք. Կարաբեքիր փաշայի բանակով, որը ծանր պարտության մատնեց Հայաստանին, ապա մեր ժամանակներում այդ դերակատարությունը

ստանձնել է հիմնականում Թուրքիայի կողմից հովանավորվող ու սպառազինվող Ադրբեջանը: Եվ այդ ամենը տեղի է ունենում, իհարկե, ոչ բացահայտ, կարծես ՌԴ իշխանությունների թողտվության ու լուռ համաձայնության պայմաններում: Ադրբեջանը, արտաքին աջակցություն ստանալով, 44-օրյա պատերազմի հետևանքով տեր է դարձել Արցախի Հանրապետության տարածքի նշանակալի մասին, այդ թվում՝ մեզ համար Կարսի համարժեքը հանդիսացող Շուշի քաղաք-ամրոցին, Հադրութին և այլ շրջանների: Դա դեռ բավական չէ, հայ-ադրբեջանական պետական սահմանների ճշգրտման անվան տակ Ադրբեջանը փաստորեն ներխուժել է ՀՀ տարածք և Նախիջևանի երկրամասի հետ անմիջական սահմանային կապ հաստատելու նպատակով ու ինչ-ինչ ուժերի թողտվությամբ սպառնում է Հայաստանի տարածքային ամբողջականությանը: Ակներև է, որ սա շատ մեծ վտանգներ պարունակող քաղաքական խաղ է, որին պետք է ազգովի պատրաստ լինենք դիմակայելու և հակահարված տալու: Այս կապակցությամբ սույն հրապարակման սկզբում նշել ենք պատմությամբ փորձարկված այն հայտնի միտքը, որ որքան զիջող ու համակերպվող ես լինում ազգային-պետական շահերի պաշտպանության հարցում, ժամանակի ընթացքում նույնքան և ավելի մեծ կորուստներ ես ունենում: Ինչպես ասում են, ախորժակը ուտելիս է բացվում: Ով կմտածեր, որ Ղարաբաղի հարցը «լուծելուց» հետո Ադրբեջանը, ըստ ամենայնի Թուրքիայի հովանավորությամբ, կհավակնի տեր դառնալու Սյունիքին, Սևանա լճին (ըստ իրենց՝ Գեոկչային) և նույնիսկ «Էրիվանին»՝ դրանք հայտարարելով ադրբեջանական պատմական տարածքներ:

Ամփոփենք: Չնայած արտաքին ու ներքին դժվարություններին՝ չպետք է երկրորդական պլան մղել ու մոռացության մատնել հայոց պատմության նվիրական էջերից մեկը համարվող Սևրի պայմանագիրը, նրա հիմնական իմաստն ու բովանդակությունը կազմող Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը՝ միշտ լավատես լինելով, որ մի հաղթական գեղեցիկ օր հնարավոր կլինի այն կյանքի կոչել: Պետք է քաջ գիտակցել, որ ավելի քան մեկդարյա Սևրի պայմանագիրը և ավելի քան 160 հազար քառ. կմ տարածք ընդգրկող Միացյալ Հայաստանի մասին միջազգային իրավական փաստաթղթերը առաջին հերթին վերաբերում են հիմնական պատասխանատու կողմին՝ Թուրքիային: Եվ դժվար չէ կռահել, որ մեր ժամանակներում Էրդողանի գլխավորած Թուրքիան, Անդրկովկասյան տարածաշրջանում Հայաստանի ու հայ ժողովրդի դեմ իր կրտսեր եղբոր՝ Ադրբեջանի միջոցով քաղաքական, պատերազմական, սահմանային և այլ սադրանքներ, բախումներ ու պատերազմներ հրահրելով, բացի դեպի Արևելք ուղղված պանթուրքական նկրտումներից ու Անդրկովկասում հաստատվելու ռազմավարական պլաններից (ի դեպ, դրա արտահայտություններից մեկը կարելի

է համարել այս տարվա ամռանը ցուցադրաբար Շուշիում կնքված թուրք-ադրբեջանական, այսպես կոչված, դաշինքը՝ իհարկե ի հեճուկս մեծ չափով նաև Ռուսաստանի ռազմավարական շահերի), նաև **նպատակ է հետապնդում շեղելու Հայաստանի ու հայ ժողովրդի ուշադրությունն իր պատմական հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի նկատմամբ ունեցած սևրյան պահանջ-իրավունքից:**

Սույն հրապարակումից բխող մյուս հետևությունն այն է, որ ռուս-թուրքական հարաբերությունների առնվազն 100-ամյա փորձն ու դասերը փաստում են, որ երկկողմանի այդ մերձեցումը, չասենք դաշինքը, հիմնված նրանց ռազմաքաղաքական շահերի վրա, եղել է ժամանակավոր, արհեստական ու շինծու, քանզի ամեն անգամ, երբ Թուրքիան, լինի քեմալական թե էրդողանական, ստանալով Ռուսաստանի աջակցությունը, լուծում է իր ռազմավարական խնդիրները, այնուհետև առանց որևէ պարտավորություն զգալու քաղաքականապես շրջվում է դեպի Արևմուտք կամ մեկ այլ ուղղությամբ: Արդյոք այս անգամ Ռուսաստանը անհրաժեշտ հետևություններ կանի: Մեր կարծիքով՝ ահա սա է Սևրի պայմանագրի 101-ամյա խորհուրդը: ■

Հղումներ

1- Այդ մասին մանրամասն տես Հակոբյան Ա., Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը Հայոց պատմության հոլովույթում, Եր., 2020:
2- Տես Սաֆրաստյան Ռ., Մուստաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.), Եր., 2019, էջ 57, 60-62, 64:
3- Տես «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», քաղաքական պատմություն, Եր., 2000, էջ 258, տես նաև Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 265:
4- Այս մասին հանգամանորեն տես «ՎԷՄ», խմբ.՝ Գ. Խուդինյան, Եր., 2021, թիվ 1 (73), էջ 9-52:
5- Տես Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 141-144:
6- Մյասնիկյան Ալ., Երկեր, հինգ հատորով, հ. 5, Եր., 2007, էջ 413:

Հայաստանը միջազգային դիվանագիտական փաստաթղթերում. բախտորոշ պայմանագրեր

Անի Մելքոնյան
Պատմաբան, ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ

Իր պատմության տարբեր շրջափուլերում Հայաստանը հայտնվել է հակամարտությունների ու պատերազմների թատերաբեմում, երբեմն էլ երկու կամ ավելի պետությունները իրենց հակասությունները հարթել են Հայաստանի հաշվին գործարքներ կնքելով: Մեր պատմության ընթացքում բազում անգամներ օտարները կնքել են փաստաթղթեր, ըստ որոնց՝ մեր ճակատագիրը տնօրինվել է այլոց կողմից: Այդ փաստաթղթերի մի մասը Հայաստանի բաժանման վերաբերյալ պայմանագրերն էին, որոնցով Հայաստանի արևելյան ու արևմտյան մասերը տարբեր ժամանակներում բաժանվել են երկու կամ ավելի պետությունների միջև: Հայաստանը այլ պետությունների միջև բաժանվել է առնվազն հինգ անգամ՝ 387 թ.՝ Հռոմեական կայսրության և Պարսկաստանի միջև, 591 թ.՝ Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության միջև, 1555 թ.՝ Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև, 1639 թ.՝ Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև, 1921 թ.՝ Խորհրդային Ռուսաստանի, Թուրքիայի Հանրապետության, Ադրբեջանի և Վրաստանի միջև:

Հայաստանի կամ գոնե նրա արևելյան հատվածի համար ոչ պակաս ճակատագրական էին 1812-1813 և 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմներից հետո կնքված ռուս-պարսկական պայմանագրերը, որոնցով Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին:

Այսպես՝ 1813 թ. հոկտեմբերի 13-ին Ռուսաստանի և Պարսկաստանի միջև Արցախի Գյուլիստան գյուղում կնքվեց հաշտության պայմանագիր: «Համաձայն այս պայմանագրի՝ Պարսկաստանը Ռուսաստանին զիջեց Դերբենտի, Ղուբայի, Բաքվի, Շիրվանի, Շաքիի և Ղարաբաղի խանությունները: Այսրկովկասի ամբողջ տարածքը, բացառությամբ Երևանի ու Նախիջևանի խանությունների, ինչպես նաև Մեղրիի, անցավ Ռուսաստանին»[1]: Կարճ ժամանակ անց բռնկված ռուս-պարսկական նոր պատերազմի հետևանքով 1828 թ. կնքված Թուրքմենչայի պայմանագրով Ռուսաստանի տիրապետության տակ անցան Երևանի և Նախիջևանի խանությունները, Արևելյան Պարսկաստանի կազմում մնաց Մեծ Հայքի նահանգներից միայն Պարսկահայքը, պարսկահայությանը թույլատրվեց տեղափոխվել Ռուսական կայսրության տարածք, ինչի հետևանքով մոտ 40-50.000 պարսկահայեր տեղափոխվեցին Արևելյան Հայաստան:

Գյուլիստանի պայմանագրի կնքումը

Իսկ ի՞նչ տվեց արևելահայությանը Ռուսաստանի տիրապետությունը: Չնայած Ռուսաստանի վարած և տարիների ընթացքում առավել խստացվող գաղութային քաղաքականությանը՝ այնուամենայնիվ չենք կարող չարձանագրել, որ «Ռուսաստանի կողմից Արևելյան Հայաստանի նվաճումը դրական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար, քանի որ վերջինս ազատագրվեց պարսկական լծից: Պարսկաստանի տիրապետության տակ հայերը զրկված էին ոչ միայն նյութական ապահովությունից, այլև կյանքի տարրական պայմաններից: Արևելյան Հայաստանում հայերի թիվն ավելի փոքր էր, քան մուսուլման բնակչությանը: Ռուսաստանին միավորվելուց հետո Պարսկաստանից և Արևմտյան Հայաստանից հայերի գաղթի արդյունքում այս վիճակը փոխվեց: Մինչև Ռուսաստանին միանալը Արևելյան Հայաստանում հայերը ազգաբնակչության 33,8 տոկոսն էին, թուրքերը՝ 49,7 տոկոսը, քրդերը՝ 16 տոկոսը: 30-ական թվականներին հայերը ազգաբնակչության 58,8 տոկոսն էին, թուրքերը՝ 34,4 տոկոսը, քրդերը՝ 6,6 տոկոսը»[2]:

Այս ամենից բացի՝ ռուսական տիրապետության շրջանում, երբ հայերը ավելի լավ կրթություն ստանալու հնարավորություն ստացան, աստիճանաբար բարձրացավ արևելահայության կրթական մակարդակը, արևելահայ երիտասարդները տարիների ընթացքում սկսեցին ուսանել նախ ռուսաստանյան, ապա եվրոպական առաջատար բուհերում՝ իրենց հետ հայկական շրջանակներ բերելով ավելի առաջադիմական և լուսավոր գաղափարներ:

Բավականաչափ կրթված ու գիտակից արևելահայությունը սկսեց հակվել Արևմտյան Հայաստանը ևս Ռուսական կայսրությանը միացնելու և Օսմանյան կայսրության տիրապետության տակ ստրկացած արևմտահայությանը կյանքի անմարդկային պայմաններից դուրս բերելու մտքին: Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանի տարածքներին, ապա դրանք ռուս-թուրքական մի քանի պատերազմների ընթացքում ու կնքված պայմանագրերով ձեռքից ձեռք անցան:

Հայաստանը միջազգային դիվանագիտական փաստաթղթերում հայտնվեց 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, մասնավորապես՝ Սան Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովներում: Այս երկու վեհաժողովների փաստաթղթերով միջազգային դիվանագիտության ասպարեզ մտավ Հայկական հարցը, ինչը ճակատագրական նշանակություն ունեցավ հայության համար:

Ահա թե ինչ էր նախատեսում Հայաստանի համար Սան Ստեֆանոյի պայմանագիրը. «Նկատի ունենալով այն, որ ռուսական զորքերի դուրսբերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի՝ տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգություններ և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»[3]:

Սան Ստեֆանոյի պայմանագրով Օսմանյան կայսրությունը պարտավորվում էր բարենորոգումներ կատարել Արևմտյան Հայաստանում, իսկ Կարսը, Արդահանը, Ալաշկերտի հովիտն ու Բայազետը անցնում էին Ռուսաստանին: Հիշյալ պայմանագրով Ռուսաստանի դիրքերի ամրապնդումը անհանգստություն պատճառեց Անգլիային և Ավստրո-Հունգարիային: Վերջիններիս պահանջով և Օտտո Բիսմարկի նախաձեռնությամբ Բեռլինում գումարվեց վեհաժողով՝ Սան Ստեֆանոյի պայմանագիրը վերանայելու համար:

Բեռլինի վեհաժողովում Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածը փոխվեց 61-րդի և վերաձևակերպվեց այսպես. «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից ու քրդերից: Բարձր դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառումը»[4]: Անգլիայի պահանջով Թուրքիային վերադարձվեցին Ռուսաստանի կողմից գրավված Էրզրումը, Բայազետը, Ալաշկերտի հովիտը և հարակից տարածքները: Ռուսաստանին մնացին Կարսը, Արդահանը և Արդվինը, որոնցից էլ կազմվեց Կարսի մարզը, որը գոյություն է ունեցել մինչև Առաջին համաշխարհային պատերազմը:

Թուրքմենչայի պայմանագրի կնքումը

1912-1914 թթ. ընթացքում մեծ պետությունների կողմից կազմվեց և ներկայացվեց հայկական բարենորոգումների փաթեթ, որը ստորագրեցին Օսմանյան կայսրությունը (ներկայացուցիչ՝ մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշա) և Ռուսաստանը: Փաթեթով առաջարկվում էր հայկական վեց վիլայեթներից կազմել երկու մեծ նահանգ, որոնք լինելու էին եվրոպական տեսուչների վերահսկողության ներքո, որոնց հանձնարարված էր հայ բնակչության խնդիրների լուծումը: Հայ ժողովրդի բախտը, սակայն, այս անգամ էլ չբերեց. 1914 թ. պայթեց Առաջին համաշխարհային պատերազմը, և հոկտեմբերին պատերազմի մեջ մտած Օսմանյան կայսրությունը չեղյալ հայտարարեց հայկական բարենորոգումների ծրագիրը: Մինչ այդ բարենորոգումների իրականացման ուղղությամբ որոշակի քայլեր արդեն կատարվել էին. «1914 թվի գարունը և ամառը անցան բարենորոգումների գործի կազմակերպման աշխատանքներով: Պետությունների առաջարկած թեկնածուներից Բ. Դուռը ապր. 2 (15)-ին ընդհանուր քննիչներ ընտրեց հոլանդացի Վեստենենկին և նորվեգացի Հոֆին և մայիսի 10 (23)-ին ստորագրեց նրանց հետ վերջնական պայմանը: Նախնական անհրաժեշտ աշխատանքները իրականացնելուց հետո Հոֆը մեկնեց իր պաշտոնատեղին՝ Վան. կարճ ժամանակից հետո պիտի մեկներ և Վեստենենկը: Ճիշտ է՝ թուրք կառավարությունը և Իթթիհատը չէին թաքցնում իրենց դժգոհությունը հայերից և անհամաձայնությունը բարենորոգումների ծրագրի հանդեպ: Ճիշտ է՝ ճանապարհին և Վանում թուրք իշխաններն ու հասարակությունը թշնամանքով ընդունեցին Հոֆին, իսկ Վանում թուրք պաշտոնյաները նույնիսկ հրաժարվեցին նրան ենթարկվել, բայց և այնպես «բարենորոգումները սկսել էին գործադրել», իսկ այս ինքնին արդեն կարևոր նվաճում էր համարվում»[5]:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի վերաբերյալ պայմանագրերը հիմնականում կնքվում էին առանց Հայաստանի մասնակցության: Այդ առումով բացառիկ էր Սևրի պայմանագիրը, որը թերևս միջազգային միակ հայանպաստ փաստաթուղթն է, որի կնքմանը մասնակցել է նաև Հայաստանը՝ որպես ինքնիշխան պետություն:

Սևրի պայմանագիրը կնքվել է 1920 թ. օգոստոսի 10-ին, որի հիման վրա նույն թվականի նոյեմբերի 22-ին ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը հրապարակում է իր իրավարար վճիռը, որի համաձայն՝ այդ պահին 70.000 քառ. կմ տարածք զբաղեցնող Հայաստանի Հանրապետությանը միացվելու էին տարածքներ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգներից, և ՀՀ տարածքը կազմելու էր ավելի քան 160 հազար քառ. կմ:

Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող կետերն ու Վիլսոնի իրավարար վճիռը, սակայն, մնացին թղթի վրա: 1920 թ. դեկտեմբերի 2-ին բոլշևիկա-թուրքական խարդավանքների սարդոստայնն ընկած Հայաստանի Հանրապետությունը խորհրդայնացավ, ու թեև Հայաստանի խորհրդայնացման պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը պարտավորվում էր ճանաչել Հայաստանի տարածքային ամբողջականությունը մինչև 1920 թ. սեպտեմբերի 27-ը եղած սահմաններում, այնուամենայնիվ, խորհրդային իշխանությունը, ինչպես պարզվեց հետագայում, դրժեց իր խոստումը՝ հերթով խախտելով երևանյան համաձայնագրի բոլոր կետերը:

Հայաստանի և հայության համար ճակատագրական էր 1921 թ. մարտի 16-ին (իրականում 18-ին) կնքված ռուս-թուրքական «բարեկամության և եղբայրության» պայմանագիրը, որը ինչ-որ առումով կարելի է համարել նաև Հայաստանի հինգերորդ բաժանման պայմանագիր, քանի որ այդ պայմանագրով ոչ միայն Խորհրդային Ռուսաստանը Խորհրդային Հայաստանի անունից հրաժարվեց Սևրի պայմանագրից, այլև փաստացի ճանաչված Հայաստանի Հանրապետության 70.000 քառ. կմ ինքնիշխան տարածքը բաժանվեց Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի միջև՝ Հայաստանին թողնելով մոտավորապես 30.000 քառ. կմ տարածք: Առանց Հայաստանի մասնակցության կնքված, բայց, ըստ էության, Հայաստանի ճակատագիրը որոշած Մոսկվայի ապօրինի պայմանագրի առաջին հոդվածով սահմանվում էր. «Կողմերից յուրաքանչյուրը սկզբունքորեն համաձայն է չճանաչել ոչ մի հաշտության պայմանագիր կամ միջազգային որևէ այլ ակտ, եթե կողմերից մեկին ուժով հարկադրեն ընդունել: Ռուսաստանի կառավարությունը համաձայն է չճանաչել Թուրքիային վերաբերող և այսօր Թուրքիայի Ազգային մեծ ժողովը ներկայացնող նրա ազգային կառավարության չճանաչած որևէ միջազգային ակտ»[6]:

Դժվար չէ կռահել, որ այս կետը վերաբերում էր նաև Սևրի պայմանագրին և դրանից բխող Վիլսոնի իրավարար վճռին: Պայմանագրի նույն հոդվածով սահմանվում էր. «Թուրքիայի հյուսիսարևելյան սահմանը որոշվում է այն գծով, որն սկսելով Սև ծովի ափին գտնվող Սարպ գյուղից՝ անցնում է Խեդիսմթա սարի վրայով, առաջանում Շավշետ սարի և Կանանի դաղի ջրբաժան գծի ուղղությամբ, այնուհետև՝ անցնում Արդահանի ու Կարսի սանջակների հյուսիսային վարչական սահմանագծի երկարությամբ՝ Արփաչայ և Արաքս գետերի հնահունով՝ մինչև Ստորին Կարասուի գետաբերանը»[7]:

Սա նշանակում էր, որ Թուրքիային էր անցնում

Սան Ստեֆանոյի պայմանագրի կնքումը

ոչ միայն Հայաստանի Հանրապետության Կարսի մարզը, այլ նաև Սուրմալուի գավառը, որը երբեք չէր եղել Թուրքիայի կազմում: Իր բաժինը պոկելուց հետո, Թուրքիան պահանջեց, որ Նախիջևանի մարզը դրվի Ադրբեջանի հովանավորության տակ: Մոսկվայի պայմանագրի 3-րդ հոդվածով սահմանվում էր, որ Նախիջևանի մարզը պետք է որպես ինքնավար տարածք անցնի Ադրբեջանի «խնամակալության» ներքո՝ պայմանով, որ Ադրբեջանը այդ խնամակալությունը չի զիջի երրորդ պետության, իսկ այդ «երրորդ պետությունը» Հայաստանն էր: Նման պահանջը պայմանավորված էր Թուրքիայի առ այսօր շարունակվող պանթյուրքիստական նկրտումներով: Պանթյուրքիզմի նպատակը «Մեծ Թուրանի» ստեղծումն է, որի ճանապարհին որպես սեպ խրված է Հայաստանը: Նախիջևանի՝ Հայաստանին չպատկանելը ապահովում է Թուրքիայի կապն Ադրբեջանի հետ, և կարելի է ասել, որ Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Թուրքիան իրականություն կդարձներ իր պանթյուրքիստական ծրագրի սկզբնական մասը, մանավանդ որ կարճ ժամանակ անց մի անօրինական որոշմամբ Ադրբեջանին միացվեց նաև հայկական Արցախը: Մնում էր Զանգեզուրը, որի՝ Ադրբեջանին միացվելու դեպքում պանթյուրքիզմի առաջին մասը կարելի կլիներ իրականացված համարել, բայց Զանգեզուրի պաշտպանները Նժդեհի գլխավորությամբ խառնեցին պանթյուրքիստների ծրագրերը՝ հերոսական պայքար մղելով այնքան, որ ի վերջո խորհրդային կառավարությունը տեղի տվեց, և Զանգեզուրը մնաց Հայաստանի կազմում: Այդպիսով Հայաստանը փրկվեց լիակատար օղակումից ու աստիճանական ոչնչացումից: Մոսկվայի պայմանագրից է բխում 1921 թ. հոկտեմբերի 13-ին կնքված Կարսի պայմանագիրը, որը ստորագրել է նաև Խորհրդային Հայաստանը:

1921 թ. Մոսկվայի բոլշևիկա-քեմալական ու դրան հաջորդած Կարսի պայմանագրերով գծվեց հայ-թուրքական ներկայիս սահմանը, իսկ Նախիջևանը, որը Ադրբեջանի հետ ցամաքային անմիջական կապ չուներ, «ինքնավար մարզի» կարգավիճակով կցվեց Ադրբեջանին:

Հայաստանը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, կարևոր մի պայմանագրի կողմ հանդիսացավ իր խորհրդայնացումից մոտ 74 տարի անց՝ 1994 թ. մայիսի 12-ին, երբ Ռուսաստանի միջնորդությամբ Հայաստանի, Ադրբեջանի և Արցախի

հանրապետությունների միջև կնքվեց անժամկետ հրադադարի պայմանագիր: Հատկանշական է, որ այդ փաստաթղթում դրված է մինչ օրս չճանաչված Արցախի Հանրապետության ներկայացուցչի ստորագրությունը: Հրադադարի պայմանագրում, որը ստորագրել են Հայաստանի պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, Արցախի Հանրապետության ՊԲ հրամանատար Սամվել Բաբայանը և Ադրբեջանի պաշտպանության նախարար Մամեդրաֆի Մամեդովը, մասնավորապես նշվում է. «Արձագանքելով Բիշքեքում 1994թ. մայիսի 5-ին կնքված արձանագրության մեջ շարադրված՝ կրակը դադարեցնելու մասին կոչին և հիմք ընդունելով 1994թ. փետրվարի 18-ի արձանագրությունը, հակամարտող կողմերը պայմանավորվել են հետևյալի մասին՝

1. Ապահովել հրադադար և ռազմական գործողությունների ամբողջական դադարեցում 1994թ. մայիսի 12-ի 00 ժամ 01 րոպեից: Կրակը դադարեցնելու մասին համապատասխան հրամանները կտրվեն ու կհասցվեն զինված կազմավորումների հրամանատարներին, որոնք պատասխանատու են դրանց կատարման համար, ոչ ուշ, քան 1994թ. մայիսի 11-ին:

Մայիսի 12-ին մինչև 23.00-ն կողմերը կփոխանակեն կրակը դադարեցնելու մասին հրամանների տեքստերը հետագայում այն լրացնելու և նմանատիպ փաստաթղթերի հիմնական դրույթները ունիֆիկացիայի ենթարկելու նպատակով:

2. Խնդրել ՌԴ պաշտպանության նախարարին՝ մայիսի 12-ից ոչ ուշ հրատապ խորհրդակցություն հրավիրել Ադրբեջանի, Հայաստանի պաշտպանության նախարարների ու ԼՂՀ ՊԲ հրամանատարի միջև՝ նպատակ ունենալով համաձայնեցնել զորքերի տարանջատման սահմանները, ռազմատեխնիկական այլ հրատապ հարցերն ու նախապատրաստելով միջազգային դիտորդների առաջատար խմբի ծավալումը:

3. Այս պայմանավորվածությունը կօգտագործվի բանակցությունները 10 օրվա ընթացքում ավարտելու և մայիսի 22-ից ոչ ուշ Ռազմական հակամարտության հրադադարի մասին համաձայնագրի ստորագրման համար:

4. Սույն պայմանավորվածությունն ուժի մեջ է մտնում այն բանից անմիջապես հետո, երբ Միջնորդը կիրազեկի, որ հակամարտող կողմերից ստացել է լիովին համարժեք փաստաթղթեր՝ ստորագրված լիազոր ներկայացուցիչների կողմից:

Հրադադարից 19 տարի անց իրենց տեսակետներն են հայտնում 1994-ի քաղաքական և ռազմական իշխանությունների ներկայացուցիչները»[8]:

Եվ չնայած զինադադարի պայմանագրի վերաբերյալ հակադիր տեսակետներին՝ Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը այն կնքել էին որպես հաղթող պետություններ, մեր կարծիքով, անհարկի մեծահոգություն դրսևորելով ագրեսոր Ադրբեջանի նկատմամբ և նրան ավելի ծանր պայմաններ (եթե ոչ կապիտուլյացիա) չպարտադրելով, ինչը, գտնում ենք, Հայաստանի այդ



Բեռլինի վեհաժողովը

օրերի իշխանության դիվանագիտական մեծագույն ձախողումն էր, ինչը, ինչպես հարկն է, չամրապնդեց մարտադաշտում տարած մեծագույն հաղթանակը: Ինչևէ, որոշակի խախտումներով զինադադարի պայմանագիրը գործեց մինչև 2020 թ. սեպտեմբերի 27-ը, երբ Ադրբեջանը սանձազերծեց լայնածավալ պատերազմ, որը կանգնեցվեց 2020 թ. նոյեմբերի 9-ին կնքված՝ հրադադարի մասին համաձայնագրով, որը ստորագրել են Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը և Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը: Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն 1994 թ. մայիսի 12-ի զինադադարի պայմանագրի՝ Արցախի Հանրապետությունը նոյեմբերի 9-ի փաստաթղթի կողմ չէ, և, ի տարբերություն մայիսի 12-ի զինադադարի պայմանագրի, նոյեմբերի 9-ի կապիտուլյացիոն համաձայնագիրը Հայաստանի Հանրապետությանը դրեց ծանր դրության մեջ, Արցախի Հանրապետությունը կորցրեց իր տարածքի 75 %-ը, որի մեծ մասը թշնամուն պարզապես հանձնվեց: Այդ փաստաթղթում սահմանված է հետևյալը. «1. 2020 թվականի նոյեմբերի 10-ի մոսկովյան ժամանակով 00:00-ից Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում հայտարարվում է ամբողջական հրադադարի և բոլոր ռազմական գործողությունների ավարտի մասին: Ադրբեջանի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը, այսուհետ՝ Կողմեր, կանգ են առնում իրենց զբաղեցրած դիրքերում:

2. Աղդամի շրջանը վերադարձվում է Ադրբեջանի Հանրապետությանը մինչև 2020 թվականի նոյեմբերի 20-ը:

3. Լեռնային Ղարաբաղում շփման գծի երկայնքով և Լաչինի միջանցքի երկայնքով տեղակայվում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորախումբ, այդ թվում՝ հրաձգային զենքով զինված 1960 զինծառայող, 90 զրահամեքենա, 380 միավոր ավտոմոբիլային և հատուկ տեխնիկա:

4. Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմը տեղակայվում է Հայկական զինված ուժերի դուրսբերմանը զուգահեռ: Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմը տեղակայվելու է 5 տարի ժամկետով, որը ինքնաբերաբար երկարաձգվելու է հերթական 5-ամյա ժամկետով, եթե միայն Կողմերից որևէ մեկը տվյալ ժամկետի ավարտից 6 ամիս առաջ չհայտարարի սույն դրույթի կիրառումը դադարեցնելու

մտադրության մասին:

5. Հակամարտության Կողմերի կողմից համաձայնագրերի կատարման վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հրադադարի ռեժիմը վերահսկելու համար ստեղծվում է խաղաղապահ կենտրոն:

6. Հայաստանի Հանրապետությունն Ադրբեջանի Հանրապետությանը վերադարձնում է Քելբաջարի շրջանը մինչև 2020 թ. նոյեմբերի 15-ը, իսկ Լաչինի շրջանը՝ մինչև 2020 թ. դեկտեմբերի 1-ը: Լաչինի միջանցքը (5 կմ լայնությամբ), որը ապահովելու է Լեռնային Ղարաբաղի կապը Հայաստանի հետ, ընդ որում շրջանցելով Շուշի քաղաքը, մնում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմի վերահսկողության ներքո:

Կողմերի համաձայնությամբ, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև կապն ապահովելու համար առաջիկա երեք տարիների ընթացքում պիտի հաստատվի Լաչինի միջանցքի երկայնքով նոր երթուղու կառուցման նախագիծ, որից հետո ռուսական խաղաղապահ զորակազմը կվերատեղակայվի՝ այդ երթուղին պաշտպանելու համար:

Ադրբեջանի Հանրապետությունը երաշխավորում է Լաչինի միջանցքով քաղաքացիների, տրանսպորտային և բեռնատար միջոցների երթևեկության անվտանգությունը երկու ուղղություններով:

7. Ներքին տեղահանված անձինք և փախստականները ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի վերահսկողության ներքո վերադառնում են Լեռնային Ղարաբաղի տարածք և հարակից շրջաններ:

8. Տեղի է ունենում ռազմագերիների, պատանդների և պահվող այլ անձանց ու մահացածների մարմինների փոխանակում:

9. Տարածաշրջանում բոլոր տնտեսական և տրանսպորտային կապերն ապաշրջափակվում են: Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է տրանսպորտային կապերի անվտանգությունը Ադրբեջանի Հանրապետության արևմտյան շրջանների և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև՝ երկու ուղղություններով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և ապրանքների անխոչընդոտ տեղաշարժը կազմակերպելու համար: Տրանսպորտային հաղորդակցության հսկողությունն իրականացնում են ՌԴ ԱԴԾ Սահմանապահ ծառայության մարմինները:

Կողմերի համաձայնությամբ կապահովվի Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը և Ադրբեջանի արևմտյան շրջանները կապող տրանսպորտային նոր ուղիների շինարարությունը»[9]: Ինչպես տեսնում ենք, կնքված համաձայնագիրը բխում է բացառապես Ադրբեջանի շահերից՝ որոշակիորեն շոշափելով նաև ՌԴ շահերը: Կուզեինք ընդգծել հատկապես հետևյալ հատվածը. «Կողմերի համաձայնությամբ կապահովվի Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը և Ադրբեջանի արևմտյան շրջանները կապող տրանսպորտային նոր ուղիների շինարարությունը»: Սա նշանակում է, որ Զանգեզուրի (Մեղրիի) ճանապարհը Ադրբեջանի ու Թուրքիայի առաջ բացելուց հետո (առանց որի հնարավոր չէ Ադրբեջանին տրանսպորտային ճանապարհ տրամադրել) Թուրքիան առավել, քան երբևէ, կմոտենա իր պանթուրքիստական ծրագրի իրագործմանը, և եթե ավելի քան մեկ դար առաջ՝ 1918 թ. մայիսին, հայ զինվորականության վճռականության և դիկտատոր Արամ Մանուկյանի նվիրումի ու տքնաջան աշխատանքի, այնուհետև Նժդեհի գլխավորած Զանգեզուրի հերոսական ինքնապաշտպանության շնորհիվ վիժեցվեց պանթուրքիզմը, ապա այսօր նաև Հայաստանի ղեկավարության հանցավոր անտարբերության ու դավաճանական պահվածքի պատճառով Թուրքիան իրականացնում է այն, ինչը չէր կարողացել անել ավելի քան 100 տարի, ծրագիր, որի իրագործմանը ոչ միայն չի խանգարում, այլ նաև ցավալիորեն օժանդակում է Հայաստանի Հանրապետության ներկայիս ղեկավարությունը, և հայության համար կործանարար հետևանքներ ունեցող այս ծրագիրը թերևս հնարավոր կլինի վիժեցնել հայ քաղաքական ղեկավարության փոփոխությամբ և զինվորականության կողմից ձեռնարկվելիք վճռական քայլերով: Այս անգամ ևս կհաջողվի՞ արդյոք հայ զինվորականությանը փակել պանթուրքիզմի ճամփան և ապահովել Հայաստանի գոյությունը, կախված է նաև Հայաստանի քաղաքական ղեկավարության դիրքորոշումից և սպասվող աշխարհաքաղաքական լուրջ փոփոխություններից: ■

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մկրտումյան Լ. Ա., Հայոց պատմություն, Եր., 2016, էջ 220:
2. Նույն տեղում:
3. http://www.historyofarmenia-am.armin.am /am/Encyclopedia _of _armenian _history _San _Stefanoyi _paymanagir 1878. Հղումը ճիշտ չէ տրված. մեջբերման կոնկրետ հղումը նշել, այլ բան է բացվում
4. Կիրակոսյան Ա. Ջ., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը (պատմահիրավական եռալեզու տեղեկանք), Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2006, էջ 8:
5. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 6:
6. Նախիջևանը՝ Ադրբեջանին, Կարսը՝ Թուրքիային. Մարտ 16, 1921, https://www.aniarc.am/2019/03/16/march-16-1921-russo-turkish-treaty/:
7. Նույն տեղում:
8. https://bit.ly/3lF1GjX.
9. https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ա) Գրականություն

1. Կիրակոսյան Ա. Ջ., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը (պատմահիրավական եռալեզու տեղեկանք), Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2006:
2. Մկրտումյան Լ. Ա., Հայոց պատմություն, Եր., 2016:
3. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993:

բ) Համացանցային նյութեր

1. http://www.historyofarmenia-am.armin.am /am/Encyclopedia _of _armenian _history _San _Stefanoyi _paymanagir 1878. Հղումը ճիշտ չէ տրված. մեջբերման կոնկրետ հղումը նշել, այլ բան է բացվում
2. Նախիջևանը՝ Ադրբեջանին, Կարսը՝ Թուրքիային. Մարտ 16, 1921, https://www.aniarc.am/2019/03/16/march-16-1921-russo-turkish-treaty/:
3. https://bit.ly/3lF1GjX.
https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/.

Բաց նամակ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին՝ հայ ժողովրդին Միջագետքի անապատ արտաքսելու մասին. Բեռլին, 1919 թ. հունվար

Ալբերտ Մուշեղյան
Բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող՝

ARMIN TH.WEGNER
EIN VERMÄCHTNIS IN DER WÜSTE

Offener Brief an den Präsidenten der Vereinigten Staaten von Nordamerika Woodrow Wilson, über die Austreibung des armenischen Volkes in die mesopotamische Wüste. Berlin, im Januar 1919[1].
"Das Ziel der Verschickung ist das Nichts!"
Talaat Türkischer Minister des Innern

Արմին Թեոֆիլ Վեգները իր նշանավոր Բաց նամակը՝ ուղղված Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին առաջին անգամ տպագրեց 1919 թ. փետրվարի 1-ին «Frau der Gegenwart» («Ժամանակակից կինը») լրագրում: Ինչո՞ւ հենց այստեղ: Ինչպես արդեն նշել եմ[2], Առաջին աշխարհամարտից հետո Գերմանիայում գործող գերմանա-թուրքական միությունն իր վերահսկողության տակ էր պահում ամբողջ տեղական մամուլը՝ դաշնակից Թուրքիայի նկատմամբ որևէ ոտնձգություն թույլ չտալու համար: 33-ամյա Արմին Վեգների մայրը՝ Մարի Վեգները, կանանց պացիֆիստական շարժման ճանաչված գործիչ էր, որն էլ ապահովեց ուղերձի արագ հրապարակումը: Միայն փետրվարի 23-ին Վեգներին հաջողվեց Բաց նամակը հրապարակել «Berliner Tageblatt» հեղինակավոր լրագրում, ինչպես պատշաճում էր ուղերձի բարձրաստիճան հասցեատիրոջը, որից հետո Բաց նամակը շատ մեծ արձագանք գտավ ամբողջ Եվրոպայում:

Ինչպես հայտնի է, 1918 թ. հոկտեմբերի 30-ին ստորագրված Մուդրոսի զինադադարով Թուրքիան անձնատուր եղավ (կապիտուլացվեց) և պարտավորվեց իր զորքերը դուրս բերել նաև Անդրկովկասից: Հայաստանը համարվում էր հաղթանակած Անտանտի «փոքր դաշնակից», որովհետև մասնակցություն էր ունեցել պատերազմին և կրել վիթխարի կորուստներ:

1919 թ. հունվարի 18-ին Փարիզում՝ Վերսալի պալատում, բացվեց խաղաղության վեհաժողովը (կոնֆերանսը), որը ընդհատումներով շարունակվեց մինչև հաջորդ տարվա հունվարի 21-ը: Բացմանը մասնակցում էին 27 երկրների մոտ 2000 պատվիրակ: Հաղթանակած Անտանտի երկրները (Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան և այլն) այստեղ պետք է հաշտության պայմանագրեր կնքեին պարտված Քառյակ միության երկրների, այդ թվում՝ Թուրքիայի հետ:

1919 թ. փետրվարին Փարիզում գտնվող հայկական երկու պատվիրակությունները (Ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբարի[3] և ՀՀ պատվիրակությունը՝ Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ) ներկայացան դաշնակիցներին՝ խնդրելով ճանաչել հայերի ազգային պահանջները:

Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Պիշոնը հայ պատվիրակներին առաջարկեց հուշագիր պատրաստել: 1919 թ. փետրվարի 12-ին ներկայացվեց «Հայկական պահանջների հիշատակագիր» հետևյալ բովանդակությամբ՝ հայկական անկախ պետության ճանաչում՝ հայկական 7 նահանգների, Կիլիկիայի և Կովկասի հայկական հանրապետության տարածքների միացումով: Նորակազմ պետությունը դրվելու էր դաշնակից տերություններից մեկի կամ Ազգերի լիգայի երաշխավորության ներքո, ապահովվելու էին նրա տարածքի ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը: Դաշնակից տերություններից մեկին պետք է լիազորություն տրվեր ստանձնել հայկական այդ պետության մանդատը 20 տարի ժամկետով: Հաշտության կոնֆերանսը պետք է դրամական հատուցում տար հայերին՝ նրանց կրած վնասների դիմաց, ջարդերի համար պատասխանատուները պետք է պատժվեին, իսկ պատերազմի տարիներին բռնի տեղահանված ու աքսորված հայերը պետք է վերադարձվեին իրենց բնակավայրերը: Այդ փաստաթուղթը դրական ընթացք չստացավ: Դաշնակից տերությունները զբաղված էին պարտված Գերմանիայի նկատմամբ կիրառվելիք միջոցների մշակմամբ և ամենևին չէին շտապում քննարկելու թուրքական հարցը, որի լուծման հետ սերտորեն առնչվում էին Հայկական հարցը և հայկական պետության ստեղծումը: Միակ բանը, որ արվեց, այն էր, որ 1920 թ. հունվարի 19-ին Փարիզի հաշտության կոնֆերանսում դե ֆակտո ճանաչվեց Հայաստանը: Հայկական հարցը հետագա քննարկման

առարկա դարձավ 1920 թ. Սան Ռեմոյի կոնֆերանսին և արտահայտվեց Սևրի պայմանագրում:

Արմին Վեգների սույն նամակը հայերեն տպագրվում է առաջին անգամ:

Արմին Թեոֆիլ Վեգներ
Կտակ անապատում

Բաց նամակ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին՝ հայ ժողովրդին Միջագետքի անապատ արտաքսելու մասին: Բեռլին, հունվար, 1919 թ.

«Արտաքսելու նպատակն է՝ ոչինչը[3]»
Թալաաթ Թուրքիայի ներքին գործերի նախարար

Պետության պարո՛ն պրեզիդենտ, մի՛ փակեք Ձեր ականջները, քանզի Ձեզ դիմում է մի անծանոթ: Անցյալ տարվա հունվարի 8-ին Միացյալ Նահանգներին հղած Ձեր ուղերձում Դուք պահանջ էիք ներկայացրել ճնշումից ազատագրելու Օսմանյան կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդներին: Նրանց թվում են և հայերը: Այդ ժողովրդի համար է, որ ես բարձրացնում եմ իմ ձայնը: Իբրև այն սակավաթիվ եվրոպացիներից մեկը, որ ապրել է նրա ահավոր կործանումը՝ սկսած Անատոլիայի պտղաբեր դաշտերից մինչև նրա խղճուկ խլյակների բնաջնջումը Միջագետքի ամայի անապատներում, ես ինձ իրավունք եմ վերապահում ի ցույց դնել Ձեր առջև զրկանքի ու սոսկումի պատկերներ: Գրեթե երկու տարի շարունակ անցնում էին դրանք հայացքիս առջևով, որպեսզի այլևս երբեք ինձ չլքեն: Ես սա անում եմ այն պահին, երբ Ձեզ հետ դաշնակցած երկրները Փարիզում սկսում են խաղաղության բանակցություններ, որոնք պետք է որոշեն աշխարհի բախտը գալիք տասնամյակների համար: Հայ ժողովուրդն ամենից աննշանն է շատերի մեջ. բանակցության առարկա է ավելի մեծ և ավելի փառահեղ պետությունների ապագան: Ուստի սպասելի է, որ մի փոքրիկ, ծայրաստիճան թուլացած մարդկային ցեղի խնդիրը մի կողմ մղվի եվրոպական խոշոր պետությունների եսամոլական նկրտումների պատճառով, և այսպիսով, Հայաստանի գլխին խաղան անտարբերության ու մոռացման այն նույն խաղը, որ պատմության ընթացքում նրա հետ այնքան հաճախ է կրկնվել: Դա չափազանց անարդար կլիներ, քանզի աշխարհի ոչ մի ժողովրդի հետ երբևէ նման անիրավություն չի կատարվել, ինչպես հայերի: Հարցը վերաբերում է բոլոր քրիստոնյաներին, դա համայն մարդկության հարցն է:

Հայ ժողովուրդը, որպես այդպիսին, մասնակից չի եղել այս պատերազմին: Մինչև իսկ նրան հնարավորություն չի տրվել գործնական դեր ունենալու դրանում: Նա այս պատերազմի զոհն էր: 1915 թ. գարնանը, երբ թուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ երկու միլիոն հայերին երկրի երեսից բնաջնջելու անընդունելի ծրագրի իրագործմանը, նրանց արևմտյան եղբայրների ձեռքերը Ֆրանսիայում, Անգլիայում ու Գերմանիայում թաթախված էին սեփական դժբախտ արյան մեջ, որ նրանք գետի պես հեղում էին իրենց անմտության՝ ողբալի կուրության պատճառով: Ոչ ոք արգելք չեղավ Թուրքիայի խավարամիտ իշխանավորներին՝ վերջ տալու իրենց տաժանագին խոշտանգումներին, որոնց գործադրումն իրապես կարելի է համեմատել միայն խելացնոր ոճրագործի արարքի հետ: Այսպես, նրանք մի ողջ ժողովուրդ՝ տղամարդկանց, կանանց, ծերերի, մանուկների, հղի մայրերի, անօգնական ծծկերների, քշեցին Արաբական անապատ՝ ո՛չ այլ մտադրությամբ, քան սովահար անել նրանց:

Եվրոպայում վաղուց սովոր էին Սիբիրը դիտել իբրև տնտեսապես աշխարհիս ամենազուրկ երկրներից մեկը, որտեղ ապրելն ամենախիստ պատիժն է համարվում: Սակայն այդ երկրում կան նաև պտղաբեր դաշտեր, հակառակ ցրտաշունչ ձմռանը՝ խաղում է կազդուրիչ օդը, բայց ի՞նչ է Սիբիրի համեմատ միջագետքյան տափաստանը: Մի լայնարձակ երկիր՝ զուրկ խոտից, զուրկ ծառերից, գրեթե անասունից զուրկ, ծածկված աղքատիկ սեզով, մարդկանցից զուրկ, որոնք առանց այդ էլ կարեկցանքի նշույլ չունեն: Գորշ, կավածեփ տափարակը, որ ձգվում է շատ մղոններ, լերկ անապատներ՝ ժայռոտ ու քարքարոտ, խարխլված գետափեր, որոնց վրա անողոք արևն իր կրակն է թափում. աշնանը՝ անվերջանալի անձրևներ, ձմռանը ցրտաշունչ գիշերներ՝ սառնամանիքով կամ սառցե եղյամով: Երկու մեծ գետերից զատ՝ չկա ոչ մի ջուր: Մի քանի փոքրիկ գյուղեր հազիվ են հասցնում կերակրել մի բուռ արաբ հովիվների, որոնք ողորմելի աղքատության մեջ լինելով, ամեն օտարականի վրա նայում են իբրև բարեպատեհ որսի:

Մի հայրենիքից, որ նրանց էր պատկանում հազարավոր տարիներ, մինչև որ հռոմեացիք Պոմպեոսի օրոք նվաճեցին նրանց երկիրը, թուրքական կայսրության բոլոր կողմերից՝ բարձր լեռների կիրճերով, Մարմարա ծովի ափերից նրանց քշում էին հարավ՝ մինչև արմավենու օազիսները՝ ժողովելով այս անմխիթար կիրճերում: Դա անում էին ներողություն հայցելով, որ հեգնանք է ամեն մի մարդկային զգացմունքի հանդեպ, հորդորելով հետները ուրիշ ոչինչ չվերցնել, կարծես նրանց նոր կացարաններ էին հրամցնելու, որտեղ կարող էին տնավորվել: Նախքան ընտանիքների տեղահանումը տղամարդկանց խմբերով կոտորում էին, շղթաներով կամ թոկերով իրար կապած՝ նետում գետը, ձեռքերն ու ոտքերը կապկված գլորում լեռնիվար. կանանց վաճառում էին հասարակաց շուկաներում կամ ծերերին ու մանուկներին մահակի մահացու հարվածների տակ քշում փողոցներով՝ բռնի աշխատանքի:

Իբր այսքանը բավական չէ, իրենց ոճրագործ ձեռքերը հավիտենապես նույնքան արատավորելու համար նրանք մի ժողովրդի, որին (նախապես) զրկել էին պարագլուխներից ու

ճարտասան առաջնորդներից[4], օրվա ու գիշերվա ցանկացած ժամի արտաքսում էին քաղաքներից, կիսամերկ հանում անկողիններից, կողոպտում նրանց տները, հրկիզում շեները, ավերում եկեղեցիները կամ վերածում դրանք մզկիթների: Խլում էին հայերից նրանց անասունը, վերցնում նրանց էշերն ու սայլերը, ձեռքերից հափշտակում հացը, մերկացնում նրանց անդամները, հափշտակում ծամերի ու ատամների ոսկին:

Պաշտոնյաներ, սպաներ, զինվորներ կատաղի մոլուցքով մրցակցում էին անասնական հաճույքի համար դպրոցներից դուրս էին քարշ տալիս փխրուն

կազմվածքով որբ աղջիկների, որ բռնաբարեն: Ծանր հղի կամ մահամերձ կանանց ցիցեր էին խրում, և կինը, չկարողանալով քարշ գալ, վայր էր ընկնում գյուղամիջյան ճանապարհին ու հանգում, մինչ նրա տակի փոշին վերածվում էր արնաշաղախ տիղմի:

Երկայն ճանապարհով անցուդարձող ուղևորները հայացքները զարհուրած շրջում էին դիվային վայրագության այս հարափոփոխ պատկերներից, որպեսզի իջևանատներում հայտնաբերեն բակերի գոմաղբի մեջ պառկած նորածին մանկանց: Ճանապարհներին սփռված էին տղաների հատած ձեռքեր՝ կտտամահ արվածների գութ հայցող ձեռքեր, որ աղերսանքով մեկնած են եղել իրենց խոշտանգողներին: Գաղթականների թափորներից, որ մեկնելու ժամանակ հայրենի Բարձր Հայքում բազմահազար շունչ էին հաշվվում, Հալեպ քաղաքի սահմաններին հասնելիս միայն մի քանի հարյուր մարդ էր մնացել, մինչդեռ դաշտերը ծածկված էին ուռած կամ սևացած դիերով, որ օդում վարակ էին տարածում: Անարգված, մերկանդամ ու շորերը կողոպտած՝ փռված էին նրանք շուրջբոլորը, կամ մեջք մեջքի կապած՝ նրանց հրում գցում էին Եփրատը՝ ձկներին կեր: Չնայած դրան՝ նրանց բազմությունները, որ հանդիպեցին անապատում՝ Ռաքքայի մոտ, Եփրատի ափին[5], դեռևս հազարներով էին հաշվվում: Երբեմն ժանդարմները, ի պատասխան մյուս երկրների բողոքի, կարծես ծաղրելու համար սովյալների ցամաքած ձեռքերին մի քիչ ալյուր էին շաղ տալիս: Նրանք ագահաբար լպստում էին այս, որովհետև հնար չունեին դրանից հաց թխելու: Միակ արդյունքն այն էր, որ երկարում էր նրանց հոգեվարքը: Բայց Հալեպի դարպասների առաջ էլ նրանց դադար չտվեցին: Պատերազմի անմիտ պատրվակով, որ ոչ ոք չի կարող արդարացնել, նրանց նոսրացող շարանները, արևակեզ ճանապարհներով, քարքարոտ ձորերով, անանցանելի բլուրներով, հիվանդությունից ու տենդից դողահար, քշվեցին հարյուրավոր մղոններ՝ դեպի կիսաարևադարձային ճահճուտները, դեպի չգոյության ամայություն:

Այսպես մեռնում էին նրանք՝ քրդերից զարկված, ռազմական պահնորդներից կողոպտված, գնդակահարված, կախված, թունավորված, դաշունահար, խեղդամահ արված, վարակներից հյուծված, ջրահեղձ, ցրտահարված, ծարավից տոչորված, սովալլուկ, նեխած, շնագայլերից հոշոտված: Մանուկները լալիս էին մահամերձ, տղամարդիկ ջախջախվում ժայռերին, մայրերն իրենց փոքրիկներին նետում էին ջրհորները, հղի կանայք, իրար ձեռք բռնած, երգելով նետվում էին Եփրատը: Աշխարհի բոլոր մահերով, բոլոր դարերի մահերով մեռնում էին նրանք: Ես տեսել եմ խելագարների, որ իրենց արտաթորանքն էին ուտում իբրև կերակուր, հանդիպել եմ կանանց, որ եփում էին իրենց նորածին զավակների մարմինները, աղջիկների, որ հերձում էին իրենց մայրերի դեռևս տաք դիակները, որպեսզի մահացածի աղիներում փնտրեն ավազակաբարո ժանդարմների ահից կուլ տված ոսկին:

Ավերակ իջևանատներում նրանք պառկում էին կիսանեխ դիակների կույտերի մեջ և անտարբեր սպասում մահվան: Որովհետև ինչքա՞ն կարող էին նրանք այդ կերպ ձգել իրենց գոյությունը՝ ձիերի կոյաղբի մեջ հատիկներ որոնելով կամ խոտ ճարակելով: Սա միայն չնչին մասն է այն ամենի, ինչ որ ես անձամբ եմ տեսել, ինչ որ ծանոթներն ու ճամփորդներն են ինձ պատմել, կամ լսել եմ տեղահանվածների բերանից:

Պետության պարո՛ն պրեզիդենտ, երբ Դուք թերթելու լինեք սարսափազդու դեպքերի այն ամփոփագրերը, որ անաչառությամբ հավաքել են լորդ Բրայսը Անգլիայում և Յոհաննես Լեպսիուսը Գերմանիայում, ապա կտեսնեք, որ ես չեմ չափազանցնում: Բայց եթե արդեն Ձեր ձեռքին են, ինչպես ենթադրում եմ, սոսկումի այն պատկերները, որոնց ամբողջ աշխարհն է տեղյակ՝ բացի Գերմանիայից, որոնց իսկությունն այստեղ ամենաամոթալի ձևով ժխտում էին, ապա ո՞ր իրավունքով եմ ես դրանք ուղղակի երդումով հաստատում: Ես դա անում եմ մարդկային համերաշխության իրավունքով, մի սրբազան խոստումի պարտականությամբ:

Երբ անապատում թաքուն շրջում էի տեղահանված գաղթականների ճամբարներով, նստում նրանց վրաններում՝ սովյալների ու մեռնողների հետ իրենց խսիրի վրա, նրանք պարզում էին ինձ աղերսող ձեռքերը: Նրանց քահանաների ձայնը[6], որ հարյուրներով մեռելներ էր օրհնել թաղելիս, ինձ երդվել տվեց օգնություն խնդրել նրանց համար, երբ կրկին Եվրոպայում լինեմ: Բայց այն երկիրը, ուր ես վերադարձա, պարտված կողմն է: Իմ սեփական ժողովուրդն ինքը կարիքի մեջ է: Քաղցածներ, հիվանդներ, թշվառներ լցվել են քաղաքներն ու փողոցները: Մի՞թե ես կարող եմ օգնություն խնդրել մի երկրից, որն ի զորու չէ թերևս շուտով օգնել ինքն իրեն, ո՞ւր մնաց մի ավելի խեղճ երկրի: Դրա համար էլ ես դիմում եմ Ձեզ՝ վստահ իմ խոսքերի զորությանը: Այս նամակը կտակ է. իմ բերանով հազարավոր մեռելներ են խոսում:

Պարո՛ն պրեզիդենտ, հայ ժողովրդի հանդեպ գործած անիրավությունը չափ ու սահման չունի: Ես կարդացել եմ գրեթե այն ամենը, ինչ գրվել է այս պատերազմի մասին: Իմ մեջ խոր կնիք են թողել աշխարհի բոլոր երկրներում գործված ոճիրները՝ ճակատամարտերի, արկերից ցրիվ եկած նավերի, ինքնաթիռներից քաղաքների վրա նետվող ռումբերի պատճառած զարհուրելի կոտորածները, Բելգիայում կատարված քստմնելի սպանությունները, ֆրանսիացի գաղթականների թշվառությունը, Սիբիր քշված գերմանացիների ու գերիների տառապանքը, Ռումինիայում մոլեգնող սարսափելի ճարակներն ու վարակները, բայց այստեղ խոսքը վերաբերում է մի անօրենության, որին չի ենթարկվել այդ ժողովուրդներից ոչ մեկը՝ ո՛չ ֆրանսիացի, ո՛չ բելգիացի, ո՛չ անգլիացի, ո՛չ ռուս, ո՛չ սերբ, ո՛չ ռումին և ո՛չ էլ գերմանացի, որն այսքան չարիք տեսավ այս պատերազմում: Սոսկ վայրենի ժողովուրդներն են, հավանաբար, հնում ենթարկվել նման ճակատագրի: Մինչդեռ այստեղ խոսքը վերաբերում է բարձր կրթությամբ մի ժողովրդի՝ փառահեղ անցյալով, արվեստի, բանաստեղծության և գիտության գործերում ներդրած անուրանալի վաստակով, բազմաթիվ գաղափարական այրերով, խոր հավատքի տեր, պանծալի հոգևորականությամբ մի քրիստոնյա ժողովրդի:

Նրանց ազգակիցներից շատերը, պարոն պրեզիդենտ, ովքեր, խույս տալով Թուրքիայում հետապնդումներից, ավելի վաղ ցրվել էին ողջ

աշխարհով մեկ, երկար տարիներ ապրել են Ձեր երկրում: Նրանք տիրապետում էին աշխարհի գրեթե բոլոր լեզուներին: Նրանց կանայք ու դուստրերը վաղուց սովոր էին նստել ճոճաթոռին կամ մաքուր հարդարված սեղանի առջև, ոչ թե կուչ գալ անապատում մի փոսի շուրջ: Խելամիտ վաճառականներ, բժիշկներ, գիտնականներ, արվեստագետներ էին նրանք, ազնիվ, հաջողակ շինականներ, որոնք բարեբեր էին դարձնում Թուրքիային հպատակ իրենց երկիրը: Նրանց միակ մեղքն այն էր, որ խոսում էին ուրիշ լեզվով և ի ծնե ուրիշ հավատքի զավակներ էին:

Ամեն ոք, ով ծանոթ է այս պատերազմից առաջ Անատոլիայում տիրող իրավիճակին, ով սթափ հայացքով հետևել է այս ժողովրդի ճակատագրին, գիտե, որ հայ ռասայի դեմ միտված բոլոր մեղադրանքները այլ բան չեն, քան նողկանք հարուցող հերյուրանք, որ նրանց անագորույն իշխանավորները մեծ ջանքով ու հնարքով հորինում էին իբրև արդարացում իրենց մոլագար և վայրագ բռնատիրության, քանզի երբևէ չեն առնչվել ճշմարտացիության և մարդկայնության գաղափարին: Բայց եթե անգամ բոլոր այս պարսավանքները ճշմարիտ լինեին, դարձյալ չպիտի արդարացնեին հարյուր հազարավոր անմեղների հանդեպ գործած զարհուրելի բռնարարքները:

Ես չեմ դատապարտում իսլամը: Յուրաքանչյուր մեծ դավանանքի միտումն ազնիվ է, և որոշ մահմեդականների վերաբերմունքը ստիպում է մեզ ամոթից գլուխներս կախել Եվրոպայի արարքների առաջ: Ես չեմ դատապարտում հասարակ թուրք ժողովրդին, որի հոգին լի է խոր բարոյախոսությամբ[7], բայց և չեմ հավատում, թե նրան առաջնորդող այրերն ի զորու են երկիրը երբևէ երջանիկ դարձնելու այն բանից հետո, երբ խորապես խորտակվեց մեր հավատը բարեկրթվելու նրանց ունակության հանդեպ, և ակներև է, որ Թուրքիան երկար ժամանակով կորցրել է ինքն իրեն կառավարելու իրավունքը:

Պետության պարոն պրեզիդենտ, Դուք պետք է հավատ ընծայեք իմ անկողմնակալությանը, քանզի այս մասին Ձեզ դիմում եմ իբրև գերմանացի, իբրև մի ժողովրդի ներկայացուցիչ, որն ամենասերտ կերպով բարեկամացել էր Թուրքիայի հետ: Այդ բարեկամության պատճառով էլ մեզ ամենաանարդար ձևով պարսավում էին սպանդին և մարդորսությանը մեղսակից լինելու համար: Գերման ժողովուրդը տեղյակ չի եղել այդ ոճրագործությանը: Եթե նրա վարչախումբը, որ բոլոր ժամանակներում կրքոտ կերպով հակադարձել է նման անմիտ նախադեպերին, մի հանցանք է գործել, ապա դա թուրքական հոգետեսակը չըմբռնելն է և մարդկային զգուշավորությունը, երկյուղն ու մտահոգությունը սեփական ժողովրդի ապագայի հանդեպ: Ես լռության չեմ տալիս նաև այն, որ անզորությունը ևս հանցանք է ժողովուրդների կյանքում:

Սակայն այս տեղահանումը հնարավոր դարձնելու և հրահրելու դառն նախատինքը միայն Գերմանիային չի վերաբերում: 1878 թ. հուլիսի բեռլինյան պայմանագրով ամբողջ Եվրոպան հանձն առավ հայ ժողովրդի անդորրի և անվտանգության երաշխավորությունը: Երբևէ կատարվե՞լ է նա այդ խոստումը: Նույնիսկ Աբդուլ Համիդի հրահրած զանգվածային սպանդներն ուշքի չբերեցին Արևմուտքին: Կույր ընչաքաղցությամբ հետապնդում էր նա իր սեփական շահախնդիր նպատակները՝ չցանկանալով պաշտպան կանգնել մի վտանգված ժողովրդի: Թուրքիայի և Ձեզ դաշնակից ժողովուրդների միջև կնքված զինադադարի պայմանագրում, որին ողջ աշխարհի հայությունը տենդագին լարումով էր սպասում, Հայկական հարցը հազիվ է շոշափված:

Մի՞թե անպատվաբեր խաղը պետք է երկրորդ անգամ ևս կրկնվի, և հայերը վերստին անցյալից հիասթափության դասեր քաղեն: Չպետք է թույլ տալ, որ այս փոքր ժողովրդի ապագան քարշ գա մեծ պետությունների եսամոլական միտումների և նկրտումների ետևից: Պարոն պրեզիդենտ, փրկե՛ք Եվրոպայի պատիվը:

Ռուսական ժողովրդական կոմիսարների խորհուրդը հայերին շնորհել է ազատ ինքնորոշման իրավունք. այս ժողովրդի պատգամավորները Փարիզում հռչակեցին Հայաստանի անկախությունը[8]: Բայց այդ իրավունքը ճանաչելիս ժողովուրդները չպետք է աչքաթող անեն ստեղծված իրավիճակը: Թուրքիայի նախկին հայկական մարզերը անմարդաբնակ տարածք են դարձել, ուր նրա բնակչության երկու երրորդը այլևս երբեք չի վերադառնալու: Անուղղելի սխալ կլինի, եթե Ռուսաստանի հայկական մարզերը մեկընդմիշտ չզատվեն այդ կայսրությունից, որպեսզի Անատոլիայի և Կիլիկիայի գավառների հետ միավորվեն մեկ երկրի մեջ, որը թուրքական գերիշխանությունից ազատագրված, ելք կունենա դեպի ծով: Միայն այս դեպքում հնարավորություն կտրվի ոչ միայն ռուսական սահմանից այն կողմ գտնվող բազմաթիվ գաղթականներին վերադարձնել իրենց բնիկ հողը, այլև նորից կենդանացնելու ամայացած քաղաքներն ու շեները:

Պարո՛ն պրեզիդենտ, բավական չէ, որ Դուք միայն իմանաք այս ժողովրդի տառապանքը, այլ որ նրան մի պետություն ենք տալիս, որի տներն ավերված են, դաշտերը՝ ամայացած, քաղաքացիները՝ կոտորված: Այդ ժողովուրդն այնքան ուժասպառ է, որ սեփական ուժերով չի կարող ոտքի կանգնել: Առևտուրը խափանված է, արհեստը, արդյունագործությունը՝ պարապուրդի մատնված: Մարդկանց մեջ ոչնչացված կորովը դեռ երկար ժամանակ չի կարող վերականգնվել: Այն անբավ հարստությունները, որ այս երկրի ընչաքաղց կեղեքիչները կուտակել են տեղահանվածների թողած գանձերի հաշվին, սոսկ չնչին երաշխիք կարող են լինել:

Շատ հայեր բռնի ուժով իսլամ են ընդունել, հազարավոր մանուկներ գողացվել են, հազարներով կանանց առևանգել ու թուրք կանանց համար աղախին դարձրել: Նրանց բոլորին պետք է ազատությունը վերագտնելու երաշխիք տրվի: Բռնադատման բոլոր զոհերը, որոնք հրաշքով փրկվել են, պետք է ոտք դնեն իրենց հայրենիքը, ովքեր երկու տարի և ավելի ապրել են անապատում, իրենց կորած ինչքի դիմաց պետք է փոխհատուցում ստանան, իսկ որբերը՝ խնամք: Այն, ինչի կարոտ է այս ժողովուրդը, սերն է, որից նա այդքան երկար զրկված է եղել: Սա՛ է մեր բոլորի մեղքի ապաշխարանքը:

Պարոն պրեզիդենտ, հպարտությունն ինձ թույլ չի տալիս որևէ բան խնդրել իմ սեփական ժողովրդի համար: Ես կասկած չունեմ, որ նա իր տառապանքների լիությունից ուժ կառնի՝ անձնազոհությամբ համագործակցելու աշխարհի փրկության համար: Սակայն հայ ժողովրդի համար, որ ահավոր նվաստացվել է, իմ արյունոտված խիղճն ինձ ստիպում է միջնորդ դառնալ: Եթե այս պատերազմից հետո էլ նրան սատար չկանգնեն, նա գուցեև կործանվի առմիշտ: Մի մարդու պոռթկումով, որն իր սեփական տառապած հոգում զգացել է նրա կրած չարչարանքների ամոթը, ես բարձրացնում եմ այն թշվառների ձայնը, որոնց գանգատներին ունկնդիր էի՝ օգնելու անկարող, որոնց սոսկալի մահը ես՝ անզորս, պետք է տեսնեի: Եփրատի անապատները ծածկող նրանց ոսկորները վերստին մարմին են առնում իմ սրտում և հորդորում ինձ դիմել Ձեզ: Ես մի անգամ արդեն բախել եմ ամերիկյան ժողովրդի դուռը, երբ Մեսքենեի ու Հալեպի գաղթականների ճամբարներից տեղահանվածների աղերսագրերը 1916 թ. աշնանը հանձնեցի Կոստանդնուպոլսում Ձեր դեսպանությանը[9]: Գիտեմ, որ իմ ջանքերը զուր չեն անցել:

Ես պատասխան չեմ ակնկալում այս նամակին: Բայց եթե Դուք, պարոն պրեզիդենտ, Ձեր պետական գործունեության համար իսկապես հիմնական սկզբունք եք դարձրել նվաստացած ժողովուրդներին զորավիգ լինելու վեհ գաղափարը, ապա չպետք է անտեսեք, որ այս խոսքերից մի զորավոր ձայն է հնչում, այն միակ ձայնը, որ արտոնյալ իրավունք ունի լսելի լինելու բոլոր ժամանակներում. դա մարդկայնության ձայնն է:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1- Գերմաներենից թարգմանեց և ծանոթագրեց Ալբերտ Մուշեղյանը:

2- Ա. Մուշեղյան. Արմին Վեգների հիշատակն անարգելու փորձ. «ՎԷՄ» համահայկական հանդես, 2011, թիվ 2 (30), էջ 25-44:

3- Պողոս Նուբար Փաշա (1851-1930) – հայ ականավոր քաղաքական գործիչ, Եգիպտոսի վարչապետ Նուբար Նուբարյանի որդին: Աշխարհը այս հայ վարչապետին է պարտական Սուեզի ջրանցքը կառուցելու համար: Պողոս Նուբար Փաշան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հիմնադիրներից է և 1-ին նախագահը: Երևանում նրա միջոցներով է կառուցվել Նուբարաշեն թաղամասը՝ ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի նախագծով:

4 Հայ ժողովրդի արտաքսումը և բնաջնջումը ուլտրաազգայնական թուրքական կառավարությունը սկսեց երևելի և ազդեցիկ հայ մտավորականներից: 1915 թ. ապրիլի լույս 24-ի (հին տոմարով 11-ի) գիշերը մայրաքաղաք Կոստանդնուպոլսում անակնկալ կերպով ձերբակալվեցին շուրջ 200 հայ գրողներ, հրատարակիչներ, մանկավարժներ և այլ նշանավոր գործիչներ: Հետևյալ գիշերներին ձերբակալված ուսուցիչների թիվը հասավ 600-ի: Նրանց թվում էին մեծատաղանդ բանաստեղծներ Դանիել Վարուժանը, Ատոմ Յարջանյանը (Սիամանթո), ճանաչված բժիշկ և բանաստեղծ Ռուբեն Սևակը և շատ ուրիշներ, որոնց գրեթե բոլորին Միջագետք աքսորելով՝ ճանապարհին թուրք դահիճները դաժանագույն հնարքներով տանջամահ արեցին կամ պարզապես քարով գլուխները ջնջեցին, ինչպես թուրքական պառլամենտի պատգամավոր, գրող և իրավաբան Գրիգոր Զոհրապին: Նույն 1915 թ. հունիսի 15-ին Կ. Պոլսի հրապարակում կախաղան բարձրացրին 20 հայ քաղաքական (հնչակյան) գործիչների՝ դավադրության ամբաստանությամբ:

5- Միջագետքում, Մադեն և Ռաքքա բնակավայրերի մոտ գտնվող հայ գաղթականների մահվան ճամբարների մասին Վեգները պատմում է իր օրագրում (Աբու Հերերա, 11 հոկտեմբերի 1916 թ. - Արմին Թեոֆիլ Վեգներ, Ճանապարհ առանց տունդարձի՝ նահատակության նամակներում, գերմաներենից թարգմանեցին, առաջաբանով, ծանոթագրություններով ու լուսանկարներով հրատարակության պատրաստեցին Ռ. Վ. Մուշեղյանը և Ա. Վ. Մուշեղյանը, Եր.. 2000, էջ 66):

6- Իր օրագրում (Մեսքենե, 15 հոկտեմբերի 1916 թ.) Արմին Վեգները հիշատակում է գաղթականների հետ անապատ քշված մի քահանայի՝ Տաճատ Արսլան(յան) անունով, որի մասին և ակնարկում է Վուդրո Վիլսոնին հղած բաց նամակում. «Երբ իրիկնանում է, քահանա տեր Տաճատ Արսլանի հետ նստում եմ նրա վրանի բաց դռանը, և նրանք ինձ պատմում են իրենց կրած տառապանքների, քաղաքի 800 ընտանիքների մասին, որոնց հետ ճանապարհ ընկան, այն բազմահազար մարդկանց մասին, որ նա թաղել էր անապատում, նրանց թվում՝ քսաներեք քահանա և մի եպիսկոպոս: Նրանց հայացքները ճչում էին վրաս. «Դու ինքդ գերմանացի ես, և թուրքերին դաշնակից... ուրեմն ճիշտ է, որ դուք էլ էիք այդ ուզում»: Ես խոնարհում եմ աչքերս: Ինչ կարող եմ պատասխանել նրանց կասկածը փարատելու համար: Քահանան փարաջայի գրպանից հանում է հնամաշ լաթի մեջ փաթաթած Քրիստոսի խաչը և երբ երկյուղածությամբ ծածկում է այն համբույրներով ես հուզմունքով համակված, նույնպես չեմ կարողանում ինձ զսպել և չպել շուրթերիս այդ խաչը, որ վկա է եղել մարդկային այսչափ վշտի ու տառապանքի» (Արմին Թեոֆիլ Վեգներ, Ճանապարհ առանց տունդարձի, էջ 67-68):

7 Մի քանի տող ներքև Արմին Վեգները բնորոշում է «թուրքական հոգեբանությունը», բառացի՝ «հոգետեսակը» (die türkische Seelenart): Նրա խոսքով՝ այդ հոգետեսակը չընդունեց նույնիսկ Թուրքիայի դաշնակից Գերմանիան, ուստի չկարողացավ կանխատեսել մի ամբողջ ժողովրդի վերահաս տեղահանությունն ու սպանդը:

8- 1919 թ. հունվարին Փարիզում գումարվեց միջազգային կոնֆերանս, որին մասնակցում էին Վուդրո Վիլսոնը, Լլոյդ Ջորջը, Ժորժ Կլեմանսոն, Վիտտորիո Օռլանդոն և շատ ուրիշ պատգամավորներ մեծ և փոքր պետություններից: Միացյալ Հայաստանի անունից այդ կոնֆերանսին մասնակցում էին պատգամավորներ Նուբար փաշան և Ավետիս Ահարոնյանը: Կոնֆերանսի առաջին ակտերից մեկում, դատապարտելով թուրքերի կողմից ենթակա ժողովուրդների բիրտ կառավարումը և հայերի ու մյուս ժողովուրդների սարսափելի կոտորածը, դաշնակից և միավորված պետությունները համաձայնեցին Թուրքական կայսրությունից անջատել և անկախ ճանաչել Հայաստանը, Սիրիան, Միջագետքը, Պաղեստինը և Արաբիան: Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Լլոյդ Ջորջը հայտարարեց, թե Հայաստանը, որ ներծծված է անմեղների արյամբ, երբեք չի վերադարձվի թուրքական խայտառակ բռնապետությանը: Փետրվարի 26-ին հայ պատգամավորները դաշնակիցների Գերագույն խորհրդին հուշագիր ներկայացրին Հայաստանի անկախ պետության սահմանների մասին, որոնք պետք է ձգվեին Անդրկովկասից և Սև ծովից մինչև Կիլիկիա և Միջերկրական ծով: «Հայկական այդ պահանջատիրությունը,- ինչպես նշում է պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը,- համենայնդեպս դեպս համահունչ էր Անգլիայի և Ամերիկայի միջև տարվող գաղտնի բանակցություններում առաջարկված նախագծերին» (The Armenian People from Ancient to Modern Times. Edited by Richard Hovhannisian. T.II, New York, 1997, p. 319, 320): Սակայն ուշադրություն եմ հրավիրում այն փաստի վրա, որ դրանից մեկ ամիս առաջ Հայոց մեծ եղեռնի ականատես իրավագիտության դոկտոր Արմին Վեգները, իր զորակցությունն արտահայտելով փարիզյան վեհաժողովում անկախ Հայաստանի հռչակմանը, սույն բաց նամակով պրեզիդենտ Վիլսոնին է ներկայացնում իր տեսակետը, որ անկախ Հայաստանը պետք է ընդգրկի ռուսահայ մարզերից մինչև Անատոլիայի և Կիլիկիայի գավառները: Այսպիսով, փաստորեն, Վեգներն առաջինն է իր նպաստը բերել անկախ և միացյալ Հայաստանի սահմանների մասին Սևրի դաշնագրի ընդունած որոշմանը (1920 թ. օգոստոսի 10):

9- Այս մասին Արմին Վեգներն իր օրագրում հետևյալն է պատմում (Հալեպ, 19 հոկտեմբերի 1916 թ.). «Վերջին օրերս բազմաթիվ լուսանկարներ եմ արել: Ինձ պատմում են, թե Ջեմալ փաշան՝ Սիրիայի դահիճը, մահվան սպառնալիքով արգելել է գաղթականների ճամբարներում լուսանկարելը: Սոսկումի և մեղադրանքի այդ պատկերները ես փաթեթած թաքցրել եմ փորկալիս տակ: Մեսքենեի և Հալեպի ճամբարներում հավաքեցի բազմաթիվ աղերսագրեր, որ պահել եմ ուսապարկիս մեջ, որպեսզի հասցնեմ Կոստանդնուպոլսի ամերիկյան դեսպանատուն, քանի որ փոստով անհնար էր դրանք առաքել: Ես վայրկյան անգամ չեմ կասկածում, որ սրանով խիստ դավաճանական քայլ եմ կատարում, բայց և այնպես այդ թշվառներին գեթ փոքր-ինչ օգնած լինելուս գիտակցությունը համակում է ինձ ավելի մեծ երջանկության զգացումով, քան որևէ այլ բան» (Արմին Թեոֆիլ Վեգներ, Ճանապարհ առանց տունդարձի, էջ 73):

1918 թ. Ուրմիայի հերոսամարտի դերն ու նշանակությունը Մայիսեան ճակատամարտերի յաղթական աւարտի գործում...

Դերենիկ Կարոյի Մելիքեան
Թեհրանի «Ալիք» օրաթերթի գլխաւոր խմբագիր, պատմական գիտութիւնների թեկնածու

Ատրպատականի հայութիւնը և հայ ազատագրական պայքարը

Պարսկաստանը՝ միջնաբերդ հայ ազատագրական պայքարի

19-րդ դարի 80-ական թւականները հայոց պատմութեան մեջ բնութագրելի են որպէս նախակուսակցական պայքարի տասնամեակ: Նախակուսակցական պայքար ասելով հասկանում ենք այն ոգորումները, որոնցով *«.... նոր ու գերադրական աստիճանի բարձրացաւ հայ ազատագրական, համազգային շարժման գաղափարաբանութիւնը»*[1]: *«Հայ ժողովրդի ազատագրական պայքարը կազմակերպելու և գլխաւորելու նպատակով 1870-1880-ական թթ. ինչպէս արևելահայերի, այնպէս էլ արևմտահայերի մէջ ստեղծւում են գաղտնի խմբակներ»*[2], որոնց նախատիպերը դարձան մի շարք հայրենասիրական խմբակցութիւններ և միութիւններ[3]:

Պարսիկ փորձագէտ Ռեզա Դեհղանին, կարևորելով «Միութիւն ի փրկութիւն» խմբակցութեան հիմնադրման վայրը՝ Վան քաղաքը, երեք գործօն է շեշտադրում. *«Նախ՝ Խրիմեան Հայրիկի և Գարեգին Սրուանձտեանցի ջանքերով «Արծւի Վասպուրական» թերթի հրատարակումը Վանում, երկրորդ՝ նոյն այդ քաղաքի աշխարհագրական դիրքը, որով այն սահմանակից էր դառնում Ռուսաստանին և Իրանին, ինչպէս և նոյն երկրներից նիւթական և զինական օժանդակութիւն ստանալու հարցը, և երրորդ՝ Վանի վիլայէթում հայութեան՝ մեծամասնութիւն լինելը»*[4]:

Վերը նշուած միութիւններին որպէս «օրգանական շարունակութիւն հետևեցին և շոնդալով հրապարակ իջան քաղաքական կուսակցութիւնները»[5]: Մինչ այդ, սակայն, հայ յեղափոխութիւնը, անցնելով պարտիզանական, ահաբեկչական, մարտական և քաղաքական տարբեր փուլերով, վերածւել էր ազգային-ազատագրական պայքարի[6]:

Պարսիկ պատմաբան Թուրաջ Խոսրաւիի կարծիքով՝ հայ ազատագրական պայքարի նպատակը թէ՛ Ռուսաստանի և թէ՛ օսմանցիների լծից ազատուելն էր, և, «.... Հաշուի առնելով, որ տեսել ժամանակաշրջանում օսմանեան լուծը թօթափելը կայսրութեան տկարութեան բերումով աւելի իրատեսական էր, ազատագրական պայքարը կենտրոնանում էր Արևմտեան Հայաստանում»[7]:

«Հայ ազատագրական շարժումը,- գրում է Միքայէլ Վարանդեանը,-ծնունդն է երկու տեսակ հոլովոյթի, երկու շարք ազդակներու.-

1. Իրերու հոլովոյթ (էսօլիւսիոն).

2. Գաղափարներու հոլովոյթ:

Մէկը միւսին անհրաժեշտ լրացուցիչն է:

Իրերը, կամ ըսենք՝ իրականութիւնը, ժողովրդի մը առօրեայ կեանքը բռնատիրական լուծին տակ կարող է լինել ծանր, տանջալի, անհանդուրժելի, բայց այդ ժողովուրդը չի յուզւիր, չի փոթորկւիր, երբ չկայ տակաւին *Այժ-գաղափարը, որը կուգայ անոր մերաւորականութեան* թեներուն վրայ որպէս թարգման, անդրադարձում նոյն դժնդակ իրականութեան, կուգայ որպէս պատմութիւն, գրականութիւն, քարոզչութիւն՝ առաջնորդելու զանգւածները դէպի լոյս ու ազատութիւն»[8]:

Հայ ազգային կուսակցութիւնները սկիզբ են առել կեանքի հարկադրական պահանջների բերումով, տառապող և ստրկական պայմաններում ապրող հայ ժողովրդի մարդկային և ազգային տարրական իրաւունքներն ապահովելու համար[9], որոնք հասարակա-քաղաքական զարգացման տարբեր փուլեր են անցել թէ՛ արևմտահայութեան, թէ՛ արևելահայութեան և թէ՛ այդ երկուսի սահմանադուռը հանդիսացող Պարսկաստանի ու մասնաւորապէս Ատրպատականի հայութեան կեանքում:

Պարսկաստանի ռազմավարական նշանակութիւնը գրեթէ հաւասարապէս խնդրոյ առնցքային առարկայ է եղել հայ ազգային կուսակցութիւնների *(Արմենական, Ս. Դ. Հնչակեան և Հ. Յ. Դաշնակցութիւն)*՝ ազատագրական պայքարի ծրագրային, մարտավարական ու նպատակային դրոյթներում: Դա հիմնականում վերաբերւում էր Պարսկաստանի՝ որպէս տարանցիկ, համեմատաբար առաւել ազատօրէն դեպի արևմտահայաստանի շրջաններ մուտք գործելու, զէնք ու զինամթերք, ինչպէսև գրականութիւն, թերթեր ու մարդուժ տեղափոխելու երկիր, քան կարող էր լինել անմիջական ռուս-թուրքական սահմանանցմամբ, որը յաճախ աւարտում էր ի վնաս հայկական զինատար-մարտական խմբերի: Եւ իզուր չէ, որ երեք կուսակցութիւնների հիմնադրման հէնց սկզբնական քայլերում պարսկական վերոգրեալ գործօնը եղել է օրակարգային խնդիր:

19-րդ դարավերջին Պարսկաստանի Ատրպատական նահանգի հասարակա-քաղաքական համեմատաբար բարենպաստ պայմանները և առհասարակ աշխարհագրական դիրքը ստեղծում էին դրական ենթահող՝ հայ ազգային-ազատագրական պայքարի համար:

Հայ ազատագրական շարժումն իր անմիջական արձագանքն է ունեցել Պարսկաստանի Ատրպատականի շրջանում, մասնաւորապէս՝ Դաւրէժում, Հեր և Զարևանդ գաւառներում, որոնք *«նախադռոն ու խարիսխն»* էին դէպի Երկիր՝ Թուրքահայաստան տանող ճանապարհների:

Իրանի հիւսիսարևմտեան շրջանների վերոնշեալ քաղաքներում բնակւում էին մեծ թւով հայեր: Յատկանշելի է, որ *«այդ քաղաքները աշխարհագրական առումով մօտ և նպատակայարմար էին Արևմտեան Հայաստանի հետ կապ հաստատելու տեսանկիւնից»*[10]:

19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին թէ՛ Հնչակեան և թէ՛ Դաշնակցութիւն կուսակցութիւնները, կազմաւորելով փոքր խմբակներ ու կազմակերպելով դրանց զինավարժական աշխատանքները Թաւրիզում, Սալմաստում ու Խոյում, ենթահող էին պատրաստում օսմանական սահմանն անցնելու համար[11]:

Թաւրիզը, Սալմաստն ու Խոյն այն կամուրջներն էին, որոնցով անցնում էին *«առաջին առաքեալները»*՝ դէպի Երկիր մեկնելու համար: Յատկապէս Սալմաստում էր, որ վարժւում ու մարզւում էին յեղափոխական մարտիկները, կազմաւորւում զինատար և մարտական խմբերը՝ Երկիր մեկնելու համար: Յեղափոխական շարժման, կազմակերպած պայքարի հետագայ տարիներին է, որ սկսում են կարևոր նշանակութիւն ստանալ նաև Խոյը *(Աւարայր)*, Ս. Թադէոսի վանքը (Մենաւոր), Ուրմիան (Կապուտան) և Ղարադաղը (Փայտակարան):

«.... Եթէ կայ երկիր մը, -գրում է Ռուբէն Տէր-Մինասեանը, - որ ջերմապէս կը բաղձար հայ ժողովուրդի ազատագրման, Պարսկաստանն է այդ: Այնտեղ էր, որ անարգել կը պատսպարուէին հայ ազատագրութեան միտքն ու ոյժը» :

Սալմաստը՝ իբրև ծննդավայրը հայ ազատագրութեան փոթորկաշունչ մարգարէի՝ Ռաֆֆիի, և Վան-Վասպուրականը՝ իբրև ծննդավայրը և գործունէութեան վայրը Խրիմեանի, աշխարհագրօրէն հարևան և միմեանց կապած վայրեր էին: Դեռևս Դաշնակցութիւնից առաջ արմենականներն էին գործում այդ վայրերում, և Վանն ու Սալմաստը իրար հետ սերտօրէն կապած էին:

Պարսկաստանը հայ ազգային-ազատագրական պայքարի *«խարիսխը» համարելով Մ. Վարանդեանն ընդգծել է.«Պարսկաստանը դռռ Վասպուրականի: Իտալացի յեղափոխականները ունէին Ֆրանսիան, իբրև ապաստան, մակեդոնացիք՝ Բուլղարիան, լեհերը՝ Գալիցիան, հայ յեղափոխականները ունեցան Պարսկաստանը – աւա՜ղ, ոչ այնքան ազատ կայան,*

Հայ ֆիդայիներ

ինչպէս Ֆրանսիան և Բուլղարիան իտալացիներու և մակեդոնացիներու համար:

Այնուամենայնիւ,- շարունակում է Վարանդեանը,- խոշոր չափով մը, Շահերու երկիրը ապաստարանի ու մարզարանի դեր խաղացած է հայ յեղափոխականներու համար ամբողջ տասնեակ տարիներու ընթացքին, և մեր բիւրաւոր խոչընդոտներուն ու ցաւերուն մէջ այդ հանգամանքը հազւագիւտ սփոփանքներէն մէկն էր, անշուշտ:

Քիչ-շատ ապահով կայան մըն էր, որ կարելի էր նիւրիլ նախապատրաստական երկար աշխատանքներու, այլև յեղափոխական քարոզչութիւնը մղելու, խումբեր կազմակերպելու, զէնքեր շինելու և դէպի Երկիր փոխադրելու: Եղեր են, անշուշտ, վայրկեաններ, երբ Պարսից կառավարութիւնը ևս Եըլդրզի տէրերու դրդումով, անոնց հաճելի լինելու համար անողոք կերպով հալածեր է մեր ընկերները - մասնաւորապէս Խանասորի արշաւանքէն յետոյ – երբեմն նոյնիսկ վատթարագոյն պաշտօնեաները բարբարոսաբար կոտորել են մերիները (Մահլամի դէպքը)[12]: Սակայն, ընդհանուր առմամբ, Պարսից իշխանութիւնները բարեացակամութեամբ աչք են գոցեր մեր խումբերու երթևեկին և մեր երկարատև դաւադրական գործունէութեան վրայ՝ ընդդէմ օսմանեան բռնակալութեան»[13]: Կամ՝ պարսից կառավարութիւնը ցարական կառավարութեանը հաճոյանալու համար ևս քայլերի է դիմել, զորօրինակ՝ 1906 թւականի յունիս-յուլիս ամիսներին ենթարկելով ցարի ներկայացուցիչների պահանջին՝ արգելել է ՀՅ Դաշնակցութեան օրգան «Դրօշակ»-ի մուտքը Պարսկաստան: Եւ ինչպէս «Դրօշակ»-ն է նշում իր 1906 թ. յուլիսի համարում. «.... Կամենալով հաճելի լինել Թեհրանի Ռուսաց դեսպանութեան՝ Պարսից իշխանութիւնը հրամայում է բռնել և այրել «Դրօշակ»-ը և «Դրօշակ»-ի խմբագրութեան բոլոր հրատարակութիւնները...»:

Պարսից կառավարութեան բարեացակամ վերաբերմունքի ևս մէկ փաստ.«Վերջերս,- գրել է ՀՅԴ օրգան «Դրօշակ»-ը,- *տարածուած լուրերը Պարսկաստանի մէջ հայոց կրած նեղութիւններու մասին չափազանցուած են: Սալմաստը քիւրդերու կողմէն ոչ մի հալածանք չկրեց: Պատմուած խստութիւնները կառավարութեան կողմէն չէր,*

Սուրբ Թադեի վանքը

այլ մասնաւոր պաշտօնեաներու, ինչպէս այնտեղի գաւառապետը, որ բաւական կաշառք էր կերած: Բայց քիչ եւոք Ատրպատականի ընդհանուր նահանգապետը Թաւրիզ բերել տուաւ զինքը և, կաշառք առած դրամները խլելով անկէ, Սալմաստի հայերուն եւոր տուաւ, ու դեռ խիստ պատժի ալ ենթարկեց: Իսկ Խոյի մօտ քիւրդերը յարձակեցան միայն Վառ գիւղի վրայ, անխտիր կոտորելով թէ՛ պարսիկ և թէ՛ հայ:

Վերջին ատեններս Պարսից կառավարութիւնն սկսաւ աւելի հաշտ աչքով նայել հայոց վրայ, և ատոր իբրև ապացոյց կրնայ համարուիլ Շահի վերջին հեռագիրը՝ ուղղուած Ատրպատականի նահանգապետին: Հեռագրին իմաստը մօտաւորապէս այսպէս էր.

«Վերջին դէպքերու առթիւ Թուրքիոյ ըրած պահանջները պարզ ցոյց տուին, որ թուրք կառավարութիւնը կը ձգտի նոյն դրութիւնն ստեղծել Պարսկաստանի մէջ հայոց համար, ինչ որ Թուրքիոյ մէջ: Ուստի կը հրամայեմ, որ ամէն կերպով պաշտպանէք հայերը ու խիստ պատժի ենթարկէք Սալմաստի գաւառապետը, որու յիմարութեան շնորհիւ այնտեղի հայերը վերջերս շատ վշտացած են» »[14]:

Պարսիկ պատմաբան դոկտ. Մուհամմեդ Ամին Ռիահին, այս դեպքերի կապակցութեամբ վկայակոչելով պարսկերէն հանրագիտարանը, գրում է. «1895 թւականին Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի կառավարութիւնների հրահրմամբ հայերի յեղափոխական ապստամբութիւններին որպէս հակահարուած օսմանեան պետութիւնը քիւրդերի միջոցով վայրագ կոտորածներ կազմակերպեց հայերի դէմ, որոնց հետևանքով 200.000 հայեր Թուրքիայի ասիական հատուածում և յաջորդ տարի 7.000 հայեր Կոստանդնուպոլսում սպանուեցին»: Նա ապա շարունակում է, որ հայերի դէմ քրդական հալածանքները տարածուել են Իրանի հողում ևս: Մատնանշելով Խոյի հեռագրատան հաղորդումները՝ պարսիկ պատմաբանն աւելացնում է.«Օսմանեան քրդերը հայերին կոտորելու նպատակով յարձակուում են Կոթուրի մօտակայքում գտնուող հայկական գիւղերի վրայ, սակայն Կոթուրի գաւառապետ Ռահիմ խանը, հայ գիւղաբնակներին պաշտպան հանդիսանալով, նրանց տեղափոխեց Կոթուր: Միւս կողմից Խոյի իշխանութիւնը 50 հեծեալ է ուղարկում ի պաշտպանութիւն Կոթուրի, և երբ քրդերը որոշել էին մի հայ քահանայի և նրան ուղեկցող հայերին առևանգել, նոյն Ռահիմ խանի զինեալները, նրանց պաշտպանելով, դէպի Խոյ են տեղափոխում: Նոյն օրերին լուր է ստացուում, թէ քրդերն ուզում են յարձակուել հայկական Վառ գիւղի վրայ: Չնայած նրան, որ պարսիկ հրամանատարներ Հէյդար խանն ու Նոռուզ խանը մի խումբ զինեալների հետ ի պաշտպանութիւն հայերի շարժուեցին դէպի Վառ գիւղ, բայցևայնպէս այդ շրջանում մեծ թով հայեր կոտորածի ենթարկուեցին»[15]:

Ռուս կոզակների ջոկատի հրամանատար Կազակովսկու 1897 թ. հոկտեմբերի 2-ի յուշագրութիւնները մէջբերելով՝ Մ. Ա. Ռիահին վկայում է հայ յեղափոխականների նկատմամբ պարսիկ իշխանաւորների դրական կեցուածքի մասին, որոնց յարձակման արդիւնքում սպանուել էին շուրջ 300 քուրդ բարբարոսներ: Իսկ վերջիններիս աշիրեթապետերի՝ հայ զինեալներին պատժելու բազմաթիւ դիմումները մերժում են պարսիկ թագաժառանգի (Խոյի, Սալմաստի և Ուրմիոյ գաւառների պետ) կողմից: Ըստ Կազակովսկու՝ այդ մերժման պատճառով է, որ քուրդ հրոսակները վրէժխնդիր են լինում հայկական Վառի գիւղացիներից[16]:

Հայ յեղափոխական շարժումների առաջին իսկ օրերից Ատրպատականի Սալմաստ գաւառը (Մինարէթ) կարևոր կայան է եղել*, այնտեղ գործունէութիւն են ծաւալել արմենական Գոլոշեանն ու Ագրիպասեանը: Միաժամանակ ստեղծուեցին նաև զինատար խմբերը: Առաջին խումբը Սալմաստում ձևաւորել է Վարդանը (Մեհրաբեան, Խանասորի Վարդան):Այդ գործով էր զբաղուում նաև Նիկոլ Դումանը, որի ստեղծած 60 հոգանոց խումբը Սարայի մերձակայքում յարձակման է ենթարկուում, և միայն Տէրոյեանին է յաջողուում մի քանի հոգով հասնել Վան: Զինատար խմբերը Երկիր էին գնում հիմնականում 3 ուղերթերով՝ Երևան– Փոքր Մասիս – Սասուն, Կարս – Խնուս և Սալմաստ –Վան:

Պատմաբան Ստեփան Պօղոսեանն իր «Հայոց Ցեղասպանութեան պատմութիւն» պատմագիտական գրքի առաջին հատորի 440-րդ էջում մէջբերում է Ֆ. Սիբիրիսկու վկայութիւնը. *«Ռուսաստանի զէնքը տեղափոխուում էր Բաքու կամ Թիֆլիս, այնտեղից՝ պարսկական Սալմաստ քաղաք, այնուհետև ... հրացանները տանում էին ուսերին գցած: 15-20 մարդուց բաղկացած խումբը վերցնում էր 20-30 հրացան, հազարաւոր փամփուշտ ... Բաֆֆու գրքերի կապոցները ... գիշերով, լեռնային կածաններով ու կիրճերով, վայրի գազանների նման թաքնուելով մարդկանց հայեացքներից, ուսներին երկուական հրացան գցած, երկուական փամփշտակալ կրծքներին, խաչաձևուած դաշոյնն ու ատրճանակը գօտիները խրած ... թափառական գայլի պէս ապաստանից ապաստան էին անցնում ... Վան հասցուած գրեթէ իւրաքանչիւր հրացան արժում էր մի կեանք»[17]:*

Ի յաւելումն հարկ է նշել նաև «Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան» գրքի վկայութիւնը.«.... Պապը Ալիի ցոյցէն և Զէյթունի ապստամբութենէն

եւրք, որոնք խանդավառած և ոգևորած էին ամբողջ հայութիւնը, Սալմասրը սկսաւ լեցիլ հայ յեղափոխականներով: Կուգային կովկասահայ և արտասահմանեան գործիչներ և մարտիկներ, հնչակեաններ և դաշնակցականներ...»[18]:

«Այրարատեանի միւս հայաբնակ գաւառ Խոյը ևս, որ կեղծ անունով Աւարայր կը կոչէր, բնական կեդրոնն էր Մակուա և Մենաւորի, միաժամանակ և առաջին կայանը՝ Կովկասէն Երկրի համար մտցուած ռազմամթերքին, որ ներս կուգար Նախավկայի ճամբով: Վերջէն, Կոմը հնարաւորութիւն ստեղծեց նաև ռուղակի Վանի հետ հաղորդակցելու Ղոթուրի վրայով: Թեթև սուրհանդակային ճանապարհ մը էր այդ, գրականութիւն մտցնելու, նոյնպէս և իրար հետ արագ հաղորդակցելու համար»[19]:

Ահա այսպէս 19-րդ դարի վերջերին Իրանում գործունէութիւն է ծաւալել Արմենական կուսակցութիւնը, որը, սակայն, լինելով արևմտահայերի ունևոր խաւի ներկայացուցիչ, թէև հետագային կայուն դիրքեր չկարողացաւ գրաւել իրանահայերի շրջանում, բայցևայնպէս, նրա բջիջները հիմնադրութեան առաջին տարիներից իսկ՝ մինչ 1890-ական թթ., երբ արդէն կազմակերպած և զօրեղ ուժ էին, գործել են Պարսկաստանի Ատրպատականի տարբեր գաւառներում և, փորձելով *«արմատաւորուել Պարսկահայքում, ուժեղ կազմակերպած մասնաճիւղեր են ստեղծել Սալմաստում, Խոյում, Հաւթանում, Ուրմիայում, Փայաջուկում և Թաւրիզում....»[20]:*

Արմենական կուսակցութիւնը թէպէտ երկարատև գործունէութիւն չծաւալեց, սակայն, լինելով առաջինը, անհրաժեշտ ենթահող ու հիմք ստեղծեց աւելի կազմակերպած և համեմատաբար աւելի երկարակեաց Հնչակեան կուսակցութեան, իսկ աւելի ուշ՝«Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» համար, որն առաջինների համեմատ աւելի երկարատև և արմատաւորած գործունէութիւն ծաւալեց Պարսկաստանում հայ ազատագրական պայքարի հոլովոյթում[21]:

Ահա և նոյն ազատագրական պայքարի միջնաբերդը լինելու ուշագրաւ ցուցանիշ կարող են համարել Ատրպատականի հայութեան խրախուսիչ և առանձնայատուկ նշանակութեամբ հերոսական գոյամարտերը, որոնք արգելակեցին թուրքական հայաջինջ քաղաքականութեան ամբողջացումը Ատրպատականում: Այդպիսին է եղել Ուրմիայի հերոսամարտը (1918 թ. գարուն): *«Այդ մասին,- ինչպէս նշում է Ա. Ամուրեանը,- դժբախտաբար քիչ բան է գրուած: Նրա կարևորութիւնը, սակայն, շատ մեծ է հետևեալ նկատառումներով.*

1. Թրքական արշաւող բանակի աջ թևի յառաջխաղացումը դանդաղում է ամիսներ շարունակ (առնուազն 5-6 ամիս), որը կատարւում էր պարսկական Այրարատեանի վրայով:

2. Այդ դանդաղեցումը հնարաւորութիւն է տալիս Արարատեան դաշտի Երևանի հայութեան ինքնապաշտպանութեան միջոցների դիմել, որը արդիւնաւորուեց Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսէի հերոսամարտերով:

3. Թիւրքը չկարողացաւ հասնել իր նպատակին՝ ջարդել գլխովին Սալմաստ-Ուրմիայի հայութեանը:

Ահա այս երեք գլխաւոր պարագաներն են, որ պատմականօրէն արժևորում են Ուրմիայի հերոսամարտը և շեշտում այն նպաստը, որ Պարսկաստանի հայութիւնը ընծայել է Հայ Դատին»[22]:

Հղումներ

1- Ղազարեան Հ., Հայ ժողովրդի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում, հ. 1 (երկրորդ վերամշակած հրատարակութիւն), Երևան, 2007 թ, էջ 503:
2- Մելքոնեան Ա., Հայոց պատմութիւն, Երևան,1998, էջ 150:
3- Դրանցից են՝ «Բարենպատակ ընկերութիւն» (Ալեքսանդրապոլ, 1869 թ.), «Միութիւն ի փրկութիւն» գաղտնի ընկերութիւն (Վասպուրական, 1872 թ.), «Հայրենիքի սիրոյ» գրասենեակ (Մեծ Ղարաքիլիսա, 1874 թ.), «Սև խաչ» (1878 թ.), «Միացեալ ընկերութիւն» (1880 թ.), «Պաշտպան հայրենեաց» (1881 թ.), «Հայ նարոդնիկական երիտասարդներ» (1882 թ.), «Հայոց յեղափոխական ընկերութիւն» (1887 թ.), մարտական «Դրօշակ» խումբ (1888 թ.), «Երիտասարդ Հայաստան» (1889 թ.) և այլն:
4- Դեհղանի Ռ., Հայերը Առաջին համաշխարհային պատերազմում, Թեհրան, 2014, էջ 140:
5- Ղազարեան Հ., նշ. աշխ., էջ 544:
6- Տէս Տասնապետեան Հ., Պատմութիւն Հայ յեղափոխական շարժման և Հայ յեղափոխական դաշնակցութեան, Բեյրութ. 2009 թ. էջ 19:
7- Խոսրաւի Թ., «Հայ գաղտնի միութիւնների հիմնադրութիւնը 19-րդ դարում», «Փէյման» պարսկ. հանդես, էջ 38:
8- Վարանդեան Մ., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Ա. հատոր, Թեհրան, 1981, էջ 27:
9- Տէս Ամուրեան Ա., Հայ Դատ. Հայ ժողովրդի ազատագրական ձիգերը, Թեհրան, 1977, էջ 62:
10- Իրանի ազգային արխիւ, թղթ. նս. 431, վաւերագիր նս. 29 600 41 51:-
11- Տէս Բերբերեան Հ., Հայերի դերը Իրանի Սահմանադրական շարժման մէջ, «Փէյման» պրսկ. հանդէս, Թեհրան, 2006, թիւ 36, էջ 12:
12- ՀՅԴ օրգան «Դրօշակ»-ը իր 30 նոյ. 1893 թւակիր համարի 96-րդ էջում՝ «Պարտքի զոհերը-ինը ընկերների նահատակումը Սալմաստում» խորագրի ներքոյ, թղթակցային ձևաչափով ներկայացրել է Մահլամի դէպքը՝ իր բոլոր դրւագներով: Ըստ «Յեղափոխական ալպում: Ազատագրական պայքարի յուշամատեան»-ի (Ե հատոր, 1964, էջ 143)՝ Մահլամի դէպքից հինգ տարի անց՝ 1898թ., «Վրէժ» Կ. կոմիտէի որոշմամբ, Լևոն Սանթոյեան-Հովակիմեանն ահաբեկեց Սալմաստի Մահլամ գիւղի մատնիչ Ստեփանին:
13- Վարանդեան Մ., Հ.Յ.Դ. Պպատմութիւն, հատոր Ա, Թեհրան, 1984, էջ 139:
14- «Դրօշակ», 1897թ., դեկտ.25, էջ 137:
15- Ռիահի Մ. Ա., Խոյի պատմութիւնը, Թեհրան, 1933 էջ 427-428:
16- Նոյն տեղում, էջ 428:
*Ըստ Մալխասի՝«Բացի այն, որ Սալմաստը իր շօշափելի հայ ազգաբնակչութեան շնորհիւ նպաստաւոր խարիսխ մըն էր գործունէութեան, ունէր և այն մեծ առաւելութիւնը, որ համեմատաբար, լեռնային կտրուկ ճամբայ մը ունէր դէպի Երկիր, պատրաստելու և թագնած մնալու յարմարութիւններով: Այս հանգամանքները եղան պատճառ, որ իրար յաջորդող կուսակցութիւնները՝ Արմենական, Հնչակեան և Դաշնակցական, հազիւ կազմաւորուած, դարձուցին իրենց գործունէութեան խարիսխը» (Մալխաս, Ապրումներ, Թեհրան, 1982, էջ 151):
17- «Նորք» հանդէս, նշել հրատ. վայրը, 1989, թիւ 12, էջ 14-15:
18- «Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան», Ա հատոր, Բէյրութ, 1962, էջ 208:
19- Մալխաս, նշ. աշխ., էջ 258:
20- Կարապետեան Ա., Արմենական կուսակցութեան կազմաւորումն ու գործունէութիւնը, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ.հրատ., Երևան 2003 թ. էջ 7-8:
21- Տէս Դեհղանի Ռ., նշ. աշխ., էջ 151:
22- Ամուրեան Ա., Ատրպատականի հայութեան վիճակը թրքական բանակների ներխուժման օրերին, էջ 21:

ՀՅ Դաշնակցութեան կազմակերպական կառոյցին առանձնահատկութիւնը

Տիգրան Ճինպաշեան

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան անդրանիկ Ընդհանուր ժողովը (Թիֆլիս, 1892) իր մշակած ծրագրին կցած է կանոնագրային բնոյթ ունեցող սեղմ բաժին մը՝ «**Կազմակերպութիւն**» խորագրով: Կուսակցութիւնը գաղափարական որոշակի տեսլական ունեցող և որոշակի գործելակերպով գործող կենդանի հաւաքականութիւն է: Անոր կանոնները կը հպատակին կազմակերպական ընդհանուր կառոյցի մը, որ իր կարգին կը բխի կուսակցութեան գաղափարաբանութենէն: Ժողովները, մարմինները և անհատները շաղկապող կանոնները ինքնանպատակ չեն. անոնք կը մշակուին ծրագրուած գործերուն միջև ներդաշնակութիւն ստեղծելու, նպատակն իրականացնելու համար:

Դաշնակցութեան կազմակերպական կառոյցը կուսակցութեան գաղափարախօսութեան, գործելակերպին, բարոյական ըմբռնումներուն, վարած քաղաքականութեան ու որդեգրած ռազմավարութեան համապատասխան պէտք է ըլլայ:

Ծրագրի բնութագրումով՝ *«Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր էութեամբ, աշխարհայեացքով և աւանդներով ազգային, ընկերվարական, ժողովրդավարական և յեղափոխական կուսակցութիւն է: Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր բոլոր ուժերով կը պայքարի հայ ազգի քաղաքական-տնտեսական, ընկերային-մշակութային բովանդակ շահերու պաշտպանութեան համար»: Իսկ ծրագրի Ընդհանուր տեսութեան եզրակացութիւնը աւելի կը յստակեցնէ՝ «Հ.Յ. Դաշնակցութիւնը, հաւատարիմ իր գաղափարաբանութեան, բոլոր ուժերով կը նուիրուի բովանդակ հայ ազգի քաղաքական, տնտեսական, ընկերային և մշակութային շահերու պաշտպանութեան, յանուն ազատ հայի, ազատ քաղաքացիի և ազատ հայրենիքի կերտման»:*

ՀՅ Դաշնակցութիւնը ազգային է: *«....ազգը՝ իբրև պատմական-մշակութային, լեզուական և ընկերային-քաղաքական ուրոյն ամբողջութիւն, հիմնական արժէք է և համամարդկային զարգացման ու հոգեմտաւոր բազմակողմանի հարստացման էական գործօն»:* Դաշնակցութեան գործը հայ ազգին կը վերաբերի: Կարևորելով հանդերձ հայ ազգը՝ Դաշնակցութիւնը կը մերժէ բացառիկութեան ամէն նկրտում:

ՀՅ Դաշնակցութիւնը ընկերվարական է: Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութիւնը Հայաստանը կը սահմանէ իբրև «սոցիալական» պետութիւն: Աշխատանքի արժևորումը, արդար հատուցման ու գնահատման անհրաժեշտութիւնը, ընկերային կարիքներու (ուսում, առողջապահութիւն, բժշկութիւն, մանուկներու և տարեցներու խնամատարութիւն և այլն) գոհացումը կը յառաջացնեն համերաշխ և բարգաւաճող հասարակութիւն: Դաշնակցութիւնը կ'ընդունի սեփականութեան տարբեր ձևերը՝ մասնաւոր, համագործակցական, պետական ու խառն: Ժողովուրդի սեփականութիւնը կը հանդիսանայ մշակոյթը, հողը և ընդերքը, բնական միջավայրը և պաշարները:

ՀՅ Դաշնակցութիւնը յեղափոխական է: Յեղափոխութիւն (ի-եղ-ա-փոխ-ութիւն) կը նշանակէ «եղածը, գոյութիւն ունեցածը փոխել»: Հայ ազգին ու հայոց

հայրենիքին վիճակը՝ ինքնիշխանութեան և ազատութեան բացակայութիւն, երկրի փոքրացում, ժողովուրդի ցրում, անընդունելի է, ուրեմն ենթակայ փոխուելու: Միջոցը փոփոխութեան կը ճշդուի համաձայն պայմաններուն և չ'ենթադրեր անպայման բռնամիջոց, սակայն կ'ենթադրէ համաժողովրդային մասնակցութիւն:

Գաղափարական այս վարդապետութիւնը կիրարկելու, գործի վերածելու համար Դաշնակցութիւնը ստեղծած է կազմակերպութիւն և մշակած համապատասխան կառոյց: Կազմակերպութիւնը գաղափարի իրագործման համար է: Ան ենթակայ է ոչ միայն գաղափարական հաւատամքի պահանջներուն, այլ նաև քաղաքական, տնտեսական ու ընկերային պայմաններու թելադրանքին, տուեալ ժամանակաշրջանի մը մէջ ծրագրուած գործի տեսակին ու ծաւալին: Ուրեմն կազմակերպական կառոյցը, պահպանելով գաղափարական հիմնական սկզբունքները, ենթակայ է փոփոխութեան, հոլովոյթի:

Իր հիմնադրութեան օրէն իսկ Դաշնակցութիւնը կոչուած էր գործելու առնուազն երեք տարբեր միջավայրերու մէջ՝ Օսմանեան կայսրութիւն, Ռուսական կայսրութիւն, Պարսկաստան: Երեք միջավայրերուն մէջ ապրող հայութեան կարգավիճակը, պահանջները, հնարաւորութիւնները կը տարբերէին իրարմէ: Կեդրոնէ մը ղեկավարուող միատեսակ աշխատանքի ոճի մը որդեգրումը անխուսափելիօրէն պիտի ստեղծէր հակասութիւններ, տարակարծութիւններ, վէճեր ու, կազմակերպութիւնը իր հիմնական գործէն շեղելով, զայն պիտի վերածէր ներքին տարակարծութիւններու թատերաբեմի: Անհրաժեշտ էր որդեգրել այնպիսի կառոյց, որ կը պահպանէր քաղաքական-գաղափարական միասնութիւնը, միաժամանակ տեղական պայմաններուն պատշաճող նախաձեռնութեան հնարաւորութիւն կ'ընձեռէր տարբեր միջավայրերու մէջ գործող միաւորներուն: Առաջին Ընդհանուր ժողովը՝ գումարուած Թիֆլիսի մէջ 1892 թ., կ'որդեգրէ ապակեդրոնացման սկզբունքը: ՀՅ Դաշնակցութիւնը, որ երկու տարուան գործունէութեան ընթացքին դադրած էր տարբեր յեղափոխական խմբակներու «դաշնակցութիւն» ըլլալէ, դարձած էր միասնական գաղափարաբանութիւն ունեցող կուռ ու միաձոյլ կազմակերպութիւն, կ'որդեգրէ աշխատանքային, գործի «դաշնակցութեան» սկզբունքը:

Ազգային-ազատագրական պայքարի կազմակերպութիւն հանդիսացող Դաշնակցութիւնը կ'որոշէ գաղափարական

խիստ կեդրոնացումով գործել՝ բոլորին համար խստօրէն պարտադիր դարձնելով Ընդհանուր ժողովի որոշումներուն անշեղ գործադրութիւնը: Ազատօրէն գործելու հնարաւորութիւնը՝ կազմակերպական ապակեդրոնացումը, կը վերաբերի տեղական միջոցներուն, հնարաւորութիւններուն: Կազմակերպական ապակեդրոնացման ու գաղափարական կեդրոնացման հանգանակը կը պայմանաւորուի բարոյական սկզբունքով: Արդարև, Ա Ընդհանուր ժողովը կը պատգամէ, որ «յեղափոխական գործի մէջ իրաւունքի և պահանջի խնդիր չի կրնար ըլլալ, այլ միմիայն բարոյական պարտաւորութեան և բաւարարութեան խնդիր»: Սիմոն Զաւարեանի յստակեցումով՝ *«Թող Ընդհանուր Ժողովը որոշէ սկզբունքներն ու տակտիկը, բայց թող իւրաքանչիւր վայրի ընտրեալ մարմինը ինքը վարէ տեղական գործերը, ինքը նախաձեռնէ և կատարէ՝ ղեկավարուելով նոյն ընդհանուր սկզբունքներէն»*:

1892 թ. Ա Ընդհանուր ժողովէն մինչև 1919 թ. Թ Ընդհանուր ժողովը կազմակերպական կառոյցի հարցը մի՛շտ եղած է օրակարգի վրայ՝ բացառութեամբ Ը Ընդհանուր ժողովին (1914), որ վաղաժամ աւարտած է Համաշխարհային պատերազմի սկսելուն պատճառով: Բոլոր Ընդհանուր ժողովներուն կատարուած են կարևոր փոփոխութիւններ՝ միշտ կառոյցը պատշաճեցնելով քաղաքական կացութեան թելադրած պահանջներուն: Այսպէս՝ Դաշնակցութիւնը գործած է երկու, նոյնիսկ երեք Բիւրոներով, որոնք թէև օժտուած էին գործադիր մարմնի իրաւասութիւններով, սակայն աւելի շատ համադրող, տեղեկութիւնները փոխանցող և նիւթական միջոցները կեդրոնացնող ու բաշխող հեղինակաւոր մարմիններ էին: Բիւրոներու ընտրութիւնը ընդհանրապէս կատարուած է Ընդհանուր ժողովի մէջ, բայց նաև երբեմն անոնց կազմը ամբողջացուած է Ռայոնական կոչուած ժողովներու մէջ, որոնք ընդարձակ շրջանի մը յատուկ մասնակի Ընդհանուր ժողովներ էին: Դաշնակցութիւնը տակաւին յառաջացուցած է Պատասխանատու մարմիններ (կամ Պատասխանատու կեդրոնական կոմիտէներ)՝ զանոնք ամբողջապէս և երբեմն մասամբ ընտրելով Ընդհանուր ժողովի կողմէ: Ընդհանուր ժողովները ընտրած են նաև ոչ տարածքային այլազան մարմիններ, ինչպէս Ցուցական մարմինը կամ Ինքնապաշտպանութեան կեդրոնական կոմիտէն: Այս բոլոր մարմիններուն մէջ յեղափոխական պայքարի ընթացքին յառաջացած բացերը լրացնելու, նոր կացութիւններու հետևանքով ծրագիրները վերանայելու համար Դաշնակցութիւնը ունեցած է «Դաշնակցութեան կամքը ներկայացնող մարմին», աւելի ուշ՝ «Դաշնակցութեան խորհուրդ»: Վերջին մարմիններուն կ՚անդամակցէին Բիւրոներու և Պատասխանատու կեդրոնական կոմիտէներու ներկայացուցիչները: Բոլոր պատշաճեցումները և փոփոխութիւնները կատարուած են Գ Ընդհանուր ժողովի ուղենշային որոշումին նկատառումով. *«Դաշնակցութեան նպատակի և կազմակերպութեան սիստեմի վերաբերեալ որևէ արմատական փոփոխութիւն չի կրնար որոշել Ընդհանուր Ժողովը, եթէ նախապէս այդ խնդիրը չէ ներկայացուած Կեդրոնական կոմիտէներուն»:*

1915-1918 թթ. դէպքերը, հայութեան տեղաշարժերը, գաղթականութիւնը փաստօրէն կազմալուծեցին Դաշնակցութեան կազմակերպական կառոյցին մաս կազմող մարմինները: Կազմակերպական քաոսին վերջ դրաւ 1919 թ. աշնան Երևանի մէջ գումարուած Թ Ընդհանուր ժողովը:

Թ Ընդհանուր ժողովը կը գումարուի իբրև պետական դարձած կուսակցութեան ժողով: Այս ժողովով ՀՅ Դաշնակցութիւնը կը նուիրագործէ պետութիւն կերտող և պետութիւն կառավարող կուսակցութեան իր նոր հանգամանքը: Այս պայմաններուն մէջ երբեմնի երկու (նոյնիսկ երեք) Բիւրոներ և քանի մը Պատասխանատու մարմիններ հաշուող Դաշնակցութիւնը կ՚որդեգրէ մէկ Բիւրոյով գործելու դրութիւնը: Բիւրոն կը դառնայ ՀՅ Դաշնակցութեան գերագոյն գործադիր մարմինը, որուն կը վերապահուի կուսակցութեան ընդհանուր քաղաքականութեան ղեկավարութիւնը: Միաժամանակ, ապակեդրոնացման սկզբունքին շեշտումով, Կեդրոնական կոմիտէները կը պահեն իրենց տրուած նախկին իրաւասութիւնները ամբողջական կերպով: Բիւրոն Հայաստանի մէջ կուսակցութեան քաղաքական գործունէութեան վարիչն է, սակայն պարտաւոր է խորհրդակցիլ թէ՛ Կեդրոնական կոմիտէներուն և թէ՛ խորհրդարանի Դաշնակցական ֆրակցիային հետ: Ընդհանուր ժողովի կողմէ չնախատեսուած հարցերու քննութեան համար բոլորին մասնակցութեամբ կը գումարուի խորհրդաժողով մը, որ նորութիւն է Դաշնակցութեան կառոյցին մէջ: Խորհրդաժողովը կը գումարուի Բիւրոյի անդամներու երկու երրորդի կամ առնուազն երեք Կեդրոնական կոմիտէներու պահանջով: Խորհրդաժողովի որոշումները պարտադիր են Բիւրոյին և բոլոր մարմիններուն համար:

Թ Ընդհանուր ժողովին որդեգրուած կառոյցը կը համապատասխանէ պետութեան վարչական բաժանումներուն. գիւղական և թաղային ժողովներ, գաւառակային ժողով, գաւառային և քաղաքային ժողովներ, շրջանային ժողով և ժողովներէն բխած համապատասխան մարմիններ: Ռայոնական ժողով կը կոչուի իւրաքանչիւր պետութեան սահմաններուն մէջ գտնուող Կեդրոնական կոմիտէներու և Շրջանային ժողովներու ներկայացուցիչներու ընդհանուր ժողովը:

1920 թուականի մայիսէն սկսեալ դէպքերը արգելք եղան այս կառոյցին գործադրութեան: Հայաստանի խորհրդայնացումէն ետք նախատեսուած կառոյցը դարձաւ ժամանակավրէպ: ՀՅ Դաշնակցութիւնը հարկադրուեցաւ վերակազմաւորուիլ արտասահմանի մէջ, ուր նորանոր գաղութներ կը կազմաւորուէին: Նոր կազմաւորուող գաղութներու ազգային դիմագիծի պահպանման, քաղաքականացման անհրաժեշտութիւնը մղեց Ժ Ընդհանուր ժողովը (Փարիզ, 1924) յառաջացնելու այժմու կառոյցին մօտիկ համակարգ մը, որ մինչև 1997-ի ԻԷ արտակարգ Ընդհանուր ժողովը մասնակի փոփոխութիւններով կարելի դարձուց Դաշնակցութեան աշխարհասփիւռ կազմակերպութեան գոյատևումը և գործունէութիւնը:

Հայաստանի համար Թ Ընդհանուր ժողովը յառաջացուց Պատասխանատու մարմին մը, որ պահպանեց հայաստանեան կառոյցը մինչև ԺԲ Ընդհանուր ժողովը (փետրուար-մարտ, 1933, Փարիզ), որուն, առաջին անգամ ըլլալով, Հայաստանի կազմակերպութիւնը չէր մասնակցէր: Այս ժողովը Երկրի հին կազմակերպութիւնները լուծարուած յայտարարեց:

1990-ի յուլիսին՝ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակումէն տարի մը առաջ, ՀՅ Դաշնակցութիւնը պաշտօնապէս բացայայտեց իր կազմակերպական ներկայութիւնը Հայաստանի մէջ: Հայաստանեան երիտասարդ կազմակերպութիւնը կազմաւորուեցաւ շնորհիւ առժամեայ ներքին կանոնագիրներու՝ միշտ նկատի ունենալով

կազմակերպական կանոններու հիմնական սկզբունքները: Հայաստանեան կազմակերպութիւնը յաջորդաբար մասնակցեցաւ ԻԵ և ԻԶ Ընդհանուր ժողովներուն՝ իբրև Կեդրոնական կոմիտէութիւն: Շարքերու ուռճացման իբրև արդիւնք և նկատի ունենալով Հայաստանի դաշնակցական կազմակերպութեան իւրայատուկ պայմանները, որոնք մասամբ կը յիշեցնեն 1918-1920-ի դրութիւնը, ԻԶ Ընդհանուր ժողովը որոշեց Դաշնակցութեան ծրագրին և կառոյցին նուիրուած արտակարգ Ընդհանուր ժողով մը գումարել, որ տեղի ունեցաւ 1997-ին Պէյրութի մէջ: ԺԷ արտակարգ Ընդհանուր ժողովը, փոքր սրբագրումներ կատարելով արտասահմանեան շրջաններու կանոնագրային տրամադրութիւններուն մէջ, յառաջացուց Հայաստանի Հանրապետութեան յատուկ կառոյց մը: Այսպէս, համաձայն Հայաստանի վարչական բաժանումներուն, կը յառաջանան կոմիտէութիւններ, մարզային կոմիտէութիւններ, Երևանի քաղաքային կոմիտէութիւն, Հայաստանի կազմակերպութիւն: Համապատասխանաբար կը հետևին խումբի ժողովը, կոմիտէութեան կամ Առանձնակի խումբի ժողովը, Մարզային ժողովը կամ Երևանի քաղաքային ժողովը և Գերագոյն ժողովը: Իւրաքանչիւր ժողովէն կը բխի մարմին մը (բացի խումբէն): Նոր կանոնագիրը կը հաստատէ, որ *«Հայաստանի Հանրապետութեան քաղաքական կեանքին մէջ ՀՅԴ քաղաքականութիւնը կը ներկայացնէ և կը գործադրէ Հայաստանի Գերագոյն Մարմինը: ՀՅԴ Ընդհանուր ժողովի կողմէ որոշուած ռազմավարութեան և Հայաստանի արտաքին քաղաքականութեան առնչուող հարցերու պարագային Հայաստանի Գերագոյն Մարմինն ու ՀՅԴ Բիւրոն կը գործեն համախոհորդ: Այս ծիրին մէջ վերջին որոշումը կը պատկանի ՀՅԴ Բիւրոյին»:* Միւս կողմէ՝ Բիւրոն պարտաւոր է տարին անգամ մը գումարելու *«ՀՅԴ Բիւրոյի ու շրջանային մարմիններու ներկայացուցիչներու խորհրդակցական ժողով»:* Այդ ժողովը, լսելէ ետք Բիւրոյի տարեկան տեղեկագիրը, նոր պայմաններէ ու կացութիւններէ բխող ՀՅԴ ռազմավարութեան և ընդհանուր քաղաքականութեան պատշաճեցումներ և յարմարեցումներ կ'առաջարկէ: Որոշման իրաւունքը կը պատկանի Բիւրոյին:

Շուրջ քառորդ դար կիրարկուած է արտասահմանեան շրջաններու համար նախատեսուած կառոյցին վրայ հայաստանեան կազմակերպութեան պատուաստումով ստացուած ՀՅ Դաշնակցութեան համահայկական կառոյցը: Արտասահմանեան շրջաններէն ոմանք այս դասաւորումին մէջ տեսան հայաստանեան երիտասարդ ու բնականաբար քիչ փորձառու կազմակերպութեան տրուած անհամաչափ իրաւասութիւններ: Փոփոխութեան փորձեր եղան, սակայն պէտք է խոստովանիլ, որ գանգատողները չյաջողեցան առաջարկել տարբեր՝ Դաշնակցութեան կազմակերպական աւանդները յարգող, գործնական և աւելի արդիւնաւետ կառոյց մը:

Ո՞րն է հարցին էութիւնը:

Ինչպէս հայութեան ստուար մեծամասնութիւնը, այնպէս ալ ՀՅ Դաշնակցութեան աշխարհասփիւռ կազմակերպութեան շրջաններուն ճնշող մեծամասնութիւնը կը գտնուի Հայաստանէն դուրս: Արտասահմանեան կազմակերպական շրջանները բնականաբար ունին տեղական գործեր, որոնք գաղութներուն համար կարևոր են ու անշրջանցելի: Կարևոր են, սակայն ոչ հիմնական: Դաշնակցական հասկացողութեամբ՝ Սփիւռքը ժամանակաւոր երևոյթ է, քանի որ ՀՅ Դաշնակցութեան նպատակը հողահաւաքի ու հայահաւաքի իրականացումն է: Ամբողջական Հայաստան՝ ամբողջական հայութեամբ: Կը հետևի, որ ՀՅ Դաշնակցութեան գործը, ուր ալ կատարուի անիկա, Հայաստանի համար է: Հայաստանէն դուրս դաշնակցականները ուժ և հեղինակութիւն կը կուտակեն՝ զանոնք ի սպաս դնելու համար Հայաստանին ու Հայ դատին: Նոյնիսկ Սփիւռքը հզօրացնելու ճիգերը նոյն մտասևեռման, նոյն առաջադրանքին կը ծառայեն:

Այս պայմաններուն նկատառումով՝ արտասահմանեան կազմակերպութիւնները կրնան միայն դիտողի դեր ստանձնել Հայաստանի մէջ կատարուածին նկատմամբ, անոր մասին ըսելիք չունենալ: Եղան դաշնակցականներ, որոնք երկու Բիւրոներու միջոցով կարծեցին հարցին լուծում գտնել: Ճիշդ է, որ արտասահմանեան դաշնակցական կազմակերպութիւններու և հայաստանեան կազմակերպութեան գործառոյթները իրարմէ տարբեր են: Առաջինները դուրսի աշխարհի տարբեր երկիրներուն մէջ, տարբեր քաղաքական վարչակարգեր ունեցող միջավայրերու մէջ Հայաստանի համար գործող գաղութային կամ համայնքային կազմակերպութիւններ են: Երկրորդը պետական կազմակերպութիւն է, Հայաստան պետութեան մէջ իսկ գործող կազմակերպութիւն: Աշխատանքի ոճն է տարբեր, ձևն է տարբեր, պարունակութիւնն է տարբեր: Միջոցը տարբեր է, բայց առաջադրանքը՝ միևնոյնը:

Ապակեդրոնացման նուիրականացած սկզբունքով՝ Հայաստանի մէջ քաղաքականութիւն կիրարկելու իրաւունքը կը պատկանի Հայաստանի Գերագոյն մարմնին, անշուշտ, Ընդհանուր ժողովի կողմէ հաստատուած ռազմավարութեան սահմաններուն մէջ: Միաժամանակ հարկ է ըմբռնումով մօտենալ Հայաստանէն դուրս գտնուողներուն շահագրգիռ հետաքրքրութեան ու գործին մասնակից դառնալու ձգտումին: Պայմանով, որ սրբութեամբ պահպանուի համայն Դաշնակցութեան գաղափարական միասնութիւնը:

Երկու (թէ բազմաթիւ) անյայտներով այս հաւասարումին լուծում գտնելու կոչուած է ՀՅ Դաշնակցութիւնը: Հաղորդակցական միջոցներու մերօրեայ դիւրութիւնները թոյլ կու տան, որ Դաշնակցութիւնը գործէ մէկ Բիւրոյի աչալուրջ հսկողութեան ներքոյ: Միաժամանակ կարելի է, օրինակի համար, պարբերաբար գումարել խորհրդաժողով մը, որ իրաւասու ըլլայ նոր կացութիւններու նկատառումով որոշումներ կայացնելու: Որոշումներ, որոնք պարտադիր ըլլան թէ՛ ՀՅԴ Բիւրոյին և թէ՛ բոլոր մարմիններուն համար: Նախընթացը կայ, թէև չգործադրուած: Թ Ընդհանուր ժողովի նախատեսած խորհրդաժողովը ունէր նման իրաւասութիւն, սակայն պիտի գումարուէր Բիւրոյի երկու երրորդին կամ առնուազն երեք Կեդրոնական կոմիտէներու պահանջով: Պայմանները այժմ տարբեր են, լուծումն ալ կրնայ տարբեր ըլլալ, պատշաճ՝ ժամանակակից պայմաններուն: Օրինակի համար՝ Թ Ընդհանուր ժողովի օրերուն արտասահմանեան մարմինները փոքրաթիւ էին (հազիւ քանի մը հատ), մինչդեռ այժմ անոնք մեծ թիւ կը կազմեն:

Կառոյցի փոփոխութիւնները կամ ստեղծուած պայմաններուն պատշաճեցումները կը վկայեն բոլոր իրավիճակներուն համապատասխան աշխատանքի պայմաններ ստեղծելու ՀՅ Դաշնակցութեան ունակութեան մասին: Միշտ հաւատարիմ գաղափարական միասնութեան, միշտ հետամուտ բարոյական սկզբունքներուն՝ գործի կուսակցութիւն հանդիսացող ՀՅ Դաշնակցութիւնը չէ կաշկանդուած կազմակերպական ամուլ մաքրակրօնութեամբ ու գիտցած է իր կազմակերպական կառոյցը յարմարեցնել գործի հրամայականներուն:

Ո՛չ ինքնապարտուողականութեան

Վրէժ-Արմէն

Ժողովուրդ մը կ'ապրի, եթէ ուզէ՛ ապրիլ:

Իսկ ան կը պարտուի, եթէ ինքզինք պարտուած զգայ, եթէ ինքզինք պարտութեան մատնէ:

Այս օրերուն, երբ, հակառակ բոլոր բացասական պայմաններուն, Ողիմպիական խաղերը դարձեալ կը կայանան, կ'արժէ վերյիշել արդի խաղերու հիմնադիր Փիեռ Տը Գուպերթենի (Pierre de Coubertin) այն խօսքը, որ 1948 թ. Լոնտոնի խաղերու մարզադաշտի մուտքին զետեղուած էր, և որ պատահաբար աչքիս զարկաւ օրաթերթի մը էջերուն մէջ. «Ողիմպիական խաղերուն մէջ կարևորը յաղթելը չէ, այլ մասնակցիլը: Կեանքին մէջ կենսականը նուաճելը չէ, այլ լաւ կռուիլը»:

Չէի կրնար անմիջապէս չտեսնել այս խօսքին իմաստութիւնը՝ առնչուած մեր իրականութեան՝ հայութեան ներկայ վիճակին, ու չմղուիլ կարդալու զայն սա ձևով. «Քաղաքակրթութեան պատմութեան մէջ կարևորը յաղթելը չէ, այլ մասնակցիլը, ժողովուրդի մը կեանքին մէջ կարևորը նուաճելը չէ, այլ լաւ կռուիլը»: Եւ չէի կրնար անմիջապէս յիշել Քրիստափորի անմահ պատգամը. «Յարատև կռիւ,– յաճախ և երկար ժամանակ, գուցէ անյաջող՝ չնայած երբեմն նոյնիսկ իր լայն ծաւալին,– ահա թէ ո՛ւր է մեր փրկութեան բանալին»:

Յարատև կռուիլ, այսինքն՝ լաւ կռուիլ, այսինքն՝ զէնքը վար չդնել, ձեռնթափ չըլլալ, չվհատի՛լ:

Այո՛, պարտուեցանք: Այո՛, լայն ծաւալ ունեցաւ մեր պարտութիւնը: Մեծ եղաւ մեր կորուստը, մեծ եղան մեր կորուստները, հողային ըլլայ թէ մարդկային, նիւթական ըլլայ թէ հոգեկան:

Մեր բազմահազարամեայ պատմութեան ընթացքին նման կորուստներ, աւելի ահաւոր, աւելի մահացու պարտութիւններ կրած ենք մենք: Վերջինը՝ 1915 թ. ծայր տուած, նոյնիսկ անկէ տասնամեակներ առաջ սկսած ու տակաւին վերջ չգտած: 2020 թ. նոյեմբերն ալ կարելի է պարզապէս շարունակութիւնը համարել Մեծ եղեռնին, գուցէ առաջին հերթին մե՛ր իսկ մեղքով: Կարելի է նաև հրաշքներու կարգին դասել Հայաստանի Հանրապետութեան հիմնումը 1918 թ., անոր վերանկախացումը 1991 թ.: Բայց ահա՛ փաստին առջևն ենք: Կռիւը չէր կրնար վերջ գտած ըլլալ: Ո՞վ գիտէ, թերևս պիտի չօրօրուէինք սի՛ն յոյսերով և պարծանքներով: Պատերազմը կը շարունակուէր մեր կոնակէն, դաւերը կը նիւթուէին մեզմէ գաղտնի:

Յարատև կռիւ...

Չմոռնանք: Ժամանակի ընթացքին կը վերականգնին կորուստները, կը վերանուաճուին հողերը, կը վերաբազմանայ ժողովուրդը: Կարևորը, սակայն, ամենէն առաջ ու ամենէն աւելի հոգեկան արիութեան վերականգնումն է: Նոյեմբերը մեզ ամենէն աւելի հարուածեց այդ տեսակէտէն:

Ասոր համա՞ր էր, որ տասնամեակներով անդուլ աշխատեցանք, պայքարեցանք, ամեն տեսակ զոհողութիւն յանձն առինք, մեր չունեցածը նուիրաբերեցինք, մեր քունը փախցուցինք, մեր հաճոյքներէն հրաժարեցանք, տուինք ու տուինք:

Ասոր համա՞ր էր, որ անսովոր կեանք մը ապրեցանք, հայ ուզեցինք ապրիլ, Դաւո հետապնդեցինք: Եկեղեցիդպրոց, ակումբ կառուցեցինք, փոքրիկ Հայաստաններ կերտեցինք տարաշխարհի մէջ, իսկ վերանկախացած Հայաստանը դարձուցինք մեր կիզակէտը:

Հիմա իրապէս որքա՞ն արագ կրնանք յուսահատիլ, հրաժարիլ մեր հետապնդած նպատակներէն, հրաժարիլ մեր հայութենէն ալ, խառնուիլ ուրիշներու, մերուիլ տեղական շրջանակներուն ու կապերը խզել հայութեան հետ: Մոռնալ ամեն ինչ:

Ահա՛ ճիշտ այդտեղ է, որ իմաստ կ'առնեն Տը Գուպերթենի թէ Քրիստափորի պատգամները:

Լա՛ւ կռուիլ: Յարատե՛ւ կռուիլ:

Եւ հիասթափելու փոխարէն ինքնաքննութիւն կատարել: Վհատելու տեղ հասկնալ, թէ ի՞նչ սխալ ըրինք, որ հոս հասանք: Փոխանակ թևերը ծալելու՝ վերլուծենք, թէ ի՞նչ պէտք է ընենք մեր մէջքը շտկելու և մեր երթը շարունակելու համար: Մանաւանդ ստորակայութեան զգացումին տեղ վճռականութիւնը ունենանք մեր՝ իբրև ժողովուրդ ապրելու անսակարկելի իրաւունքին տէր կանգնելու: Վերջապէս քաջութիւնը ունենանք ընդդիմանալու մեզ պառակտել ջանացող բոլոր փորձերուն, դուրսէն ըլլան անոնք թէ ներսէն:

Այո՛, յարատև կռիւ:

Գիտակցինք, սակայն, որ ազգի մը տարեգրութիւնը տարիներով, տասնամեակներով կամ հարիւրամեակներով չէ, որ կը գրուի: Ան կը գրուի այնքան երկար ատեն, որ ազգը կ'որոշէ չմեռնիլ: Կը վճռէ ապրի՛լ:

Ահա՛ այս տեսլականով պիտի շարունակենք մեր երթը: Մեր՝ հայութեան, մեր ազգային կառոյցներո՛ւն, մեր հաւատքի տուներո՛ւն, մեր կրթական հնոցներո՛ւն, մեր մամուլի՛ն, այլև մանաւանդ մեր ազգային կուսակցութիւններուն՝ Հ.Յ. Դաշնակցութեան և բոլոր միուններուն, որոնք կը յաւակնին տակաւին ազգային կոչուելու:

Վերջին խօսքը Քրիստափորինն է. «Պահպանենք, շարունակենք կռիւը, որպէսզի լայնանայ, ընդարձակուի և ընդարձակուելով յարատևի,– ահա դէպի մեր նպատակը տանող միակ ճանապարհը: Չշեղուենք այդ ճանապարհից, որ պատճառների և հետևանքների կապակցութեամբ ունի պատմութեան մէջ հաստատուած օրէնքի ուժ. չշեղուենք այդ միակ ճանապարհից, որ սփռուած է յուսատու ապագայի գրաւիչ ծաղիկներով»: ■

«..Դաշնակները՝ հայկական կառավարության գործակալները, ձգտում են Ղարաբաղը միացնել Հայաստանին: Ղարաբաղի բնակչության համար դա կնշանակի զրկվել Բաքվի իրենց սնուցող աղբյուրից և կապվել Էրիվանի հետ, մինչդեռ դրա հետ իրենք երբևէ կապված չեն եղել»:

Բոլշևիկյան կուսակցության Կովկասյան երկրկոմիտեի անդամ Անաստաս Միկոյանի զեկույցից՝ ուղղված Վ. Ի. Լենինին և բոլշևիկյան կուսակցության կենտկոմին, 22 մայիսի 1919 թ.

«..Գաղափարը Թուրքահայաստանի և առհասարակ «Մեծ միացյալ և անկախ Հայաստանի» մասին հանդիսանում է փնասակար, հանցագործ և հեղաղիմական քիմերիկ մի միտք, որի դեմ պետք է պայքար մղի մեր կուսակցությունը»:

Անաստաս Միկոյան՝ բոլշևիկյան կուսակցական համաժողովին ներկայացրած զեկուցումից, Մոսկվա, դեկտեմբեր, 1919 թ.

«Իմ կարծիքն այնպիսին է, որ չի կարելի անվերջ խուսանավել կողմերի միջև, պետք է սպարարել կողմերից մեկին որոշակիորեն, տվյալ դեպքում Ադրբեջանին Թուրքիայի հետ: Ես խոսել եմ Լենինի հետ, ինքը չի առարկում: Ստալին»:

Ստալինի հեռագիրն Օրջոնիկիձեին, 8 հուլիսի 1920 թ.

«...Հավատով ենք լցված դեպի պայծառ ապագան, որի գրավականն է Հայաստանի աշխատավոր տարրերի հիացական վերաբերմունքը մեր կուսակցության հանդեպ և մեր թիկունքին կանգնած Թուրքիայի և Արևելքի հզոր կարմիր բանակը»:

Հատված քեմալական զորքի կողմից Ալեքսանդրապոլի գրավումից հետո քաղաքում հայ բոլշևիկների կազմակերպած հանրահավաքի բանաձևից, 14 նոյեմբերի 1920 թ.

«...Պետք է վերջ տալ հայության հավաքման գաղափարին Հայաստանում, մի գաղափարի, որ մինչև այժմ էլ ապրում է ժողովրդական զանգվածների գիտակցության մեջ: Հողային ֆոնդի բացակայությունն է պատճառը, որ զարգանա ազգայնական ռոմանտիկան, և հայությունը ձգտի տիրանալու իր «պապենական հողերին», ինչպես նաև վառ ու կենդանի պահի «միացյալ ու անկախ Հայաստանի գաղափարը»: Ուստի ... անհրաժեշտ է նախ՝ա) վերջ դնել հայության հավաքման գաղափարին Հայաստանի մեջ և ապա՝բ) երկրի մեջ եղած 300,000 գաղթականներին ցրել լայնածավալ Ռուսաստանի մեջ»:

Արտաշես Կարինյան, Ստեփան Շահումյանի գլխավորած Բաքվի կոմունայի արդարադատության կոմիսար, 1921 թվականին՝ ՀԽՍՀ արդարադատության ժողկոմ, 1923-1924 թվականներին՝ ՀԽՍՀ Կենտգործկոմի նախագահի տեղակալ, 1924-1928 թվականներին՝ նախագահը: Հայաստանի ԽՍՀ տնտեսական տեղեկագիր, 1926 թ.

«...Թուրք-բոլշևիկեան յարաբերութիւնը սոսկ անցեալի պատմութիւն չէ, այլև այսօրուայ ու վաղուայ հրատապ հարց: Հայ ժողովրդի ու Հայաստանի ճակատագրով հետաքրքրուող ամէն անհատ պէտք է գիտենայ այդ պատմութիւնը՝ հասկանալու համար այն ամէնը, որ եկաւ Հայաստանի և հայ ժողովրդի գլխին: Պէտք է գիտենայ՝ խուսափելու համար անճիշտ դատողութիւններից, անհիմն պատրանքներից և սխալ քայլերից ապագայում»:

Սիմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետության վարչապետ, հունվար, 1941 թ.

«Անկախ հայկական պետականությունը և հայ բոլշևիկները», Եր., «Լուսակն» հրատ., 2021, շապիկի էջ 4

Հայաստանի Հանրապետության սահման

ԴՐՕՇԱԿ